

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

# Գ Ա Ն Ջ Ա Ր Ա Ն

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐՔ

ՏԱՐՐԱԿԱՆ ԳԱՍԸՆԹԱՑՔԻ ՀԱՄԱՐ

ՃՈՆԱՅԵՍԼ ԵՒ ՅԱԻԵԼԵՍԼ

Զ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Կ. ՊՈԼԻՍ

ԳՐԱՏՈՒՆ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

Չափմանը թիւ 93

1936

425.21  
Lh 72.0  
[24]  
1936

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

# Գ Ա Ն Ջ Ա Ր Ա Ն

ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԳ

ՏԱՐԱԿԱՆ ԳԱՍԸՆԹԱՅԻՔԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Զ. ՏՊԱԳՐԱԿՈՒԹՅԱՆ



Ե. ԳՈՒԼԻՍ  
ԳՐԱՏՈՒՆ Ե. ՅԱԿՈԲԵԱՆ

1936

H. G. BERBERIAN  
592 MT. AUBURN ST.  
WATERTOWN, MASS.

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ «ՍԷԼԱՄԷՔ»

ԴԱՆԻԷԼ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Կ. Պոլիս, Ֆինն, Եօզուշու, Թիւ 20

## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Տարրական դասընթացի յարմարեցում այս ընթերցանութեան դասագիրքը պատրաստուած է միջոց այն մէթոտով որով հրատարակելու միջին դասընթացի յատկացումը ԳԱՆՁԱՐԱՆԵՐ (\*):

Միշտ նոյն նկարագրի կազմութեան խոնարհ է որ մեզի առաջնորդ եղած է նաեւ այս դասագրքին պատրաստութեան մէջ, խոնարհ՝ զոր երկերորդն բացատրած ենք միջին ԳԱՆՁԱՐԱՆԻ Յառաջաբանով եւ զոր այստեղ կրկինը աւելորդ կը համարինք:

Մենք կ'ուզենք միայն բանի մը խօսք ուղղել ուսուցիչներուն, որպէս զի իրենց ջանքերն ու մեր աշխատութիւնը, ներդրանակ ուղղութեան մը մէջ մեան եւ իրականացնեն զրքին ընծայելիք բարիքը:

Դիւրացնելու համար իրենց աշխատութիւնը մենք խրատանջիւր հաստատի կցած ենք երկու տեսակ հրահանգ:

Առաջինը՝ Ընդդայնելի կէտեր՝ հաստատմին նիւթին ու բառերուն հետ ուղղակի սանչութիւն ունեցող դիւրին հարցումներու շարք մըն է, որուն աշակերտը կրնայ հեշտիւ պատասխանել, օգտուելով անշուշտ ուսուցչին օժանդակութենէն: Անոնց շնորհիւ աշակերտը չի կրնար տակ մերենակն ընթերցմամբ անցնիլ խրատանջիւր նիւթի վրայէն, այլ կ'ընտելանայ նիւթերու խմտափն եւ դիւրաւ կ'ըմբռնէ անոնցմէ բոլոր բարոյականը: Ասիկ գտտ, այլ հարցումները կը նպատակն նաեւ աշակերտին ծանօթութեանց ընդարձակման:

Երկրորդը՝ Ուսուցչին բացատրութիւնները, գործնալ հաստատմին նիւթէն բոլոր բարոյական թերաղբութիւններ են, զորս ուսուցիչը անհրաժեշտաբար պիտի ընդդայնէ՝ խրատանջիւր նիւթ բացատրելու եւ մեկնելու տօթիւ:

Ինչպէս բացատրած ենք Միջին ԳԱՆՁԱՐԱՆԻ Յառաջաբանին մէջ, ուսուցիչը պէտք չէ բաւականամայ Բարիին վրայ միայն աւելի կ'ամ նուազ որոշ գաղափար մը տարով, այլ պէտք է աշխատի որ

(\*): Այս տարրական ԳԱՆՁԱՐԱՆԻՆ անմիշտպէս կը հետեւին Միջին ԳԱՆՁԱՐԱՆԵՐ եւ Բարձրագոյն ԳԱՆՁԱՐԱՆԵՐ:

Բարին զգացումը — յանախակի կրկնումներով և բարի գործերու վարժութեամբ, — բնատրութեան փոխութի:

Աստուցիչը գլխաւորապէս պէտք է ձգտի լաւ բացատրելու, հետեւաբար ամէն անգամ որ կարելի է, հաստատուններուն մէջ գրանուող օրինակներէն դուրս ուրիշ օրինակներ մէջ բերելու է նոյն ինքն աշակերտներու կեանքէն. նոյն բանը նաեւ այդ օրինակներէն բղխելիք թելադրութեանց համար: Այս կերպով դասաւանդութիւնը աւելի կենդանի համագամներ մը կը ստանայ և դասերու նախաւոր աւելի անջնջելի կերպով կը դրոշմուի տարց մարին վրայ:

Չմոռնանք նաեւ աւելցնելու թէ բառերը մեկնամ ենք ա՛յն խնայտով որով գործածուած են հաստատմին մէջ: Սակայն այդ բառերէն կան որ ուրիշ խմատներ այ ունին և տարբեր նշանակութիւն կը ստանան տարբեր կերպով մը կամ տարբեր տեղ մը գործածուելով: Աստուցիչը երբ այդ տեսակ բառերու, — մանաւանդ փոխադարձաբար գործածուած բառերու և տառիկանց, — հանդիպի, հարկաւ տարց կը բացատրէ նաեւ սնունց միս նշանակութիւնները, որով անուղղակի բայց ապահով կերպով մը՝ տղարբ բառագիտութեան վարժեցուց սով կ'ըլլայ:

Ա. Ա.

# Գ Ա Ն Ջ Ա Բ Ա Ն

## 1. ՄԱՅՐԻԿԱ ԵՒ ՀԱՅՐԻԿԱ

Անուշիկ մայրիկս ամէնէն կանուխ կ'արթննայ մեր տան մէջ:

Եւ տակաւին քնացած կ'ըլլամ, բայց ան արթուն է, կ'աշխատի, հագուստներս կը կարկաէ ու կը մաքրէ,



նախաճաշս կը սպասրաստէ և տակաւ կարգի կը դնէ: Մայրիկս շա՛տ կը սիրէ զիս: Երբոր խելօք կը կենամ և կը հնայանայիմ իրեն, խելոյն զիս զիրկը կ'առնէ, կը համբուրէ ու կ'ըսէ.

— Հրեշտակս, իմ աղուս՝ը հրեշտակս:

Շատ անուշ է մայրիկիս համբուրը: Եւ ես միշտ  
կը հնազանդիմ մայրիկիս ու խելօք կը կենամ, որպէս  
զի գիս գիրկը ամեն ու համբուրէ:

Մայրիկս աշնքան բարի է որ երբ հիւանդ բլլամ,  
զիչկը ցերեկ անուռն կը հսկէ անկողնիս քով, ձեռքովը  
ձակասս կը չփէ որպէս զի հանդատանամ: Երբեմն ալ  
անուշ երգերով զիս կը քնայնէ:

\* \* \*

Հայրիկս ալ կանուխ կ'արթննայ, և նախաձաշը  
բնեկուն պէս կը փութայ դարձի:

Անիկա միշտ իրիկունները  
ամէնէն ոչ տան կը փերադառ-  
նայ, յոյնամ, քրանամ և զիս  
կը համբուրէ բեկով:

— Քեզի համար ամէն յոյ-  
նութիւն կը մտնամ:

Շատ անգամ, զինքը աշտպէս  
յոյնամ աեանկով, կ'ըսեմ ի-  
րեն.

— Հայրիկ, աշդշտի մի' աշ-  
խատիր, մեղք ես:

— Հոյ չէ, դաւակո, կ'ըսէ ինձի, երբոր ձերա-  
նամ, դուն ալ ինձի համար կ'աշխատախ:

Եւ դարձեալ կը համբուրէ զիս:

Շատ բարի է հայրիկս:

ԲԱՌԵՐ.— Ս.ՍԳՆԱՆՔ՝ առանց բնանալու.— Փութալ՝ աճա-  
պարել.— Փարձեալ՝ նորէն:

ԸՆԴԱՅՆՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ի՞նչ կ'ընէ մայրիկը տան մէջ.— Տը-  
դար պէ՞տք է օգնեն իրենց մայրիկին:— Ինչո՞ւ:— Հայրիկը ինչո՞ւ  
կը մտնայ իր յոգնութիւնը:— Ի՞նչ կը նշանակէ «ամառը կարգի  
դնել»:



ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Տղար պէտք է սիրեն  
իրենց ծնողքը, որովհետեւ ամէնէն աւելի անոնք զիրենք կը սիրեն  
և իրենց երջանկութեան կ'աշխատին, շատ անգամ ինքզինքնին զըր-  
կեւով, յոգնելով, չարչարուելով:— Ծնողասիրութիւնը նուիրական  
պարտք մըն է տղոց համար:— Տղար պարտաւոր են փոխարինել ի-  
րենց ծնողքներուն ոչ միայն սէրը, այլ նաեւ աշխատութիւնը, անոնց  
ձեռութեան նեցուկները դառնալով:

## 2. Հ Ա Մ Բ Ո Յ Ր Ն Ե Ր Ս

Երեք համբուրք ունիմ տալիք,  
Անուշ համով երեք պաչիկ.  
Էն խոշորն է իմ մեծ կողոր,  
Էն ուժովը իմ բարի հօր.  
Բայց էն երկարն՝ գիտէ՞ք որի...  
Ա՛ն, մայրիկի՛ն կը վիճակի:

Է. ՔԼՕՏԻՆՕ

ԲԱՌԵՐ.— Վ.ԻՆՏԱԿԻԿ՝ բաժին ինչալ:

ԸՆԴԱՅՆՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ինչո՞ւ կը սիրես կողայրդ հայրդ ու  
մայրիկդ:— Անոնք ալ թեզ կը սիրե՞ն:— Ինչո՞ւ:— Ե՞րբ չեն սիրեր:—  
Ինչո՞ւ ամէնէն երկար համբուրք մայրիկիդ պիտի տաս:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Հայրիկն ու մայրիկը  
շատ տառապանքներու, շատ նեղութեանց կ'ենթարկուին իրենց զա-  
ւակները մեծցնելու համար:— Զաւակներու բարի, լաւ ու հնազանդ  
վարմունքը միայն կրնայ մոռցնել այդ տառապանքներն ու նեղու-  
թիւնները և նոր ուժ տալ ուրիշ նեղութեանց համար:

### 3. Բ Ա Ր Ի Շ Ա Յ Ր Ը

Ա.

Մարդ մը երկու դուռակ ունէր :

Օր մը, անոնցմէ կրտսերը բառ հօրը .

— Հայր, հիմակուրնէ աւար ժառանգութեանց աշն բաժինը որ ինձի պիտի իյնայ :

Եւ հայրը, երկու դուռակներուն միջև բաժնեց իր հարստութիւնը :

Կրտսեր դուռակը իր բաժինը առաւ, երաւ օտար երկիր գնաց, և աշնտեղ վաճակեց բոլոր ունեցածը :

Ճիշդ այդ առնն սով մը ծագեցաւ իր գանձած երկրին մէջ : Խեղճ աղան անօթի մնաց և սախուրեցաւ ծառայութեան մտնել քաղաքին բնակիչներէն մէկուն քով :

Այդ մարդը զինքը խողերու պահապան կարգեց : Տղան աշնքա՛ն անօթի էր որ խողերուն առջև նետուած բանջարեղէնի կեղեւները ուտել կ'ուզէր, բայց իրեն չէին տար :

Այն առնն՝ մտածեց .

— Իմ հօրս տունը որքա՛ն ծառաներ կան որոնք առտա հաց ունին, մինչդեռ ևս անօթի կը մեռնիմ այտուեղ : Երթամ հօրս, անոր սուրը իյնամ և ներողութիւն խնդրելով աղաչեմ որ զիս իր ծառաներուն մէջ առնէ :

Եւ իրաւ ալ երաւ գնաց :

ԲԱՌԵՐ.—**Արտսեր՝** պատիկ: **Վաճակ**՝ պարագ տեղը հասցնել: **ԸՆԴԱՅՆԵԼԻ ԿՆՏԵՐ.**—Ի՞նչ է հարստութիւնը:— Ի՞նչ է ժառանգութիւնը:— Զաւակ մը միշտ կրնա՞յ հօրը ժառանգութիւնը

պահանջել:—Սովը ի՞նչ է:—Քանի՞ տեսակ բանջարեղէն տեսած էր:—Ի՞նչ ձև ու գոյն ունին:—Ի՞նչ է ծառան:—Ի՞նչպէս պէտք է վարուիլ անոնց հետ:—Ի՞նչ տեսակ կենդանի է խոզը:

ՈՒՍՈՒՅՁԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Հարստութիւն ունենալը բանի մը չի ծառայեր. պէտք է հարստութիւնը տնտեսել զիտնալ՝ որպէս զի ի զուր չվատնուի: Տղար պէտք չէ որ կանուխէն բաժնուին իրենց ծնողքէն, որովհետեւ երկար առնն պէտք պիտի ունենան անոնց փորձառութեան ու խորհուրդներուն:—Ծնողքը վշտացնել շատ զէշ զործ մըն է, բայց վշտացնելէ վերջ զըլալ և ներողութիւն խնդրելը մասամբ կը զարմանէ զայն:

### 4. Բ Ա Ր Ի Շ Ա Յ Ր Ը

(Շարունակութիւն)

Բ.

Տղան շատ խեղճ վիճակ մը ունէր երբ իր տան մտակաւ . հագուստներն ալ ամբողջովին պատուաւոր էին :

Հայրը զայն տեսաւ հետուէն, զբաց, և անոր վրը նետուելով սկսաւ համբուրել :

— Հայր, բառ աղան, ևս մեղանկեցի Աստուծոյ ու քեզի զէ՛. ևս արժանի չեմ քու դուռակը կոչուելու, զիս քու ծառաներուց մէջ ա՛ռ :

Բայց հայրը ներեց, և ծառաներուն գտնալով, բառ .

— Գացէք իր սոջի վերարկուն բերէք և զինքը հագուեցուցէք, մատանի մը անցուցէք մատր և նոր կօշիկներ սուէք :

Եւ երբ աղան հագուեցուցին, հայրը նորէն ծառաներուն գարձաւ և բառ անոնց :

— Գոցէք մորթեցէք մեր ամէնէն պարստ հորթը, ուսնը ու զուարճանանք, որովհետեւ ես զուակս մեռած կը կարծէի, բայց ահա ան սղջ է. կորսուած էր ու գտնուեցաւ:

Եւ ամէնքն ալ կերան ու զուարճացան:

**ԲԱՌԵՐ.**— Գրալ՝ մեղքնալ: — Մեղս ցչել՝ մեղք գործել: **Պարտա՞** զէր, լաւ սնած:

**ԸՆԴԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.**— Պատմութիւնը, նախորդ մասին հետ, ամբողջովին պատմեցէք:— Ե՞նչ տեսակ հագուստ է վերարկուն:— Մատանին ի՞նչ է:— Ինչո՞ւ կը գործածեն:— Ինչո՞ւ պարարտ հորթը մորթեցին:— Տղան ինչո՞ւ ինքզինքը արժանի չէր նկատեր հօրը գառակը կրչուելու:

**ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.** — Չի բաւեր ծնողներու ներդաշտութեամբ գոհանալ. անհնազանդ տղարը երբ իրենց ծնողներուն ներդութեան կ'արժանանան, պէտք է անկէ ետքը բոլորովին օրինակելի վարմունք մը ունենան, իրենց պատճառած վիշտը մոռցնելու համար:

### 5. ՃՐԱԳՆ ՈՒ ԼԱՊՏԵՐԸ

Օր մը ճրագը լապտերին կ'ըսէր.

— «Բու խորեկ՝ պղտը կ'եղլին իմ լոյսեր. Ծոյց ինչո՞ւ աչքպէս զիս բանտարկիւր ես. Բացուէ որ աշխարհ փայլի շողերէս:»

Բացուեցաւ լապտերն, հընադանց իրաւ. Զով մ'եղաւ... ճրագն իսկոյն մարեցաւ:

(Թարգ. Ա. ՓԱՆՈՍԵԱՆ)

ԼԸ ՄԱՅԻ

**ԲԱՌԵՐ.**— Խորեկ՝ մէջէդ:— **Շող՝** հասադայթ:— **Իսկոյն՝** անմիջապէս:

**ԸՆԴԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.**— Ի՞նչ տեսակ սուտրկայ է ճրագը:— Ճրագը ինչո՞ւ զուրս կլլկլ կ'ուզէր:— Ինչո՞ւ ճրագը մարեցաւ:

**ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.**— Ինչպէս որ ճրայը լապտերին պաշտպանութեան կը կարօտէր չմարելու համար, այնպէս ալ տղար իրենց ծնողքին կը կարօտին՝ չ'ոտրելու համար:



### 6. ՄԵՄ ԶԱՅՐԻԿԸ

Դուկասի մեծ հայրիկը շատ ծեր է. զրոխը կը սասանի ուսերուն վրայ, կունակը կորացած է և ձեռքերը կը զոլան:

Անիկա շատ անգամ հիւանդ կը պատկի: Անցեալ ձմեռ ալ աչքպէս հիւանդ էր և շատ ցաւապէցաւ:

Հիմակ որ դարունը եկած է, մեծ հայրիկը բաւական անողջացած է և պատահանէն կը դիակ գաշտերը որունը ծածկուած են կանանց խոտերով ու գոյնղոյն ծագիկներով:

Մեծ հայրիկը դիակ որ եթէ այդ գաշտերուն մէջ պատշա մը բնէ, շատ պիտի կազդուրուի, բայց ոյժ չունի և չի կրնար միմակը գորս կրել: Ղուկասի ծնողքն ալ չեն կրնար օգնել անոր, որովհետեւ մինչեւ իրիկունը գրադած են:

Երեզ մեծ հայրիկը ախար է: Բայց անա Ղուկաս անոր կը մտանայ, զեղը կուտայ ու կ'ըսէ.

— Բարի մեծ հայրիկս, կ'ուզե՞ս որ մէկտեղ պարտինը զեղեցիկ գաշտերուն մէջ. ես թէև տկար եմ, բայց կրնամ չեղի օգնել:

Մեծ հայրիկը ուրախութեամբ բնդունեց Ղուկասի ատաջարկը: Անունը շատ օրեր մէկտեղ կը շօջիկն աղուոր մարգագեթիկներուն մէջ: Մեծ հայրիկը այնչա՞փ գոհ է Ղուկասի վարմունքէն որ սիրուն բաներ կը պատմէ պտտած ասեմներն:

ԲՆԹԵՐ.— ՏԱՍԱՅԻԿ՝ շարունակ երերալ:— ԿԱՐԱՆԱԿ՝ ծոխլ:— ՏԱՍԱՅԻԿ՝ ցու բաշել:— ԿԱՂՂԱՐԱԿ՝ անողջանալ:— ՇՐՅԻԿ՝ պտոլլ:— ՄԱՐԳԱՂԵՏԻՔ՝ կանանց խոտերով ծածկուած գաշտ:

ԸՆԳՂԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ո՞վ է մեծ հայրիկը:— Ղուկաս ինչո՞ւ օգնեց մեծ հայրիկին:— Մեծ հայրիկը ինչո՞ւ գոհ մնաց:— Ղուկաս ի՞նչ կերպով օգտուեցաւ իր բարի վարմունքէն:

ՈՍՈՒԹՅՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԵՐԸ.— Թացատրել մեծ ծնողներուն նշանակութիւնը ասն մէջ:— Մեծ ծնողները ձեր էն, շատ անգամ հիւանդ ու անկար:— Թոռներուն պարտականութիւնն է յարգաբարձ ու զորովով վարուիլ անոնց հետ, և իրենց կրցածին չափ օգնել անոնց:



### 7. Ս Ի Ր Ա Շ Ն Ե Ր Ս

Կը սիրեմ մայրիկս անուշ, խելայի  
Որ կուտայ ինձի համբոյրներ հաղար,  
Եւ որ այնքան շուտ կը ներէ ինձի  
Ամէն անգամ որ ըլլամ քիչ մը չար:

Կը սիրեմ հայրիկս որ միշտ կ'աշխատի  
Շահելու համար մեր հացն ու պարեկն,  
Եւ որ խնջուցեմ իր մտացած՝ կը ժպտի  
Նոր բարեմիջ մը երբ ցոյց տաս՝ իրեն:

Կը սիրեմ նաև իմ բարի մեծ մայր  
Որ դիակ սիրուն հէքեաթներ առաս,  
Ինչպէս նաև իմ ագնիւ մեծ կզբայր  
Որ դասիս համար միշտ կուտայ խրատ:

ՐԱՌԵՐ.—Պարէ՛ց՝ տեսակ տեսակ ուտելիք:—Խոնջէ՛ց՝ յոգ-  
նութիւն:—Աւառ:՝ շատ:

ԸՆԴՂԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.—Ինչո՞ւ կը սիրես մայրիկդ, հայրիկդ,  
մեծ մայրդ ու կորայրդ:—Տարբերութիւն կը դնե՞ս թէ ոչ բու սի-  
րոյդ մէջ:—Ինչո՞ւ:—Հայրիկդ ինչո՞ւ կ'ուրախանայ երբոր բարենիշ  
կ'առնես դպրոցին մէջ:—Ո՛ր տղարք բարենիշ չեն առներ:—Ին-  
չո՞ւ մտիկ կ'ընես կորոյդ, երբոր դասերուդ համար խրատներ կու  
տայ քեզի:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.—Ինչո՞ք թէ եւ միշտ ներո-  
ղամիտ կ'ըլլան իրենց չար եւ անհնազանդ տղոց համար, բայց պիշտ  
կը զգան եւր տղաքը չար կամ անհնազանդ կ'ըլլան:—Պէտք չէ չա-  
բաչար զործածել ծնողներու ներողամտութիւնը:— Հնազանդութեան  
բարիքներն ու անհնազանդութեան չարիքները:— Պատկերը միշտ ի-  
րենց մեծերուն խրատները պէտք է փնտռեն ո՛չ միայն իրենց դա-  
սերուն այլ նաեւ իրենց ամէն վարժունքին համար:

### 8. Զ Ա Ր Ո Ւ Հ Ի

Մայրիկը կանուխ արթնցուցած էր Զարուհին և  
զայն կը հաղուեցնէր:

Անձրիւտս օդ մը էր:

— Մայրիկ, բաւ Զարուհի, այսօր դպրոց չեր-  
թամ, անձրիւ կուգայ:



— Անձրիւք քեզի միտս չի  
տար, աղջիկս, բաւ մայրք. քե-  
զի մեծ հովանոց մը կուտամ և  
բնաւ չես թրջիր. միայն գէշ  
տղաքն են որ դպրոց չեն երթար  
և իրենց ժամանակը պարտապ  
կ'անցընեն:

— Այստեղ կը կարդամ, մա՛յր, պատասխանեց  
Զարուհի:

— Զրկար, աղջիկս, տղաքը մինակնին չեն կրնար  
կարդալ. հապա եթէ կարդացածդ չհասկնաս՝ որո՞ւ  
պիտի հարցնես:

— Քեզի կը հարցնեմ, մա՛յր:

— Ես իմ զբաղումներս ունիմ. և արդէն շատ բա-  
ներ ես ալ չեմ հասկնար: Մինչդեռ վարժուհիդ կը  
հասկնայ ու կրնայ քեզի բացատրել՝ որպէս զի սորվիս:

— Ուրեմն վարժուհին քեզմէ աւելի բա՞ն գիտէ,  
մա՛յր:

— Անչուշտ. այդ պատճառաւ պէտք է ուշադրու-  
թեամբ մտիկ ընես անոր խօսքերը և հնազանդիս ա-  
նոր, ինչպէս ինձի կը հնազանդիս:

ԸՆԴՂԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.—Ի՞նչ կը նշանակէ պարտապ ժամանակ  
անցնել:—Տղաքը ինչո՞ւ գէշ կ'ըլլան, երբոր պարտապ ժամանակ  
կ'անցընեն:—Ո՞վ է վարժուհին:—Ի՞նչ կերպով պէտք է վարուինք  
անոր հետ:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Ինչո՞քներուն հաւասար  
պէտք է հնազանդինը դաստիարակներուն:— Դաստիարակը այն տե-  
սակ անձ մըն է որ միշտ տղոց բարիքը կը խոստէ եւ ատոր համար  
կ'աշխատի:—Պէտք է միշտ խօսուրդ հարցնել դաստիարակին, ծնող-  
ներուն հաւասար սիրել զայն, անոր հասնելի դառնալ:

### 9. ՄԵԾ ՄԱՆԶ ՄԸՆ ԵՄ

Անցած տարի ստուգապէս  
 Փոքր էի գես, բայց քանի որ  
 Կարգալ գրել գիտեմ այսօր  
 Չափահաս մեծ մանչ մըն եմ ես:

Մօբբս ծունկին վրայ, հերու՝  
 Կը տեսնէին գիւ միշտ նստած.  
 Փոքր էի գես եւ անկասկած,  
 Բայց ալ եղած եմ վեց տարու:

Հիմա կը կարգամ գիրք ու քարտէս,  
 Կը սորվիմ շատ գասեր զբժուար.  
 Պայուսակա ալ՝ ձախ ուսէս վար՝  
 Կ'ըսէ թէ մեծ մանչ մըն եմ ես:

Մըտիկ կ'ընեմ վարժապետին  
 Խօսքերն ու միտք կը սրահեմ լաւ.  
 Եւ ինչ շատ գոհ է հարկաւ  
 Որ աչքերն ինձ միշտ կը ժպտին:


(Թարգմ. Ա. ՓԱՆՈՍԵԱՆ)

Յ. ՔՕՄՕՆ

ԲԱՌԵՐ. — Ստուգապէս՝ ստուգիւ, իրաւ:— Էերու՝ անցած տարի:— Անկասկած՝ տարակոյս չկայ որ:

ԸՆԴԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ի՞նչ փոփոխութիւն կրեցիր հերուրնէ ի վեր.— Ի՞նչ կերպով:— Ի՞նչ է քարտէսը:— Ինչո՞ւ վարժապետը գոհ է ձեզմէ եւ ձեզի կը ժպտի:— Ի՞նչ կը շահիր վարժապետին խօսքը մտիկ ընելով ու լաւ միտք պահելով.

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԵՆԵՐԸ. — Տղար պէտք է աստիճանարար յառաջդիմեն ուսման ու գիտութեան ճամբուն մէջ.— Ո՛չ միայն մէկ տարիէն միւսը, այլ մէկ շաբաթէն միւսը, նոյն իսկ մէկ օրէն միւսը պէտք է աւելի կատարելագործուին թէ ուսման մէջ եւ թէ վարքով:— Յետաժապ տղաքը միշտ ամենուն արհամարհանքին արժանի են, օրձը դժբախտ պիտի ըլլան ու զղջան:



### 10. ԵՐԿՈՒ ՄՇԱԿՆԵՐ

Ա.

Յակոր ու Վարդան երկու մշակներ էին:  
 Յակոր կանոնաորապէս վարժարան գացած և բաւական բան սորված էր:  
 Իսկ Վարդան՝ կարգալ գրել չէր գիտեր:  
 Շատ անցած ծանօթներ կ'ըսէին իրեն.  
 — Վարդան, պարտալ մի՛ անցըներ այս քանկազիկ մամանակը, գնա՛ գարոց, վերջէն կը զզջաս:  
 Բայց Վարդան մտիկ չէր ըներ:  
 — Ինչո՞ւ գարոց երթամ. ես մշակ պիտի ըլլամ, հօրս թողած հողերը պիտի մշակեմ, գրքի պէտք չունիմ. գրքով ու գրով հող կը մշակուի՞:

Դանձ. Տարր.

հոյրոսին տարբեր կը մտածէր Յակոր:

— Միշտ լառ ու օգտակար է կարգալը, կ'ըսէր: Եւ նոյն իսկ գայրոցէն ելլելէն վերջն ալ անզաղար կը կարգար ի՞նչ գիրք որ գանձէր:

ԲԱՌԵՐ.—ՄԵԱԿ՝ հողագործ:—ՃԱՏՈՐ՝ ճանչուոր:—ԹԱՆԿԱԳԻՆ՝ սուղ:—ԱՆՊԱՊԱՐ՝ առանց դողար առնելու, շարունակ:

ԸՆԴՊԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.—Ո՞վ աւելի իմաստուն էր, Յակոր թէ Վարդան.—Յակոր իրաւունք ունէ՞ր ըսելու թէ հողագործութեան համար գրքի պէտք չունէր:—Ինչո՞ւ:—Ի՞նչ է մշակը, ի՞նչ կերպով կ'աշխատի:—Ի՞նչ արդիւնք կուտայ մշակին աշխատութիւնը:

ՈՒՍՈՒՅՁԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Դպրոցը այն հաստատութիւնն է ուր տղաքը կը սորվին կարգաւ, գրել, հաշուել, ինչպէս նաեւ ամէն տեսակ գիտութիւններ:—Դպրոցը մասնաւորաբար այն հաստատութիւնն է ուր տղոց կ'ուսուցուի բարի, պարկեշտ և իմաստուն ըլլալ:

## 11. ԵՐԿՈՒ ՄՇԱԿՆԵՐ

(Շարունակութիւն)

Բ.

Օր մը՝ Յակոր գրքի մը մէջ կարգաց թէ լառ բերք ունենալու համար պէտք է գործածել կարգ մը ազրեր:

Անմիջապէս գործադրեց կարգացածը և այն տարին իր արտերուն բերքը երկու անգամ աւելի եղաւ Վարդանի բերքէն:

Վարդան գարմացաւ մնաց՝ տեսնելով Յակորի բերքերուն աստատութիւնը:

— Յակոր, ըսաւ անոր, ի՞նչպէս կ'ըլլայ որ երկուքս ալ հաւասար չափով կ'աշխատենք և քու բերքդ իմինիս կրկնապատկեր կ'ըլլայ: Ի՞նչ գաղանփք է ստիկա:

— Գաղանփք չկայ, ըսաւ Յակոր:

Յետոյ՝ գիրքը ցոյց տալով, յարեց.

— Ամբողջ պատճառը այս գիրքն է. անկէ սորվեցայ թէ ի՞նչ պէտք է ընել աստառ ու լառ բերք ունենալու համար:

Վարդան՝ անօրաւիար՝ գլուխը ծոկոյ:

Յակոր որ բարի էր շարունակեց.


— Եթէ կ'ուզես, քեզի բռնժ թէ ի՞նչ գրուած է այս գրքին մէջ, որպէս գի գուն օգտուիս. բայց աւելի լառ է որ գուն ինքզ կարգալ սորվիս և մինակդ օգտուիս անկէ, ինչպէս նաև ուրիշ օգտակար գրքերէ. բան սորվելէն մարդու վնաս չի դար, ընդհանրապէս:

Մէկ երկու տարի վերջ՝ Վարդան կարգալ գրել սորված էր և իր արտերն ալ, Յակորի արտերուն պէս, աստառ ու լառ բերք կուտային:

ԲԱՌԵՐ.—ԻՆՔ՝ ցանուած հունտերուն արդիւնքը:—ԿԵԼԿԱՊԱՍԻԿ՝ երկու անշամը:—ՅԱՐԵԿ՝ շարունակել:—ԱՆՕՐԱՎԻԱՐ՝ խզնած:

ԸՆԴՊԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Պատմեցէ՛ր ամբողջ պատմութիւնը, նախորդ մասին հետ.—Ի՞նչ եղաւ Վարդանի սովորութեան հետևումը:—Յակոր ի՞նչ շանցաւ կարգալով:—Ի՞նչ է արտը, ի՞նչ է բերքը:—Ե՞րբ կը ցաննեն, ի՞նչպէս:—Ո՞վ կը ցանէ:

ՈՒՍՈՒՅՁԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ — Տգիտութիւնը զժրախտութեան աղբիւր մըն է բովանդակ կեանքի ընթացքին:—Բոլոր գործերուն, բոլոր արհեստներուն մէջ՝ ուսում առնողներն են որ կը յաջողին, մինչդեռ անուսուսները՝ անոնց չփ. նոյն իսկ անոնցմէ աւելի աշխատելով հանդէս՝ նուազ արդիւնք ձեռք կը բերեն, կամ բնաւ արդիւնք չեն ստանար.—Պատիկ տարիքէն մանաւանդ պէտք է սկսի ուսումը:



## 12. Պ Ա Ր Ե Ր Գ

Երկնից սակ  
Կապուսակ

Կանանց խոսերուն վրբայ,  
Թող մեր ձայնն ուրախ, թրթռայ,  
Եւ մեր քով  
Հաճոյքով,

Մեր ծրնողքը սիրելի  
Մեզ գիտէ աչքն ու փայլի:  
Գիրք, տետրակ,  
Գիր բարակ,

Գրծուար, գիրքին, շատ գասեր  
Մեզի ուսման կուտար սեր  
Բայց հիմակ,  
Խաճկ համակ

Այս մեր կանոնն ու օրէնք,  
Պէտք է խաղանք ու սրահներ:

Մինչև որ

Զօրաւ որ

Հրնչէ ձայնը դանդակին,

Եւ ամէնքս ալ ժպտազին,

Լուս բերան

Գասարան

Երթանք գէմքով գոմուակ


Գրքերնք կարդանք շարունակ:

Ա. ՓԱՆՈՍԵԱՆ

ԲԱՌԵՐ.— Կապուսակ՝ կապոյտ. — Խանդ և սմակ՝ (փոխաբերաբար) աշխոյժով, ոգևորութեամբ: — Ժպտազին՝ ժպտուն. — Գոմուակ՝ գոմ:

ԸՆԴՄԱՅՆՆԵՒԻ ԿԷՏԵՐ.— Ի՞նչ է ուսման սէրը. — Ի՞նչ բաներ մեզի կուտայ այդ սէրը. — Ինչո՞ւ: — Լու տղարը ի՞նչպէս պէտք է գրօնուի. — Որո՞նք են լաւագոյն գրօսանքները:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Լաւ գրօսանքները օգտակար են տղոց, անոնց առողջութիւնը կը զօրացնեն և կրթիչ են ընդհանրապէս. — Պէտք է իր ասանին գրօնուի, և գրօսանքի չգոհել ուսման ժամերը. — Ուսնելէ, աշխատելէ վելջ մանաւաղ գրօսանքը աւելի յարգի կը դառնայ:



### 13. ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Ա.

Մարկոս և Արչաւիր երկու եղբայրներ էին և շատ կը նմանէին իրարու :

Մարկոս քիչ մը անատակ էր: Շատ անգամ երկար ատեն փողոց կը մնար, քար կը նետէր կամ կը կտուէր իր բնկերներուն հետ:

Անգամ մը, մինչդեռ եղբօրը հետ գպրոցէն կը դառնար, աչգպէս քար նետեց նորէն: Փարը գնաց կօշկակար Միքայէլի ապակին խորսակեց:

Կօշկակարը անանկ կարծեց թէ քարը նետողը Արչաւիրն է, մինչդեռ Մարկոսն էր նետողը:

Քիչ մը վերջը դատախարակը խանութին առջևէն կ'անցնէր: Կօշկակարը անոր մօտեցաւ և կտորած ապակին ցոյց տալով գանդատեցաւ Արչաւիրէն:

Գատախարակը դարմայաւ, որովհետեւ Արչաւիրը բարի աղայ մը կը նկատէր:

Բայց որչեց լաւ դաս մը տալ անոր, որվէս զի ուրիշ անգամ անատակութիւն չընէ:

Յաջորդ օրը, բոլոր աղոց ներկայութեան, կանչեց զայն, և ըսաւ.

— Արչաւիր, դաւակ, ևս մինչև այսօր քեզ խելօք աղայ մը գիտէի, բայց կը տեսնեմ որ սխալիւր եմ:

Ենզճ Արչաւիր դարմայաւ մնաց: Իր խիղճը հանդարտ էր, գիտէր որ վէշ լան մը չէր ըրած:

Գատախարակը շարունակեց.

— Երէկ քար նետեր և վարպետ Միքայէլի ապակին կտորեր ևս... ասիկա ամօթ է քեզի... գնա՛ կեցիր պատին տակ... քիչ մը վերջը քսան հատ դաւականի հարուած պիտի տամ քեզի որպէս զի ուրիշ անգամ ատանկ լան չընես:

Արչաւիրի աչուքները լեցուեցան:

Գիտէր որ յանցաւորը իր եղբայրն էր, և թէ իր մէկ խօսքը կը բաւէր դատախարակին սխալը ուղղելու: Բայց չուզեց բան մը ըսել:

Անիկա նախընտրեց անիրաւ տեղը ձեռ ուտել քան իր եղբօրը պատժուելուն պատճառ դատնալ:

Եւ գնաց կեցաւ պատին տակ:

ԲԱՌԵՐ.— ԽՈՐՏԱԿԻ՛ կտորել.— ՆԿԱՏԵԼ՛ ճանչնալ.— ՆԱԽՐՈՏԻ՛ լաւ սեպել:

ԸՆԳՂԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ի՞նչ է խիղճը, ի՞նչ է խղճի հանդարտութիւնը:— Արչաւիր լա՞ւ թէ գէշ լան մը ըրաւ իր եղբայրը չմտնելով:

ՈՒՍՈՒՑՁԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Անձնութեան ամենէն բարձր օրինակներէն մէկն է Արչաւիրի ըրածը.— Աւելի բարձր անձնութեաններ կան. մարդիկ շատ անգամ ինքզինքնին կը զօհեն իրենց նմաններուն կեանքը փրկելու համար.— Անձնութեան թիւը գեղեցկագոյն գործն է որուն կրնան հասնիլ մարդիկ.— Չէ՞ որ Յիսուս ալ մարդկութեան համար շարչարուեցաւ ու խաչուեցաւ:



### 14. ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

(Շարունակութիւն)

Բ.

Մարկոս՝ նախ ուրախացաւ, տեսնելով որ կօշկահարը սխալեր և կարծեւ է թէ Արշաւիրն էր ապակին կտարողը:

Միջոց մը սակայն տխրեցաւ, մտածելով որ Արշաւիր կը յայտնէ ճշմարտութիւնը:

Բայց երբ տեսաւ որ Արշաւիրը ձայն չհանեց, դարձեալ ուրախացաւ:

Ուրեմն ինք չզգտի պատժուէր: Գաւազանի քան հարուածները իրեն համար չէին:

Բայց այս ուրախութիւնը քիչ ատ քիչ անհետացաւ:

Երբոր Արշաւիր՝ լռիկ մնչիկ գնաց կեցաւ պատին տակ, Մարկոս սկսաւ մտածել:

Անարդար չէ՞ր որ ինք կտորէր ապակին և եղբայրը պատժուէր:

Յետոյ Արշաւիր որքան բարի էր որ կը նախնուրէր ինք պատժուի և կողայրը պատժել չտալ:

Մարկոս զգաց որ խիղճը կը տանջէ զինքը: Ներսէն ձայն մը կարծես կը պոտար իրեն.

— Յանցաւորը դուն ես, մի՛ թողուր որ կողայրդ անիրաւ տեղը պատժուի քեզի համար:

Այդ ներքին ձայնը աւելի բարձրացաւ, երբ գատախարակը Արշաւիրի մօտենալով ձեռքը բանալ տուաւ և գաւազանի ստաջին հարուածը իջեցուց:

— Ապերախտ կը պոտար այդ ներքին ձայնը, այս կերպով կը փոխարինես կըրօրդ բարութիւնը:

Մարկոս այլևս չկրցաւ զիմանալ:

Ուրքի ելաւ և սկսաւ պոտալ.

— Մի՛ դարնէք, սիրելի գատախարակս, մի՛ դարնէք: Արշաւիրը յանցանք չունի ևս կտորեցի ապակին: Եւ սկսաւ լալ:

Գատախարակը գազրեցուց գաւազանի հարուածները և Արշաւիրի գանձալով՝

— ձի՞չդ է կըրօրդ բաժը, հարցուց:

— Այո, պատասխանեց Արշաւիր:

— Ուրեմն ինչո՞ւ ստաջուց չըսիր և պարտաւորը պատժուեցար:

Որովհետեւ չէի ուզեր որ կողայրս իմ պատճառաւ պատժուէր:

Այն ատեն գատախարակը համբուրեց Արշաւիրի ձեռքերը, և բաւ յուզուած ձայնով մը.

— Սիրելի գաւազան, դուն շատ մեծ հոգի մը և շատ բարի սիրտ մը ունիս. թող քեզմէ օրինակ առնեն բոլոր ազգերը:

Յետոյ, Մարկոսի գանձալով.

— Մարկոս, յարեց, քեզի այ կը ներեմ՝ որովհետեւ զզջացիր ու խոտտովանեցար, խիղճդ արդէն պէտք

եղածին չափ պատմած է քեզ, աշխատե որ եզրօրդ պէս ըլլաս, և ամէն մարդ պիտի սիրէ քեզ:

Այն օրէն ի վեր Մարկոս բարութեան օրինակ մըն է գպրոցին մէջ:

ԲԱՌԵՐ.—Աճեհասանալ՝ կորսուիլ.—Ղուիկ մեջիկ՝ առանց ձայն հանելու:

ԸՆԴԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.—Պատմեցէք ամբողջ պատմութիւնը, նախորդ մասին հետ:—Մարկոս լա՛ւ բրաւ գղջարով:—Ինչո՞ւ:—Ի՞նչ է խղճի տանջանքը:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՆՆԵՐԸ. — Անձնութիւնները այն՝ ա տիման թելադրիչ առաքինութիւն մըն է որ յանցաւորներն իսկ դժի կը բերէ:—Յանցանք մը գործելէ վերջ պետք է զգչալ ու խոտովանիլ:—Այն որ չի զղջար՝ ստախօս կը դառնայ, և մէկ յանցանք մը ծածկելու համար տասը և աւելի յանցանքներ կը գործէ:—Զղջումը միայն կրնայ ներման արժանացնել:

### 15. Հ Ր Ե Շ Տ Ա Կ Ը

Ինձի կ'ըսեն՝ «հրեշտակ մըն ես»:

Բայց ասկէ չեմ չփանար ես.

Գովհաստի ձեռ է ատիկա,

Որուն բընառ տեղի չըկայ:

Թէ՛ եւ պղտիկ եմ տակաւին,

Կը փափաքիմ ես սրտովի՛ն

Այց անունին՝ սուրբ և ազուոր՝

Ըլլայ իրօք արժանաւոր:




Քաղցրարարոյ ըլլալ կ'ուզեմ,  
Նաև գրաբի ու ժպտալեմ,  
Միշտ հընազանդ ու բարեկիրի,  
Աշխատաւեր ու գրքասիր:

Այսպէս կըրնամ երկրիս վերան  
Հրեշտակներու ըլլալ նման,  
Եւ անկէ ետք՝ երկինքն այ՝  
Իրայնէ հրեշտակ գտանալ:

ԲԱՌԵՐ.—Սրտովի՛ն՝ սրտանց.—Քաղցրարարոյ՝ անուշ բնաւորութիւն ունեցող.—Փայաղէմ՝ ժպտուն զէմբով.—Պքս սիրօ գութ ունեցող:

ԸՆԴԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.—Ի՞նչ կը նշանակէ «չփանար»:— Ինչո՞ւ կ'ուզէք նմանիլ երկինքի հրեշտակներուն:— Ի՞նչպէս կ'ըլլայ երկինքի հրեշտակ մը:— Ի՞նչ տեսակ յատկութիւններ պետք են՝ երկինքի հրեշտակներուն նմանելու համար:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Մեր անձին կատարելու թեան մասին զազափար կազմելու համար պէտք է մեր սեփական խղճին զատողութեան ականջ տանք, և ոչ թէ ուրիշներու— յանախ կեղծաւորներու— ըսածին — Գովեստները պէտք չէ շփացնեն մեզ, այլ զրգիւ մը պէտք է ըլլան՝ որպէս զի աւելի մեծ գովեստներու արժանի դառնանք:



### 16. Ա Ն Զ Ն Ո Ւ Ի Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ինձմէ կօթը տարու մեծ կորայր մը ունէի: Մեծ կորայրս հայրիկիս հետ կ'աշխատէր միեւնոյն արհեստին մէջ:

Հայրս մինակը չէր բաւեր մեր ապրուստին: Այս պատճառաւ կորայրս ալ ստիպուած էր անոր հետ աշխատիլ և զրկուիլ զպրօցէն:

Ամբողջ օրը սունկն դուրս՝ հայրիկիս խանութը կը մնար: Քիչ անգամ միայն կը սևանէի զինքը, բայց շատ կը սիրէի:

Անգամ մը հայրս խարազանով կը ձեռքը գոյն սաստիօրէն: Չեմ գիտեր թէ ինչո՞ւ համար բարկացած էր, բայց կորօրս աղաղակները սրտիս կը գալէին:

Չկրցայ զիմանալ: Անմիջապէս առաջ նետուեցայ, բոլոր ուժովս զրկեցի կորայրս, և աշխատեցայ որ գոյն ծածկեմ իմ մարմնովս:

Հայրիկիս բարկութիւնը չէր մնումացած տակաւին. անիկա շարունակեց զարնել, և հարուածները ինձի կուգային:

Բայց նորէն կեցայ, աշխատեցայ որ աւելի բաւ պաշտպանեմ կորայրս, մինչև որ հայրս՝ իմ արցունքներէս յուզուած՝ ձեռք զապրեցուց և ներկեց կորօրս:

ՌՌՒՍՈ

ԲԱՌԵՐ.— Մեկմանալ՝ թեթեւալ:

ԸՆԴԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ի՞նչ կը նշանակէ «ապրուստի բաւի»:— Ի՞նչ բան է «սրտի դպչիլ»:— Ինչո՞ւ Ռուսօ շատ չէր սևաներ իր կորայրը:— Ի՞նչպէս ապացուցուց թէ գոյն կը սիրէ:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Միշտ պատրաստ պէտք է ըլլանք պաշտպանելու ո՛չ միայն մեր կորայրները, այլ նաև ամէն անոնք որոնք նեղութեան մէջ կը գտնուին և որոնց կրճանքօգնել ո և է կերպով.— Ամէնէն պզտիկ, ամէնէն տկար օգնութիւնն իսկ շատ անգամ մեծամեծ բարիքներու պատճառ կը դառնայ:

### 17. Վ Ե Շ Ա Ն Զ Ն Ո Ի Յ Ի Ի Ն

Անգամ մը գիւղ ելած էի ու կը պտակէի խրճիթնե-  
րու չարջը, զեղջուկներուն աշխատանքը գիտելով:

Յանկարծ, հիւզակի մը մտա, տեսայ երկու գեղ-  
ջուկ տղար որոնք կը կտակէին իրարու հետ:

Տղոցմէն մէկը մեծ էր և զօրաւոր կ'երեւար, իսկ  
միւսը փոշր էր ու տկար:

Եւ սակայն փոքր տղան էր որ կը յարձակէր ու  
կ'աշխատէր զարնել միւսին: Մինչդեռ մեծը չէր դար-  
ներ, այլ կը ջանար անոր հարուածներէն խուսափիլ:

Երբոր կսիւր գաղբեցաւ, մտակցայ մեծ տղան և  
հարցուցի.

— Եզրա յրդ էր քեզի հետ կտուողը:

— Ո՛չ, զբացի է:

— Շատ չար տղայ մը կ'երեւայ:

— Այո՛, միշտ աշաղէս զէջ կը վարաւ ի բոլոր տղոց  
հետ:

— Բայց երբ քեզի կը զարնէր՝ ինչո՞ւ դուն ալ  
անոր չէիր զարներ:


— Ի՛նչպէս զարնէի, պատասխանեց զեղջուկ  
տղան, և անկէ զօրաւոր եմ:

Վեհանձն տղայ մըն էր այս զեղջուկը:

ԲԱՌԵՐ.— Գեղջուկ՝ զեղացի.— Խրճիթ՝ պղտիկ տուն.— Հիւ-  
զակ՝ պղտիկ տուն, տնակ.— Խուսափիլ՝ ազատիլ:

ԸՆԴՐԱՅՆՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ի՛նչ է զիւղը:— Որո՞նք կը բնակին  
զիւղին մէջ:— Ի՛նչ տեսակ տուներ են հիւզակն ու խրճիթը.— Ի՛նչ  
է վեհանձնաթիւնը:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Մեծ տղարը միշտ ներս  
դամտութեամբ վարուելու են իրենց է պղտիկներուն հետ:— Զօրաւոր  
տղարը պէտք չէ որ իրենց ուժը իբր զէնք զործածեն իրենց է տկար-  
ներուն դէմ.— Մեծերը կրնան անուշութեամբ, վեհանձնութեամբ ալ  
յաղթիլ իրենցմէ տկարներուն:— Վեհանձնութիւնը մարդկային առարի-  
նութեանց մեծագոյններէն մէկն է:



### 18. Շ Ե Ր Մ Ի Ն Է

Կանուխ կ'երթայ վարժարան  
Մաքուր հարուած, միւր, մաքուրն,  
Աղջիկ մըն է  
Հերմինէ.

Բազաքափար ու բարի,  
Տեանազն անոր կը յարի:

Դասերէն ևս չի մնար,  
Մեծերուն քով հեղ խոնարհ  
Աղջիկ մըն է  
Հերմինէ.

Եւ բզգաս ու խերայի  
Զի լսուիր ձայնն իր լայի:

Տրդա՛ք ատանց վարանման  
 Կ'բսեմ՝ Տիպար աննրման  
 Ազջիկ մըն է  
 Հերմինէ .  
 Պէտք է ջանաք ամէն օր  
 Նրման ըլլալ ճիշդ անոր :

ԱԼՓԱՍԼԱՆ

ԲԱՌԵՐ. — ԺԻՐ՝ չտնտնացող, աշխոյժ. — ՅԱՐԻՂ՝ բարեկամանալ. — ՀԵԿ՝ անուշ բնատրուծիւն ունեցող. — ՔՂՂԱՍՏ՝ պարկեշտ. — ՏԻՊԱՐ՝ օրինակելի :

ԲՆԴԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ. — Որո՞նք են Հերմինէի յատկութիւնները : — Ի՞նչ կերպով պիտի աշխատիր այդ յատկութիւնները ունենալ : — Ինչո՞ւ համար քաղաքավար ու բարի տղոց կը յարին :

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅՄՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. — Տղաք միշտ իրարմէ օրինակ առնելու են, բայց բարի օրինակ. — Իրենց նպատակը պէտք է ըլլայ զպրօցին աշակերտներուն մէջ օրինակ դառնալ և տիպար նըկատուիլ ոչ միայն ուսման, այլ բարի վարքի մէջ :

19. Ս Պ Ա Ս Ո Ւ Շ Ի Ն

Շուշան կօշկակարի մը ազջիկն էր :

Օր մը գիրքի մը մէջ հետեւեալը կարդաց .

«Պէտք է քաղաքավար ըլլալ ամէն մարդու հետ :»

— Այո՛, բաւ Շուշան բարձրաձայն, գիրքս իրաւունք ունի, պէտք է քաղաքավարութեամբ վարուիմ ամէնուն հետ . . . պէտք է քաղաքավար ըլլամ մայրիկիս, հայրիկիս, եղբայրներուս, և դաստիարակներուս հետ . . . յետոյ . . . ուրիշ ո՞վ կայ . . . այո՛ հայրիկիս յաճախորդներուն հետ . . . կարծեմ մարդ չեմ մտնար :

Շուշան չտեսաւ որ հայրը զինքը մտիկ կ'ընէ, և ուրախ զուարթ պարտէզ կ'իլլէր, երբ աճապարանքով զարնուեցաւ իրենց սպասուհիին՝ որ ջուր կը բերէր :  
 Շուշան անիրաւ էր, բայց բարկացաւ :  
 — Կո՞չք ես, ի՞նչ ես, պտտայ սպասուհիին, անսչրջազգեստ թրջեցաւ :

Խեղճ սպասուհին ձայնը ձուներ չհանեց :  
 Բայց ճիշդ այդ միջոցն Շուշանի հայրը վրայ հասաւ և ազջկան ձևովէն բռնելով, բաւ .

— Շուշան, ազջիկս, այս կերպով քաղաքավար պիտի ըլլաս ամէն մարդու հետ . . . քիչ մը առաջ քեզ մտիկ կ'ընէի . . . կը կարծէիր որ ոչ ոք մտցած ես . . . բայց կը մտնայիր որ պէտք է քաղաքավարութեամբ վարուիս սպասուորներուն հետ ալ . . . ներդրութիւն խնդրէ ուրեմն սպասուհիէն, որովհետեւ յանցանքքրուկդ էր :

Շուշան անմիջապէս հնազանդեցաւ :

— Հիմայ կրնաս պարտէզ երթալ, բաւ հայրը : և Շուշան պարտէզ կրաւ՝ մտածելով .

— Որչա՛փ իրաւունք ունի հայրս : Կը մտնայի որ սպասուորներուն հետ ալ պէտք է քաղաքավարութեամբ վարուիլ :

ԲՆԴԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ. — Ի՞նչ է քաղաքավարութիւնը : — Ի՞նչ տարբերութիւն կայ անկիրթ տղուն և քաղաքավար տղուն միջև :

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅՄՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. — Դիբրով, հարստութեամբ կա՛մ ծնունդով մօզիլ ստորադաս անձերէն եթէ յարգանք կը սպասենք, մենք ալ փոխադարձաբար յարգանք պարտական ենք անոնց : — Մարդիկ հաւասար են իրենց իրաւունքներով, որչա՛փ ալ տարբեր վիճակներու մէջ գտնուին : Հարուստը չի կրնար աղքատը անիրաւել, ոչ ալ տէրը սպասուորը, արդէն ամէն մարդ հաւասար է օրէնքի և մարդկային խզճին առջև :



## 20. ԱՆՍԱՔՈՒՐ ԱՂՋԻԿԸ

Շուշան անմաքուր աղջիկ մըն էր :

Մայրը միշտ կը լուար, կը մաքրէր ու կը սանտրէր զինքն ու եղբայրները, բայց մօրմէն հեռանալուն պէս՝ Շուշան վրան գլուխը կ'աղտոտէր :

Իր ձեռքն ու գէմքը շարունակ մրտաէին : Եղունգները կարել չէր տար և վրան գլուխը ամէն տեսակ արատներով լեցուն էր :

Ընկերները կը գանձէին Շուշանէն և շարունակ կը փախչէին անկէ :

Հայրիկին անուան տօնն էր : Շուշան և եղբայրները մէյմէկ ոտանաւոր պիտի արտասանէին այդ տօթի :

Բոլոր եղբայրներն ալ արտասանեցին իրենց ոտանաւորները և զայցին հայրիկը համբուրեցին : Հայրիկն ալ գանձը համբուրեց երևուանով :

Կարգը Շուշանին եկաւ :

Շուշան արտասանեց իր ոտանաւորը, բայց երբ հօրը մօտենալով ուղից զայն համբուրել, հայրը զինքը հեռացուց՝ բսելով :

— Տղոց այսերը միշտ վարդագոյն կ'ըլլան, քուկին-

ներդ սեփսե ևն, կարծես մրտաւ ևն. ևս մրտա աղջիկներու համբոյրը չեմ ուզեր :

Շուշան ամօրանաւ մնաց իր եղբայրներուն քով ու լացաւ :

Այն օրէն ի վեր՝ Շուշան խնամք կը տանի իր մաքրութեան և վրան գլուխը չաղտոտեր :

**ԲԱՌԵՐ.—ԱՆՄԱՔՈՒՐ՝** աղտոտ:—**ՀՐՈՒՆԱՆԻՐ՝** ուրախութիւն:—**ԱՄՕՐԱԽԱՐ** մնալ՝ խփել:

**ԸՆԴՂԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.**—Ի՞նչ է անմաքրութիւնը:— Ինչո՞ւ կը գանին աղտոտ տղոցմէն.— Ի՞նչ է անուան տօնը:— Հայրիկը ինչո՞ւ չուզեց Շուշանը համբուրել:— Ի՞նչ պէտք է ընել՝ անմաքուր չըլլալու համար:

**ՈՒՍՈՒՑՁԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.**—Անմաքուր տղաքը ո՛չ միայն իրենց ընկերներուն և ամէն մարդոց զգուանք կը պատճառեն, այլ նաև իրենց առողջութեան կը վնասեն:— Մաքրութիւնը առողջութեան մեծագոյն պայմանն է:— Ընդհանրապէս անմաքուր տղաքն են որ աւելնէն աւելի հիւանդ կ'ըլլան —Անմաքրութիւնը վտանգաւոր է, որովհետեւ՝ յաճախ մահ իսկ կը պատճառէ:

### 21. Կ Ե Յ Յ Է՛ Զ Ո Ի Ր Ը

Կեցցէ՛ ջուր, կեցցէ՛ ջուր,  
 Որ կը զովայնէ, մեզ կ'ընէ մարտւր.  
 Կեցցէ՛ ջուր, կեցցէ՛ ջուր,  
 Որ մեզ կուտայ գէմք սիրուն, անուշ բոյր:

Իր շքնութիւններն են որ մեզի կուտան  
 Ասողջութիւն և կտրով պատուական,  
 Մեր վարժապետը կը յորդորէ որ  
 Մարբութիւն սիրենք միշտ և ամէն օր:

Պզտիկ տղայ մը, ուշիմ՝ իմասուն,  
 Պէտք է որ լուայ, Ասարծու ատտուն,  
 Զևոքը, մարմինը ու գէմքը զուարթ,  
 Որպէս զի զինքը սիրէ ամէն մարդ:

ԲԱՌԵՐ.—ԹՅՅՅ՛ գոյն:—ՇՆՈՐԻ՛ պարգեւ:— ԿՈՐՈՎ՛ ոյժ:—  
 ՅԱՐԴՈՐԵԼ՛ խրատ տալ:—ՈՒՇԻՄ՛ խելացի:—ԻՄԱՍՏԱՆԻ՛ շատ ու  
 լաւ բան զշտցող:

ԸՆԴՊԱՅՆԵԼԻ ԿԼՏԵՐ.—Ո՞ր կը զանուի ջուրը:— Զուրին հետ  
 ի՞նչ կը գործածենք մարբուելու համար:— Ի՞նչպէս կը գոյանայ  
 ջուրը:—Ո՞ր տեղերը ջուր կը զանուին:— Ինչո՞ւ կը սիրեն մարբու  
 տղարը:— Զլուացուող տղարը ի՞նչ կ'ըլլան:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.—Զուրը մարբութեան մե-  
 ծագոյն աղբիւրն է:—Մարբուր պէտք է ըլլալ ո՛չ թէ մարդոցմէ սիր-  
 ուելու համար, այլ ասողջ, կայտառ ու զուարթ ըլլալու համար:—Մար-  
 բութիւնը այնքան անհրաժեշտ է մարմինին, որբան սնունդը:—Ան-  
 մարբութիւնը գէշ ազդեցութիւն կ'ընէ նաեւ տղոց բարոյականին  
 վրայ:

### 22. ԲԺԻՇԿԻՆ ԽՐԱՏՆԵՐԸ

Ա.

Տօքթ. Սիմօնի զաւակը՝ Սեպուհ՝ իր ընկերներէն  
 երեքը իրենց պանդակը հրախրած էր զբունելու:

Զորս տղաքը երկար ժամանակ վազելէ վազվզելէ  
 վերջ լաւ մը քրտնեցան և պարակզին ամէնէն հովա-  
 սուն վայրը դային հանգստանալու:

Բարերազգարար բժիշկը հոն էր:

— Ի՞նչ կ'ընէք սրտաց, այդ ի՞նչ անողուշութիւն  
 է, չէ՞ք զիտեր որ այդպէս քրտնած վիճակի մէջ հովը  
 կրնայ գայիլ ձեզի և նոյն խակ մահացու հիւանդութեան  
 մը պատճառ դառնալ: Քացեք քատորդ ժամ մը հան-  
 դարս նստեցեք արեւին տակ, որպէս զի քրտինքնիդ  
 չորնայ. անկէ ետքը ո՛րչափ կ'ուզէք կեցեք հովին ասջև:  
 Տղաքը խելոյն հնազանդեցան:

Բ.

Երբոր քատորդ ժամը լրացաւ, բժիշկը դաննք իր  
 քով կանչեց և բտաւ.

— Կը յուսամ որ չպիտի մտնաք այս դասը, տա-  
 քէն անմիջապէս ետքը երբեք պաղ տեղ կամ հովին  
 ասջև մի՛ կենաք:

Յետոյ աւելցուց.

— Քանի որ հիմայ ասիքը եկաւ, քիչ մը քննեմ  
 ձեզ, տեսնեմ ո՞րչափ հող կը տանիք ձեր ասողջապա-  
 հութեան:

Տղաքը անձկութեամբ իրարու նայեցան:


— Օ՛հ, աչդհատի մի՛ վախնաք, ըստ Տօրթորը, դժուար բան մը չէ. դո՛ւն, Յակոր, շխտակ կեցիր նայիմ՛: Յակոր չսկսեցաւ:

— Քիչ մը աւելի շխտակ, քիչ մըն ալ...

— Բայց չեմ կրնար:

— Կը տեսնե՞ս, բարեկամս, չես կրնար շխտակ կենալ. արդէն կրնակց ծոած է և ուսերէյ մէկը միւսէն աւելի բարձր է, եթէ այսպէս չարունակէ՝ քսան տարեկան եղած ժամանակց կուզի պիտի նմանիս:

— Բայց յանցանքը ի՞նչ է, հարցուց Յակոր:



— Անչուշտ, պատասխանեց բժիշկը, գպրոցին մէջ չատ կը ծոխ տեսարակներուն և գրքերուն վրայ, գրած միջոցից ձախ թևոց պէտք եղածէն աւելի կը տարածես գրասեղանին վրայ. վերջապէս չատ գէշ զիրքով մը կը նստիս:

ԲԱՌԵՐ.— Հովասուց՝ հով առնող. զով — Վաչր՝ տեղ — Մա հացու՝ մահուան պատճառ եղող:— Լրանալ՝ վերջանալ:— Անձ կը քեամք՝ սրտաղողով:

ԸՆԴԱՅՆՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ի՞նչ անզգուշութիւն ըրած էին Տօրթ. Սիմոնի գաւախն ու իր երեք ընկերները:— Յակոր ինչո՞ւ վրցաւ շխտակ կենալ:— Ի՞նչ է կուզը:— Գուր ի՞նչպէս կը նստիր ու կ'աշխատիր դպրոցին մէջ:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Պատիկ անզգուշութիւններ, պատիկ յոռի սովորութիւններ՝ որոնց կարեւորութիւն չենք տար, կամաց կամաց մեծ դժբախտութեանց, նոյնիսկ մահուան պատճառ կրնան դառնալ: Աւելի դիւրին է հիւանդութեան մը գալը արդիւն, քան գալէն վերջ գալն հեռացնել:

### 23. ԲԺԻՇԿԻՆ ԽՐԱՏՆԵՐԸ

(Շարունակութիւն)

Գ.

Տօրթորը Ռուբէնին գարձաւ և ըստ.

— Եկուր նայիմ, գաւակս, սա լրացիրը սա և քիչ մը բան կարգաց ինձի:

Ռուբէն կարգաց:

— Ազէկ կարգացիր, բոտս բժիշկը, բայց տեսայ որ կարգացած ատենդ չատ կը տանջուիս և գրերը տեսնելու համար կը ստիպուիս լրացիրը աչքերուդ քսել:

— Որովհետեւ կարճատես եմ, հետուն չեմ տեսներ:

— Գիտեմ որ այդպէս է, բայց խնդիրը հոն է որ քու այդ տկարութիւնդ երթալով կը ծանրացնես. տան մէջ, ցերեկ ատեն, միշտ մտի խաղցի մը մէջ կ'աշխատ

տիս, մինչդեռ աշխատելու համար բոլորովին լուսա-  
 ւորուած տեղ մը պէտք է բնարեւ: Եւ յետոյ ինքզինքդ  
 չես վարժեցներ ասարկաները կարելի եղածին չափ  
 հետուէն տեսնելու, փոխանակ աչքերդ անոնց մտու-  
 ցնելու, աշխատէ՛ որ նստածքդ անոնց հասցնես:  
 Այսպէս շարունակ վարժութիւն բնակով կրնաս յաղթել  
 այդ տկարութեան և տեսնել՝ քու բնկերներուդ պէս:

Վ.

Տօքթօր Սիմոն երրորդ տղուն դարձաւ.

— Եկո՛ւր նայիմ, Միհրան, քիչ մըն ալ քեզ  
 քննենք:

Միհրան յատճացաւ, բայց կարծես թէ յանցաւոր  
 մըն էր և մատուրները ծածկած էր ավերուն մէջ:

— Բա՛ց նայիմ ձեռքերդ, ըստ բժիշկը:

Միհրան բացաւ ձեռքերը:

— Այդ ազտտ եղունգներուդ համա՞ր կը խախտիր  
 գաւա՛կս: Լա՛ւ, ամօթի զգացումը աղէկ բան մըն է,  
 բայց ինչո՞ւ ամօթ զգաս, ինչո՞ւ ամօթով մնաս: Կը  
 տեսնե՞ս թէ որչափ զէջ բան է ազտտ ըլլալը: Երանի  
 թէ միայն սա ըլլար:

Յետոյ միւս տղոց գտնաւորով՝ յարեց.

— Չեղի պատմութիւն մը պիտի պատմեմ, պիտի  
 տեսնէք որ ազտտութիւնը որչա՞փ փնտասկար հետե-  
 ւանքներ կրնայ ունենալ:

ԲԱՌԻՐ.— ԽՈՒԳ՝ սենեակ:

ԸՆԴՂԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Խուրէն ինչո՞ւ կարճատես դարձած էր:  
 — Ինչո՞ւ փնտասկար է ցերեկ ատեն մութ խոցի մը մէջ աշխա-  
 տիլը: — Ի՞նչ պէտք են ընկ կարճատեսները: — Միհրան ինչո՞ւ  
 խախտաւ: — Ինչո՞ւ համար լաւ բան է ամօթի զգացումը:

ՈՒՍՈՒՑՁԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Եթէ պզտիկ տարիքէն  
 մեր առողջութեան հոգ չտանինք, ապագային տկարակազմ կ'ըլլանք և  
 չենք կրնար աշխատիլ.— Պէտք է մաքուր պահենք մեզ, պէտք է լաւ  
 մը խոզանակներ մեր հագուստները.— Պէտք է որ մեր տուները օդա-  
 ւէտ և մաքուր ըլլան.— Պէտք է կարեւորութիւն տանք մայմնամայղին  
 և մեր զրօսանքի ժամօրը անցնենք մաքուր օդի մէջ, կազդուրի: Իա-  
 ղերով:

## 24. ԲԺԻՇԿԻՆ ԽՐԱՏՆԵՐԸ

(Շարունակութիւն)

Ե.

Տօքթօր Սիմոն հետեւեալ պատմութիւնը ըրաւ  
 տղոց:

— Բաւական ժամանակ ստաջ, այս թաղին մէջ  
 Պետրոս անունով գործաւոր մը կար:

«Ազտտ տղայ մըն էր Պետրոս, մաքրութենէ կը  
 խնրէր:

«— Ինչո՞ւ լուացուիմ, կ'ըսէր, ասիկա ժամանակի  
 կորուստ է. յետոյ ինչի՞ կը ծառայէ լուացուիլը, չէ՞  
 որ չեմ լուացուիր և շատ ալ առողջ եմ:

«Օր մը, դանակ մը աւած միջոցին, Պետրոս պզտիկ  
 մը կը կարէ մատը: Վէրքը ա՛յն աստիճան աննշան  
 բան մըն էր որ Պետրոս կարեւորութիւն չտար:

«Բայց երեք օր վերջ մատը կը սկսի ուռիլ. վէրքն  
 ալ շատ ցաւ կը պատճատէ իրեն: Պետրոս անմիջապէս  
 ինձի եկաւ:

«Բննեցի մատը, և բսի իրեն.

«— Խեղճ Պետրոս, մատդ փակեր է, պէտք է  
 կարել. ինչո՞ւ աւելի կանուխ չեկար:

«Պետրոսի գոյնը նետեց:

«— Անպատճառ պէտք է կտրել, հարցուց:

«— Անչո՛ւշտ, պատասխանեցի, եթէ հիմայ այդ մատոյ չկտրեմ, վերջը պիտի ստիպուիս ամբողջ ձեռքդ կտրել տալ:

«Եւ մատը կտրեցի:

«Հիմա թերեւս անանկ կը կարծէք որ զանակին վէրքն էր ատոր պատճառը. կը սխալիք: Սղատառ-թիւնն էր: Վէրքը շուտ կ'անցնէր՝ եթէ Պետրոս կըտրուած մատը մաքուր պահած ըլլար: Բայց Պետրոս աղտոտ էր, և աղտոտութիւնն էր որ փակցուցած էր վէրքը:

ԲԱՂԵՐ.— Լսուրիլ՝ գանիւլ.— Մըկ՝ սու, ցնել:

ԸՆԴԼԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Պատմեցէ՛ք ամբողջ պատմութիւնը.— Ինչո՞ւ փտեցաւ Պետրոսի մատը:— Ինչո՞ւ բժիշկը մատը կտրեց:— Եթէ վարէր՝ ի՞նչ պիտի ըլլար.— Եթէ դուք ալ վէրք մը ունենար ի՞նչ պիտի ընէր:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Տղար պէտք չէ որ հատու առարկաներու հետ խաղան.— Եթէ անպզտու ձեռքերն անկէ կտրեն կամ վազած ատենին ինչան ու վիրաւորին, պէտք է անմիջապէս լուան և շուտ մը իրենց ծնոյրին ցոյց տան վէրքը.— Վէրք մը օրչափ կանուխ դարմանուի, այնլան շուտ կ'անցնի:



### 25. ԿԱՐՈՒՀԻՒՆ ԵՐԳԸ

Թէև փոքրիկ՝ բայց ժաշտան,  
կարուհին եմ ես մեր տունին,  
Թաթիկներս յոգնիլ չունին,  
կ'ուզեն գործել ամէն փայրիկան:

Արշարյսէն մինչև գիշեր  
կը հիւսեմ զարդ, կը կտրեմ կար,  
կտրեմ ձեւեմ միշտ անդադար,  
Բանիմ ասեղ, ժանեակ, նիշեր:

Զաւակ մըն եմ աշխատութեան  
Հէք ծընողքիս դասն քրտինքին.  
Քանի՛ քանի ջանքեր անգին  
Նր իրեցին ինձ անխափան:

Բայց հիմայ երբ կընամ մեղմիլ  
Բազուկներուս ատոյզ ու ժով  
Տաժանքները անոնց վրդով,  
Անհոյութիւնն է անվայել:

Աշխատութիւն, այս է իմ երգ.  
 Կեանքի կտիւ մըն է անդուլ,  
 Ու երբ կենանք անհող ու թոյլ  
 Կրնանք մնայ անօթի, մերկ:

Օ՛ն, շարժեցէ՛ք բազուկներ թաջ  
 Չանքը փռել թող ձեր ախան,  
 Չե՛ք սիրեր ևս արտունջ, լալիւն,  
 Պետք է սուրալ զէպի ստաջ:

Յ. Ե.

ԲԱՌԵՐ.—ՄԵՐԱՉԱՆ՝ աշխատող:—ԱՆՈՒՄ՝ շատ սուղ, զին  
 չունեցող:—ԱՆԽԱՎՈՒՍՆ՝ անդաշար:—ՏԱՍՆՈՒՄ՝ յոգնութիւն՝  
 չարչարանք:—ԱՆՈՒՄ՝ վերջ՝ դադար չունեցող:—ԼԱՎԻՆ՝ լաց:—  
 ՍՈՒՐԱՎ՝ վազել:

ԸՆԴԱՆՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.—Ի՞նչ է ժանեակը, ի՞նչ է նիշը:— Ի՞նչ  
 կը նշանակէ աշխատութեան գաւակ մըն ևմ: Կարուհիին ծը-  
 նողքը ի՞նչ ըրած էին:—Ինք ի՞նչ կ'ընէր ատոր փոխարէն:—Գուք  
 ի՞նչ պիտի ընէր:— Ի՞նչ կը նշանակէ՝ պէտք է սուրալ զէպի  
 առաջ:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅ ԼՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. Աշխատութիւնը տարիքի  
 հետ կապուած չէ:—Ամենէն փոքր, ամենէն տկար յոգաքն իւր կրնան  
 աշխատիլ ու է կերպով:—Օգնել իրենց ծնողքին՝ նախ իրան պակտը  
 մըն է տղոյ համար. բայց այդ պարտքը հատուցանելու համար պէտք  
 չէ որոշ աստեղի մը սպասել:—ԱՅն տարիքի մէջ կրնանք օգնել մեր  
 ծնողքին և անոնց աշխատութիւնն ու նեղութիւնը թեթեւցնել:



### 26. ՅԱՐԴԸՆԵՒ ՈՒՌԻՒ ԶԻՂԵՐԸ

Ա.

Այրի աղքատ կին մը և իր երկու գաւակները  
 դաշտ դադած էին ուտիի ճիւղեր հաւաքելու:

Մայրը այդ ճիւղերէն խոշոր սրցակ մը ունէր գր-  
 խունս վրայ, իսկ աղաքն ալ յարկի շիւղերով կապուած  
 փոքրիկ խտրներ կը կրէին:

Ճամբան հանդիպեցան հարուստ վաճառականի մը  
 և անկէ ոգորմուխիւն խնդրեցին:

Վաճառականը ոգորմութիւն չստատ. բայց այրի  
 կնոջ գանձալով, բատ.

- Ինչո՞ւ կը մտրատ:
- Որովհետեւ կարօտ եմ:

— Բայց յանցաւորը դուն ես. դուն ու գաւակներդ կրնաս աշխատիլ և մուրացկանութենէ ազատիլ:

— Բարբոլին ծոյլ չենք, մենք ալ կ'աշխատինք ըսաւ կինը, և նորէն աղքատ ենք:

— Դուք աշխատելու լաւ եղանակը չէք գիտեր... եթէ ուզէք՝ կրնաս ոսկիի վերածել սա ուսիի ճիւղերն ու յարցի ճիւղերը:

Խեղճ կինը զարեւոյցմամբ վաճառականին կը նայէր:

— Չե՞ս հաւատար, ըսաւ վաճառականը, երկու գաւակներդ ինծի յանձնէ և ես անոնց պիտի սորվեցնեմ թէ ի՞նչպէս ուսիի ճիւղերն ու յարցը ոսկիի կը փոխուին. այն ատեն՝ դուն ալ կրնաս ապրիլ անոնց աշխատութեան արդիւնքով:

Մայրը հաւանեցաւ, և գաւակները յանձնեց վաճառականին:

**ԲԱՌԵՐ.— Հաւաքել՝ ժողովել:— Տրցակ՝ իբարու կապուած (ճիւղեր):— Խուրճ՝ տրցակին փոքրը, տեսակ մը փունջ:— Խնդրել՝ ուզել:— Վերածել՝ փոխել:**

ԸՆԴՈՒՅՆՆԵՒԻ ԿԷՏԵՐ.— Ի՞նչ տեսակ ծառ է ուսին.— Ի՞նչ է տրցակը, ի՞նչ է խուրճը:— Ի՞նչ է վաճառականը:— Ի՞նչ է յարցը:— Ո՞ր մուրացկաններուն պէտք է ողորմիլ:

ՈՒՍՈՒՑՁԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Անոր համար որ կրնայ աշխատիլ՝ մեծագոյն ամօթն է մուրացկանութիւնը:— Աշխատելու կարող մարդ մը երբ կը մուրայ՝ պարզապէս զոգութիւն ըրած կ'ըլլայ:— Չկայ անպատուարեք աշխատութիւն:— Պէտք է ջանալ սակայն որ աշխատութիւնը արդիւնք տայ. այլապէս ժամանակի վատնում կ'ըլլայ:

### 27. ՅԱՐԴԸ ԵՒ ՈՒՌԻԻ ԶԻՂԵՐԸ

(Շարունակութիւն)

Բ.

Վաճառականը մօտակայ քաղաք մը կը բնակէր: Այնտեղ տարաւ այրի կնոջ տղաքը, անոնցմէ մէկուն կողմագործութիւն սորվեցնել տուաւ, և միւսին ալ յարզէ գլխարկներ հիւսելու արուեստը:

Երեք տարի ետքը տղաքը արզէն խակ վարպետ դարձած էին և կրնային մինակնին աշխատիլ:

Երկուքն ալ իրենց մօրը քով վերադարձան և սկըսան աշխատիլ: Անոնք շարունակ կողովիկներ, սակաւներ և աղուր գլխարկներ շինելով կը զրկէին վաճառականին որ ծախէ:


Օր մը, վաճառականը իրենց տունը եկաւ, և իրեն զրկուած ապրանքներուն փոխարէն փայլուն դեղեցիկ ոսկիներ յանձնելով, ըսաւ տղոց մօրը.

— Կը յիշե՞ս սակէ առաջ ըրած խօսքս. այն ատեն թերեւս չհաւատացիր երբ կ'ըսէի թէ աշխատող ձեռքը կրնայ հրաշքներ գործել: Աշխատող ձեռքը անա այսպէս կրնայ ոսկիի վերածել նոյն խակ ուսիի ճիւղերն ու պարզ յարցը:

**ԲԱՌԵՐ.— Մօտակայ՝ մօտիկ:— Կողովիկ՝ պզտիկ կողով:— Ապրանք՝ ծախու առարկանք:**

ԸՆԴՈՒՅՆՆԵՒԻ ԿԷՏԵՐ.— Պատմեցէք ամբողջ պատմութիւնը.— Վաճառականը լա՞ւ բան մը ըրաւ ողորմութիւն չտարով:— Ի՞նչ պիտի ըլլար հետեւանքը՝ եթէ ողորմութիւն տուած ըլլար:— Ի՞նչ կը նշանակէ «աշխատող մեք ոսկի կրնայ վերածել նոյն խակ ուսիի ճիւղերն ու յարցը»:— Ի՞նչ տեսակ արհեստ է կողմագործութիւնը:— Ի՞նչպէս կը հիւսեն յարզէ գլխարկները:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Աշխատութիւնը միայն ապրելու միջոց մը չէ այլ պարտականութիւն մը:— Աշխարհի բոլոր բարիքները մարդկութեան յուսազղիմութիւնը, բարորութեան պայմանները, եւլն. մարդկային աշխատանքի արդիւնքն են:



### 28. ԿԱՊԻԿՆ ՈՒ ԸՆԿՈՅԸ

Էդ կապիկ մը դեռաւի  
Կանանչ կեղեւով ընկոյզ մը գըտաւ  
Խածաւ զայն. համն էր կծու և փնքի.  
Մոմուկեց զէմքն ու գոչեց. «Ա՛հ, իրա՛ւ  
Մայրս սակց ինձ, երբոր  
Ապահովցուց թէ ընկոյզներն են ազուոր.  
Ալ ի՞նչպէս հաւատալ ձերերու խօսքին  
Որք պղտիկները խարեւ կը ջանան:  
Եւ իր ընկոյզը նետելով ուժգին՝  
Մըմբոսաց. «Թող քեզ ուտէ սատանան»:»  
Խոչոր կապիկ մը առաւ զանիկա,  
Երկու քարի մէջ կտարելով զիւրաւ

Կեղեւներն հանեց, մաքրեց ու կերաւ.  
Եւ՝ «Մօրց բամբին մէջ բնաւ սուտ չկայ,  
Յարեց, ընկոյզներն անուշ, համով են,  
Բայց պէտք է հանել զանոնք կեղեւէն»:»

Յիշեցէ՛ք թէ կեանքի մէջ ալ  
Չկայ առանց աշխատութեան հաճոյք ըզգալ:  
(Թարգմ. Ա. ՓԱՆՈՍԵԱՆ) ՏԼՈՐԻԱԸ

ԲԱՌԵՐ.— Դեռաւի՛ պղտիկ:— Փնքի՛ (փոխաբերաբար) անախորժ:  
ԸՆԿՈՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ի՞նչ տեսակ ծառ է ընկուզենին:— Ընկոյզը ի՞նչպէս կազմուած է:— Կապիկը իրաւունք ունէ՞ր ըսելու թէ մայրը ստած է. — Ինչո՞ւ:— Մերերու խօսքին հաւատալո՞ւ ենք թէ ոչ:— Ինչո՞ւ:— Ի՞նչ կը նշանակէ «թող քեզ ուտէ սատանան» ասութիւնը:— Ի՞նչ է հաճոյքը:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Առանց աշխատութեան հաճոյք չկայ:— Պէտք է յոգնիլ, զօհողութիւն մը ընել՝ հաճոյքին ազուորութիւնը հասկնալու համար:— Շատ անգամ լիչ մը աշխատութենէ փախելնուս համար, հաճոյքի լաւ առիթներ կը կորսնցնենք:— Մոյլ մարդը՝ նոյն իսկ երբ հարուստ ըլլայ՝ իրական հաճոյք չզգար բնաւ:— Բուն հաճոյքը աշխատող մարդուն իրաւունքն է:



### 29. ԳՈՐԾԱՒՈՐԻՆ ԵՐԳԸ

Այս ատու հաց կերայ:

Որպէս զի հաց ուտենք, պէտք է որ հողագործը աշխատի իր արտերուն մէջ, ցորեն ցանէ և հնձէ արեւին տակ, պէտք է որ ալօրեպանը ալիւրի վերածէ ցորենը, և հացագործն ալ մեծ նեղութիւններով՝ ալիւրէն հաց թխէ ու եփէ:

Այս ատու գութն չեղած, կտաւէ վերարկուս հողայ:

Որպէս զի վերարկուսներ ունենանք ու մեր մարմինը պատասպարենք, պէտք է որ գեղջուկները կաննի մշակեն, պէտք է որ ուսպլանկները աշխատին համբերութեամբ ու ներկարսւաներն ալ ներկեն պատրաստուած կտար:

Իրիկունը՝ սուն գացած ատենս՝ մաքուր ու սալալատակուած փողոցներէ պիտի անցնիմ:

Որպէս զի այդպէս հանդատու թեամբ քաղենք, քանի

քանի գործաւորներ լեռներէն քարեր խլած են, քանի՝ քանի քարակոփներ այց քարերը յլլած են, յետոյ տակաւին ս'ըքան աւխաստարներ ծուս ծուս ճամբաները կարծած և այց քարերով գեղեցիկ փողոցներ շինած են:

Գիշերը, քնանալէ ատաջ, գիրք մը պիտի կարդամ:

Որպէս զի գրքեր ունենանք, նկոյնակներ աշխատած են, գիշերն ի բուն սքնած, իրենց միտքը յոգնեցուցած են, աշխատաւորներ թուղթը շինած են, ուրիշներ՝ գիրք ձուլած են, և գրագրներ ալ այց գրքով գիրքը կազմած են:


Այսպէս ուրեմն՝ բոլոր մարդիկ աշխատելու են ինձի համար. պէտք է որ ես ալ անոնց համար աշխատիմ:

ԲԱՌԵՐ.— ԶՅՁԵՂ՝ արտերու բերքը բազել:— Աղօրեպան, ցուղացպան՝ ցորենը ալիւրի վերածող գործաւոր:— Ուսպլանկ՝ բուրդի, բամպակի, մետաքսի կամ կանեփի թելերով կտաւ պատրաստող:— Ներկարսւ՝ ներկող:— Խլիկ՝ բունի առնել, կորզել:— Քարակոփ՝ քար տաշող:— Յղիկ՝ տաշելով շտկել:— Աւխաստար՝ աշխատող, գործաւոր:— Հարքիկ՝ շիփ շիտակ ընել:— Հեղինակ՝ գիրք պատրաստող (գրագէտ. բանաստեղծ, գիտուն եւլն.):— ՏՄՈՒՄ՝ անբուն անցընել:— Չուլիկ՝ կաղապարի մէջ թափել:— Պրագար՝ գիր շարող:

ԸՆԴԱՅՆՆԵԼԻ ԿԵՏԵՐ.— Հացագործը ի՞նչպէս հաց կը պատրաստէ:— Աղօրեպանը ո՞՞ր եւ ի՞նչպէս կ'աշխատի:— Ուսպլանկը ի՞նչ տեսակ գործիքով կ'աշխատի:— Լեռներէն ի՞նչպէս քար կը խլեն:— Քարակոփը քանի՞ տեսակ գործիք ունի:— Փողոցի մէջ ի՞նչ կը գտնուի:— Ի՞նչ է նկոյնակը:— Ի՞նչպէս կ'աշխատին գրաշարները:— Ինչո՞ւ պէտք է աշխատինք ուրիշներու համար:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅՎՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Մարդիկ՝ երջանիկ ըլլալու համար՝ պէտք է իրար սիրեն, իրարու օգնեն և փոխադարձաբար աշխատին իրարու համար:— Զին ատենները ամէն մարդ իրեն համար

կ'աշխատէր. այս պատճառաւ ընդհանրապէս դժբախտ էին:— Միակ մարդ մը չի կրնար իր բոլոր պէտքերը ճոզալ. պէտք է որ ուրիշ մարդիկ ալ իրենց գործակցին:— Այն որ ուրիշին գործակցութեան կը կարօտի, պէտք է որ ինքն ալ անոր համար աշխատի:



### 30. ՍԱՐԴՆ ՈՒ ՈՒ ՇԵՐԱՄԸ

Սարդը՝ Շերամին կ'ըսէր հեզմտեմ.  
— «Ի՞նչ դանդաղաբարձ էս զուն Աստուած իմ,  
«Եւ որքա՞ն օրեր քեզ հարկաւոր են  
«Որ դարձ մ'արտադրես: Նայէ՛, չը պարծիմ,  
«Փոքրիկ պահ մ'ինձ բաւ է՝ նուրբ անհատար  
«Թեւ իրով ոստայն հիւսակու համար»:

Շերամը բաւ.— «Լա, սակայն,  
«Դիմացկուն չէ քու ոստայն,  
«Ոչ ալ ո՛ր է բանի

«Օղտակար կամ պիտանի.  
«Քիչ կ'արտադրեմ ես, իրա՛ւ,  
«Բայց արտադրածս է միշտ բաւ»:  
(Թարգմ. Ա. ՓԱՆՈՍՅԱՆ)

ԼԸ ՊԱՅԵԻ

ԲԱՌԵՐ.— ՀեզՅՈՒՆԵՆՑ՝ ծաղրելով:— Պանդաղաբարձ՝ դանդաղ:— Հարկաւոր՝ պէտք:— Նուրբ՝ բարակ:— Անհատար՝ շատ, չհամբուոց:

ԸՆԴՊԱՅՆՆԵՒԻ ԳԷՏԵՐ.— Ի՞նչ տեսակ կենդանի է սարդը:— Ի՞նչ կ'ընէ:— Շերամը ի՞նչ տեսակ կենդանի է:— Ի՞նչ է ոստայնը.— Ո՞վ իրաւունք ունէր, սարդը թէ շերամը:— Ինչո՞ւ:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԼՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Պարծենկոտութիւնը զէշ է միտասկար ունակութիւն մըն է:— Պարծենկոտը միշտ իր աշխատութիւնը գերազանց կը կարծէ, մինչդեռ յաճախ ամէնէն անարժէքն է:— Շատ աշխատիլը չէ որ յարգի է, այլ բաւ՝ օգտակար ու բարետուր բաներու համար աշխատիլը — Աշխատութիւնը միշտ իր արդիւնքէն կը դատուի և ոչ թէ բանակէն:

### 31. ՈՍԿԻ ՄԱՏՆՈՅԸ

Ա.

Մարիամ նստած էր ճամբուն եզերքը և իր սղոթիկ կոբոք հագուստները կը կարկաէր:  
Ամէն անգամ որ մայրը զրազած ըլլար, Մարիամ կ'օգնէր անոր:  
Մինչդեռ այդպէս կ'աշխատէր, խաղաղօղ արջ մը անցուցին, և Մարիամ՝ հետաքրքրուած՝ քիչ մը տեղ արջին հետեւեցաւ անոր ծիծաղելի չարժումները զխոսելու համար:

Բայց երբ տեղը վերադարձաւ, տեսաւ որ մասնացը կրտսեամ է, և սկսաւ փնտառել:

Հարուստ տիկին մը որ ճամբուն վրայ կը պտտէր, զայն վշտացած տեսնելով՝ մօտեցաւ և բտաւ:

— Ի՞նչ կը փնտառես, աղջիկս:

— Տիկին, պատասխանեց Մարիամ, մասնացը կորսնցուցի, ան կը փնտառեմ:

Տիկինը վար ծոնցաւ և Մարիամ այնպէս կարծեց թէ զեաննն բան մը կը վերցնէ:

— Անա՛, բտա տիկինը, անոր տարով ոսկի մասնաց մը, ա՛ս, անխառնախառն այս է քու մասնացդ:

— Ո՛չ տիկին, իմ մասնացս պարզ պողպատէ էր, պատասխանեց Մարիամ:

— Շատ աղէկ, սիրունիկս, բտա տիկինը, դուն պարկեշտ աղջիկ մըն ես, չես ուզեր արնել մասնաց մը որ քեզի չի պատկանիր. ուրեմն քեզի կուտամ այս ոսկի մասնացը:

Մարիամ բոլոր սրտովը շնորհակալ եղաւ և գնաց մօրը պատմեց եղածը:

ԲԱՌԵՐ. — Հեռելի՛ Ետեէն երթալ: — Անխառնախառն կասկած կած չկայ որ: — Երե՛ց պատկանիլ՝ իրենը ըլլալ:

ԸՆԴՈՒՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ. — Մարիամ ինչո՞ւ կը կարկաէր երբօրը հազուամանրը. — Տիկինը ինչո՞ւ «մասնացը գտայ» բսելով ոսկի մասնաց մը տալ ուզեց անոր: — Մարիամ ինչո՞ւ չտտաւ: — Տիկինը ինչո՞ւ վարձարեց զայն: — Ի՞նչ է պողպատը: — Ի՞նչ տեսակ ստարկաներ կը շինուին անով: — Ի՞նչ է երկաթին և պողպատին տարբերութիւնը:

ՈՒՍՈՒՅԾՅԵՐ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Երբեք պէտք չէ ձեռք տանիլ ուրիշներու պատկանած առարկաներուն: — Այն որ սուս խօսե-

լով իրեն չպատկանած առարկայի մը կը տիրանայ՝ զողովին լըրած կ'ըլլայ: — Նոյն իսկ եթէ գետնն ձեզի չպատկանող առարկայ մը զըտնէք, պէտք է աշխատիր որ տէրը երեւան հանէր և անոր յանձնէր:

## 32. ՈՍԿԻ ՄԱՏՆՈՑԸ

(Շարունակութիւն)

Բ.

Մարիամի ոսկի մասնացին պատմութիւնը տարածուեցաւ գիւղին մէջ:

Բոլոր աղաքն ու աղջիկները գիտէին զայն: Իսրիները կը գովէին Մարիամի պարկեշտութիւնը, իսկ չարերը կը նախանձէին անկէ:

Ձապէլ մանուանդ որ անկիրթ ու ստախօս աղջիկ մըն էր, ինքզինքը կ'ուտէր:

— Ես ալ տիկինէն պարզեւ մը պիտի տանեմ, ըսաւ ինքնիրեն, և գնաց նստաւ այն ճամբուն վրայ ուր Մարիամ անոր հանդիպած էր:

Քիչ մը վերջը տեսաւ որ տիկինը կ'անցնի սպասուորի մը հետ: Անմիջապէս սկսաւ լալ ու դանդատիլ:

— Ինչո՞ւ կու բտս, հարցուց տիկինը անոր մօտենալով:

— Մասնացս կորսնցուցի, փնտառեցի ու չգտայ, հիմայ մայքս պիտի ձեռնէ գիտ:

Այն ատեն՝ բարի տիկինը զրոյաննն ոսկի մասնաց մը հանեց և Ձապէլի ցոյց տալով՝

— Ա՛ս է արդեօք քու մասնացդ, բտա:

— Ճի՛ի ճի՛շդ, տախկա է, հիմայ կորսնցուցի, պտուայ Ձապէլ:

Բայց երբ կը պատրաստուէր մասնոցը առնել,  
տիկինը քաշեց ձեռքը և սպասուհիին պատուիրեց որ  
սղուոր մը ձեռէ ստախօս աղջիկը,

Ձապէլ լալով տուն դարձաւ և ամօթէն՝ ոչ մէկուն  
պատմեց զլիսուն եկածը:

ԸՆԴԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Պատմեցէք ամբողջ պատմութիւնը:—  
Ի՞նչ տարբերութիւն կայ Մարիամին և Ձապէլին միջև:—Անոնցմէ  
որո՞ւն կ'ուզէք նմանիլ:—Ինչո՞ւ:—Ինչո՞ւ չար տղաքը նախանձե-  
ցան Մարիամէն:—Ձապէլ ինչո՞ւ իր ընկերներուն չպատմեց զլի-  
սուն եկածը:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Ստախօսութիւնը բոլոր  
գէշ ունակութեանց մայրն է:—Այն որ անգամ մը սուտ խօսիլը վար-  
ժութիւն կ'ընէ, դիւրաւ կ'իյնայ միւս մոլութեանց զիրկը:—Տղաք ա-  
մէնէն աւելի ստախօսութենէ զգուշանալու են:

### 33. Ս Տ Ա Խ Օ Ս Շ Ո Վ Ի Ի Ը

Փոքրիկ հովիւ մըն էր Միհրան,  
Որ ամէն օր դաշտին վըրան,  
Արածելու կ'երթար առտուն՝  
Հօան իր գիւղին ոչխարներուն:

Սր մը՝ նեղուած հոն միս մի՛նակ,  
Ըսաւ.— «Աղուոր խազ մը խազանք»:  
Եւ ըսկըտաւ պոտալ ուժով՝  
— «Գայլ կայ, գայլ կայ, հասէ՛ք շուտով»:

Գիւղացիներ եկան հասան,  
Ոչ գայլ գրտան, ոչ ալ գազան:



Քահ քահ խընդաց անկիրթ տրդան,  
Ըսաւ անոնց.— «Կատակ էր ան»:

Գայլեր եկան օր մը իրաւ.  
Մարդ իր ձայնին մըտիկ չըրաւ,  
Մէկը չեղաւ իրեն պաշտպան,  
Կըտոր կըտոր եղաւ Միհրան:

ՍԻՊԻԼ

ԲԱՌԵՐ.— Գազան՝ վայրի անասուն:— «Պաշտպան» պաշտպա-  
նող, օգնութեան հասնող:

ԸՆԴԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ինչո՞ւ Միհրան սուտ կը խօսէր:—Լսու-  
րան է ընկերները խօսելը:—Ինչո՞ւ:—Ինչո՞ւ ընկերները Միհրա-  
նին օգնութեան չհասան:—Եթէ գիտնային որ իրօք գայլ եկած է,  
պիտի պաշտպանէին զայն: Ի՞նչ է գազանը:—Որո՞նք են գազան-  
ները:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Ստախօսութեան մեծա-  
գոյն վնասը այն է որ երբ մարդիկ անգամ մը համոզուին մէկուն  
ստախօսութեան, այլ ևս ընաւ չեն ուզեր անոր հաւատալ. նոյն իսկ  
երբ ճշմարիտ կը խօսի:—Եւ ասիկա միշտ աղիտաբեր կը դառնայ  
ստախօսին համար:



#### 4. Կ Ա Ղ Ա Մ Ա Ի Ի Ն

Ատենօք բարի և արդար գատաւոր մը կար:  
Օր մը, անոր ներկայացան երկու երիտասարդ-  
ներ՝ Մանուկ և Արէլ:

Արէլ բաւ գատաւորին.

— Տէ՛ր, առջի տարի ճամբորդութեան պիտի ել-  
լի, չուզեցի հետատանիլ թանկացին քարերով պնուած  
մատանի մը որ մօրս յիշատակն էր. և որովհետեւ  
Մանուկ իմ քարեկանն էր, մատանին անոր սուի որ  
պահէ. հիմայ ճամբորդութենէ՛ գարձած ևմ, մատանիս  
կը պահանջեմ, բայց Մանուկ կ'ուրանայ ստամ ըլլալը:

Մանուկ ալ երդում բրաւ և բաւ.

— Տէ՛ր գատաւոր, Արէլ սուա կը խօսի. ինծի  
մատանի չառաւ բնաւ:

Այն ատեն՝ գատաւորը Արէլի գարձաւ և բաւ.

— Արէլ, վկայ մը, սպացոյց մը ունի՞ս:

— Աւա՛ղ, ս'չ պատասխանեց Արէլ. միայն կա-  
ղամախի մը կար աշխտեղ՝ որ մատանին Մանուկի  
յանձնեցի:

— Ճի՛շդ է, հարցոյց գատաւորը Մանուկին:  
Մանուկ նորէն երդում բրաւ և բաւ.

— Տէ՛ր գատաւոր, մատանիին պէս՝ կաղամախին  
ալ չեմ տեսած:

Գատաւորը պահ մը մտածելէ վերջ, բաւ.

— Արէ՛լ, գնա՛ աչգ ծառէն ճիւղ մը բեր. իսկ  
դուն Մանուկ՝ սպաւէ՛ աշխտեղ մինչև որ Արէլ վի-  
րադառնայ:

Փամ մը վերջը երբ դեռ Արէլ չէր վերադարձած,  
գատաւորը, անհամբերութեան շարժում մը ֆնելով, բ-  
սաւ.

— Մանուկ, ինչո՞ւ Արէլ աշխտան ուչացաւ. սա  
պատահանը բաց ու նայէ թէ կուգա՞յ:

— Տէ՛ր գատաւոր, բաւ Մանուկ, անկարելի է որ  
աշխտան չուտ վերադառնայ, որովհետեւ կաղամախին  
տեղը շատ հեռու է:

— Ա՛հ, ստախօս, գոչեց գատաւորը, հապա կ'ու-  
րանայիր թէ ծառը չեւ տեսած բնաւ... հիմայ որ սուտը  
բանուեցաւ, ա՛լ տարակոյս չկայ թէ մատանին իրա՛ւ  
ստամ ևս... չս'ւտ ախրոջը վերադարձուր գայն... իսկ  
քու ստախօսութեանց համար քեզ բանտ նետել պիտի  
սամ.

ԹԱՌԵՐ.— ՊՆՆՈՒԱԾ՝ զարդարուած:

ԸՆԴՊԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ի՞նչ տեսակ ծառ է կաղամախին:— Ի՞նչ  
է թանկագին քար:— Քանի՞ տեսակ թանկագին քարեր տե-  
սած էր.— Ի՞նչ է յիշատակը:— Ի՞նչ կը նշանակեն «վկայ» «սպա-  
ցոյց»:— Գատաւորը ինչո՞ւ Արէլը դրկեց որ կաղամախիի ճիւղ մը  
բերէ:— Ի՞նչ է գատաւորը:— Ինչ է Գատաւորը:

ՈՒՍՈՒՑՉԻՆ ԲԱՅՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Այն որ ուրիշը խաբէլ կ'ուզէ, յաճախ ինք կը խտրուի իր խօսքերով: — Եթէ մարդիկ իրենց ժամանակը անցընեն իրար խաբելով երբեք չեն կրնար հանդադար ապրիլ, ամէնքն ալ դժբախտ կ'ըլլան: — Ստախօսին մեծագոյն թշնամին իր խիղճն է. երբեք հանգիստ չի թողուր զինքը:



### 35. ԽԱՂՈՂԻՆ ՈՂԿՈՅՉԸ

Մուշեղ պտոյտէ մը կը դառնար, երբ ձամբուն վրայ հանդիպեցաւ իր պղտիկ քրոջ Հերմինէին:

Հերմինէի դնմքը խաղողի հիւթով ծածկուած էր. ձեռքերն ալ նոյնպէս աղտոտած էին:

Մուշեղ նստաւ խոտերուն վրայ, քոյրը քովը կանչեց և բառ.

— Հերմինէ՛ կարծեմ խաղող գոյցեր ևս:

— Ե՛ս գող, բառ. Հերմինէ՛ սրտմտ, ս'ըչափ չար ևս որ զիս գող կ'անուանես:

— Կառ ուրեմն, ի՞նչ բրբր քիչ մը առաջ:

— Անտէլին հետ խաղացինք, յետոյ խաղող կերանք:

— Որո՞ւն արդէն փրցուցիք խաղողը:

— Տիրուհի խաթունին:

— Իրմէ՛ հրամանն առա՞ծ էիք:

— Ո՛չ:

— Ուրեմն կը տեսնես որ իրաւունք ունիմ, երբոր



մէկը ուրիշի մը պատկանող ս' և է բան մը կ'առնէ տուանց ախրջմէն հրամանն խնդրելու, գողութիւնն ըրած կ'ըլլայ:

— Իայց միայն մէկ ողկոյզ փրցուցի:

— Նոյն խկ եթէ հատիկ մըն ալ փրցուցած ըլլայիր՝ գողութիւնն էր:

Հերմինէ՛ ամօքսահար մնայ:

— Գնա՛, բառ. եզրայրը. գնա՛ ներդրութիւն խնդրէ Տիրուհի խաթունէն և ուրիշ անգամ՝ առանկ բան մի բներ:

ԲԱՌԵՐ. — Մտմտիլ՝ բաղկանալ: — Ամօքսահար մնալ՝ խպնիլ ամչնալ:

ԸՆԴՊԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ. — Հերմինէ՛ զիտնալով գողութիւնն ըրաւ: — Ի՞նչպէս կազմուած է խաղողի ողկոյզ մը: — Ի՞նչ է խաղողի հիւ-

թր:—Ինչո՞ւ եղբայրը ըստ որ երթայ ներդուրթին խնորթ Տիրուհի խաթունէն:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Գողութիւնը ամէնէն ամօթալի մեղքերէն մէկն է:—Ուրիշին պատկանող ամէնէն աննշան առարկային իսկ պէտք չէ մեռք դպցնել՝ առանց տիրոջմէն հրաման առնելու:—Պատիկ բաներ զողնալու վարժուելով՝ տղար վերջ ի վերջոյ մեծ զոդեր կը դառնան:—Գողութեան վերջը բանտ ու թիարան է:

### 36. Հ Ի Ն Գ Ղ Ր Ո Ւ Շ Ն Ո Ց Ը

Յերեկ էր. Յարութիւն ճաշը բրած էր ու գպրոց կը գտնար:

Յանկարծ, ճամբուն վրայ փայլուն բան մը տեսաւ, ծնեցաւ և առաւ: Հինգ դրուշնոց մըն էր:

— Արդեօք ո՞վ կորսնցուցած է այս դրամը, մտածեց Յարութիւն:

Շուրջը նայեցաւ և տեսաւ մարդ մը որ իրմէ բաւական հետուն կը գտնուէր:

— Անշուշտ այս մարդը ձգած ըլլալու է, ըստ Յարութիւն, և սկսաւ փազել՝ անոր հասնելու համար:

Օգը տաք էր. իսկ մարդը գպրոցին հակառակ կողմը կը գիմէր: Յարութիւն պէտք է վազէր որպէսզի մարդուն հասնի, յետոյ նորէն պէտք է վազէր՝ գպրուցէն ոչ չմնալու համար: Անշուշտ պիտի յոգնէր ու բրանէր:

Յարութիւն չփարանեցաւ: Սկսաւ փազել և վերջապէս հասաւ մարդուն որ խեղճ ազգատ մըն էր:

Մարդը զարմացաւ, երբոր պարկեշտ տղան իրեն ներկայացուց քառորդը և ըստ թէ գեանէն գտած է:

Անմիջապէս գրպանները խազարկեց, հասկցաւ որ

իրն է դրամը, ուրախացաւ համբուրեց Յարութիւնը և ըստ.

— Ապրիս գուսկս, եթէ այս քատորդը վերագարձուցած չըլլայիր, ևս ու չորս գուսկներս անօթի պիտի մնայինք:

Յարութիւն քիչ մը ուշ հասաւ գպրոց:

— Ո՞ւր մնացիր, հարցուց գաստիարակը:

Այն ատեն աղնիս տղան պատմեց պատահածը: Դաստիարակն ալ շատ ուրախացաւ և Յարութիւնի վարժուէրը միւս տղոց պատմելով, ըստ.

— Տղաքս, ջանացէ՛ք որ ամէնքդ ալ Յարութիւնին պէս պարկեշտ ըլլաք:

ԲԱԳԵՐ.—Քառորդ՝ հինգ դրուշնոց (մեծիտին մէկ չորրորդ մասը):— Խուզարկել՝ փնտուել:

ԸՆԳՂԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ի՞նչ գտաւ Յարութիւն: — Պէ՞տք էր որ գտածը գրպանը դնէր:— Ինչո՞ւ:— Որո՞ւնն էր դրամը:— Եթէ Յարութիւն դրամը պահած ըլլար, ի՞նչ բրած պիտի ըլլար և ի՞նչ պիտի ըլլար նետուանքը:— Դաստիարակը ինչո՞ւ Յարութիւնը իբր օրինակ ցոյց տուաւ անոր բնկերներուն:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Դետնէն բան մը գտած ատեննիդ պէտք չէ մտածէր թէ ի՞նչպէս պահէր զայն, ալ պէտք է աշխատիք անոր տէրը գտնելու:— Մէկ դրուշ, հինգ դրուշ՝ շատ անգամ գտնողին համար մեծ բաներ չեն, բայց թերեւս չորս հինգ հոգիի՝ հացին դրամն են:



### 37. Ն Ա Ր Ի Ն Ջ Ն Ե Ր Ը

Կիրակի օր մըն էր. Պօղոս եկեղեցիէն ստան կը վերադառնար: Ճամբան հանդիպեցաւ մարդու մը՝ որ կողովներով բեռնաւորուած ձի մը կ'առաջնորդէր:

Մարդը կանգ առաւ ճաշարանի մը առջեւ և բաւ խանութին տիրոջը.

— Շիտակը փորս անօթի է, կ'ուզեմ ճաշել, բայց ձիս ի՞նչ բնեմ. մէկը չկա՞յ որ սանձէն բռնէ պահիկ մը: Ճաշարանին տէրը խկոյն Պօղոսը ցոյց տուաւ:

— Ահաւասիկ աղայ մը որ կրնայ հակել ձիուդ վրայ:

— Բայց, բաւ մարդը, կողովներուն մէջ նարինջներ կան, չըլլայ որ անոնց զպչի:

Ճաշարանին տէրը որ շատ լաւ կը ճանչնար Պօղոսը, մարդը ապահովցուց:

— Շատ պարկեշտ աղայ մըն է, կրնաս իրեն վստահիլ:

Այն ատեն՝ մարդը Պօղոսին մօտեցաւ և բաւ.

— Տղաս, եթէ լաւ հակես ձիուս վրայ, վերադարձիս քեզի նարինջ մը պիտի տամ իբր վարձատրութիւն:

Եւ ճաշարան մտաւ:

\* \* \*

Հինգ վայրկեան վերջ անկէ անցաւ Պօղոսի մէկ բնկերը, Մարդարը:

— Ի՞նչ կ'ընես հոս, ի՞նչ կայ այս կողովներուն մէջ, հարցուց Պօղոսին:

— Երկու քին մէջն ալ նարինջներ կան, բաւ Պօղոս. տէրը ճաշարան մտաւ ճաշելու և բաւ որ վերադարձին նարինջ մը պիտի տայ ինձի:

— Ի՞նչ բախտաւոր ես, բաւ Մարդար:

Յետոյ նարինջներուն նայեցաւ, տեսաւ որ շատ զեղեցիկ են, չկրցաւ զիմանալ և հատ մը տտաւ կողովին մէջէն:

— Շուտ տեղը գիր, բաւ Պօղոս, իրաւունք չունիս զպչելու:

— Զղէ՛ զուն ալ, բաւ Մարդար հեղներով, քո՞ւկը են որ տէր կ'ելլես:

Եւ կուտիի հարուած մը իջեցուց Պօղոսին:


Պօղոս սակայն տեղի չտուաւ և սկսաւ մաքատիլ Մարդարի հետ: Վերջապէս ստիպեց զայն որ նարինջը ձգէ ու փախչի:

Այդ միջոցին՝ ձիուն տէրը որ կուտին ազմուկը բաւ էր, զուրս ելաւ ճաշարանէն:

Անիկա անմիջապէս հասկեցաւ թէ ի՞նչ անցած զարձած էր, Պօղոսի մօտեցաւ, զովեց անոր պարկեշտութիւնը, և շնորհակարտութիւն յայտնելով, մէկի տեղ երկու հատ նարինջ տուաւ:

ԸՆԴԱՅՆՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ի՞նչ տեսիլ աղար էին Պօղոս և Մարդար:— Մարդարի բրածը ի՞նչ էր:— Եթէ դուք Պօղոսի տեղը բլլայիք՝ ի՞նչ պիտի ընէիք:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԵՐԸ.— Աւանդ մը միշտ նուիրական է:— Աւանդ մը աւելի լաւ պէտք է պահել՝ քան իբր սեփականութիւնը:— Պարկեշտ մարդիկ միայն կրնան լաւ աւանդապահներ ըլլալ, և ամէն զոհողութեան առջեւ չընկրկիլ, աւանդ մը անկորուստ պահելու և տիրոջը զարձնելու համար:



### 38. Պ Ա Տ Ի Ժ Ը

Հինգ վեց արգաք կը խաղային,  
 Փոքրիկն Արշակ ինչա՞ս գետին,  
 Քար մը շատ մեծ, ձգտած այնակ,  
 Ի՛նչքն արիւնեց յալուն անմեղ:

Արշակ, կուրար, բարին Արամ՝  
 Եղբայրաբար տանէր խնամ:  
 Բայց անպի՛ն՝ փոքրիկն Ատէլ՝  
 Շատ խրնդալն ըսկտաւ ծաղրել:

— «Ի՛նչ եղաւ, ի՛նչ, բա՛ւ կամայ,  
 Ի՛նչ այց գրտինչ, խի՛րց բրանած»:   
 Բայց քիչ մ'անդին Ատէլ գրտաւ  
 Իր կոչաւ ծաղրին պատիժն անբաւ:

Երբ գետ խրնդար՝ գրտրեցաւ,  
 Անպու՛նն ի վար, բզղաց մեծ դաւ,  
 Արգաք արգաք իր վի՛նակին  
 Ընաւ խրնամք, նոյ չը տարին:

— «Ի՛նչ տնիս, ի՛նչ, բսին կամայ,  
 Ի՛նչ այց գրտինչ, խի՛րց է բրանած»:   
 Ախ՛ մտնար դուք, միշտ ծաղրողին  
 Ծաղրանք անգուր կ'իջնայ բամբին:

ՐԱՍՏՐ. — Եղբայրաբար՝ եղբոր պէս — Խիբ՝ փորի ցաւ:  
 — Աճբաւ՝ շատ — Աճգուր՝ չար, զուժ չունեցող:

ԸՆԴԱՅՆՆԵԻ ԿԷՏԵՐ. — Ինչո՞ւ Ատէլը ծաղրեցին՝ կրր անպու-  
 խին ինքաւ:— Իրատնք տնէի՞ն ծաղրելու:— Ինչո՞ւ:— Ի՛նչ պէտք  
 է բնենք կրր մեր բնիկրնեկրր նեղութեան կամ դժբախտութեան  
 մէջ կրր զանախն:

ՈՒՍՈՒՅՉԻՆ ՐԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Ծաղրը չարութեան ամե-  
 նէն զէշ տեսակներէն մէկն է.— Իտխանակ հեղեղու մեր նմաններէն  
 անոնք որոնք ի ծնէ կամ արկածով դժբախտ եղած են, պէտք է աշ-  
 խատինք անոնց դժբախտութիւնը մեղմելու:— Պէտք է ծաղրել մանա-  
 ւանց խեղանդամները:— Ինչպանդամը ծաղրել, կը նշանակէ անոր  
 դժբախտութիւնը կրկնապատելը:

### 39. Մ Ե Ք Ե Ն Ա Յ Ի Ն Ա Ն Ի Ի Ը

Գրեթէ ամէն կիրակի կ'այցելէի հօրաքրոջս որ մօտակայ քաղաք մը կը բնակէր, և որուն ամուսինը բաւականայ կտաներու գործարան մը ունէր այնտեղ:

Օր մը, մինչդեռ մեքենաներու սրահը կը գտնուէինք հօրաքրոջս գաւկին հետ, հետաքրքրութիւնս գրաւեց մեքենաներուն կցուած խոչոր անիւ մը:

— Ի՞նչ խոչոր անիւ է, բսի հօրաքրոջս գաւկին՝ Օննիկի:

— Տեսնես ի՞նչ ազուոր կը գտնայ, բառ. Օննիկ: Եւ անիւը գարձուց այնքան շուտ որ ժամանակ չունեցայ անոր վրայ գրած ձեռքս քաշելու:

Երկու մատուրներուս եզունդները բռնուեցան անիւ լին ախտաներուն մէջ: Մտր ազագակ մը արձակեցի: Օննիկ՝ դող ելած՝ կեցուց անիւը և քովս վազեց: Երկու եզունդներս ձգմուտք էին և արիւնը ստատուրէն կը վազէր վերքերէն:

Օննիկ չփոթած էր ու կուրար:

— Ի՞նչ պիտի բնեմ հիմայ, կ'ըսէր, եթէ հայրս մայրս գիտնան թէ ես եմ ատոր պատճառը, ի՞նչ պիտի բնեմ իրենց:

Հասկցայ թէ չա՛տ կը ցուէր եղածին համար, և իր ցուր տեսներով՝ ես մտցայ իմ ցուս:

Օննիկ անմիջապէս գետակին քով տարաւ զիս, լուաց վերքերս, լաւ մը կապեց գտնուք, և լալով խնդրեց որ ծնողքին բան մը չըսեմ:

Ստատացայ որ չեմ բսեր, որովհետեւ վատահ էի թէ զիսմամբ չէր բրած:

Երեք շաբաթ չկրցայ ձեռքս գործածել, մինչև որ

վերքերս աղէկցան, թէև անոնց նեխք մնաց եզունդներուս վրայ:

Ամէն մարդ անանկ կարծեց թէ քար մը ինկած էր պատէն և մատուրներս վիրաւորած:

Քսան տարի անցած է անկէ ի վեր և ոչ ոք զիտէ թէ Օննիկն է այդ վերքերուն պատճառը:

ԲԱՌԵՐ.—Յամբոսիկայ՝ բաւապէ:—ԱՆԱՍՏՐԷՆ՝ շատ:—ԳԵՏԱԿ՝ պզտիկ գետ:—ԳԻՍՄԱՄԲ՝ ուղեւոր:—ՀԵՏԻ՝ նշան:

ԸՆԴՄԱՅՆԵԼԻ ԿԵՏԵՐ.—Ի՞նչ է գործարանը:—Ի՞նչ տեսակ հագուստներ կը շինեն բամբակով:—Ինչո՞ւ համար վիրաւորներեց Օննիկի և չայտնեց անոր յանցանքը:—Երբոր մատերնիդ վիրաւորուի ի՞նչ պէտք է բնէր:—Ի՞նչ է գետակը:—Անոր նմանոյ ուրիշ ջուրեր կա՞ն:—Ո՞ւրիկ կը բոցին, ո՞ւր կ'երթան:—Ի՞նչ օգուտ ունին:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅՄՏՐՈՒԹԻՒՆԵՆԵՐԸ.—Շատ անգամ մեր ընկերները մեզի չարիք կը պատճառեն առանց ուղեւոր:—Այդ պարագային պէտք է ներքեր անոնց և աշխատիներ որ մեզի պատճառած ակամայ ցաւին համար չպատժուին:—Ներողամտութիւնը շատ ազուոր յատկութիւն մըն է տղոց համար:

### 40. Ծ Ո Յ Լ Ը

Եթէ չգայ ձայն տալ իրեն  
Հոգածու մայրն իր բարի,  
Անկողնին մէջ թուրթէն՝  
Մինչև ցերեկ կ'երկարի:

Կամաց հազուի, պուտ մը ջուր  
Հազիւ արսիկ՝ գէմքին վրայ:

Պատրիարկներ գանձ զուր  
Որ գանդագի, երեբայ:

Եւ միշտ գծցո՞ւ ու մրուայլ  
Դպրոց կ'երթայ ան շատ ուշ  
Տրնարնայով ծանրախայլ,  
Կարծես սարն է մըտեր փուշ:

Հոն անհող ու անտարրեր  
Կը խօսու ըտտի շարունակ,  
Ճիգ, աշխատանք չի թափեր,  
Կը վասնէ իր ժամանակ:

ԲԱՌԵՐ.— Հոգածու՝ խնամք, հոգ տանող: — **Սրկարիլ՝**  
պառկիլ, երկննալ:—**Սրսկիլ՝** (չուրը) երեսին զարնէլ: — **Պատր-**  
**ուակ՝** պատճառ: — **Չուր՝** պարապ: — **Մուայլ՝** (փոխարեբարար)  
տխուր: — **Շանրախայլ՝** գանդագ-իթեամբ: — **Վասնիլ՝** պարապ  
անցընէլ:

ԸՆԴԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ի՞նչ է ծուլութիւնը:— Որո՞նք են ծոյլ  
տղոց պակասութիւնները:— Ինչո՞ւ պէտք է վախնալ մոլութենէ:—  
Ի՞նչ կը նշանակի «աշխատանք թափել»:— Ինչո՞ւ ծոյլը տխուր է:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅՅՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Ծուլութիւնը միայն  
ամօթի պատճառ մը չէ, այլ դժբախտութեան ազդիւր մը: Տղար իրենց  
ծուլութեան յոռի ազդեցութիւնը կը կրեն իրենց բովանդակ կեանքին  
ընթացքին.— Ծոյլերը կեանքին համ չեն առներ, որովհետեւ աշխա-  
տող, յոգնող մարդուն իրաւունքն են կեանքի վայելքներն ու անու-  
շտութիւնները:

### 41. Վ Ա Ր Դ Ե Ն Ի Ն

Պօղոս չար տղայ չէր, բայց ծոյլ էր: —  
Ինք և իր մէկ քանի բնկերները միշտ ուշ կուգա-  
յին դպրոց, երբ արդէն խիլ գուար դոցուած էր և  
աշակերաններն ալ գտաի սկսած էին:

Օր մը, մայրը բտաւ Պօղոսին.

— Պօղոս, գնա վարդենիին ջուր տուր, վերջէն կը  
չորնայ և գուն կը գրկու իս անոր գեղեցիկ ծաղիկներէն:

Պօղոս շատ կը սիրէր վարդը: Բայց ծոյլ ըլլալուն,  
անմիջապէս չգնաց մօրը պատուէրը դործադրելու:

— Ի՞նչ կ'ըլլայ, բտա ինքնիբնէ, վաղն ալ կրնամ  
ջուր տալ, մինչև և վաղը վարդենին չի չորնար:

Բայց յաջորդ ատտուն՝ սովորականին պէս ուշ կ'ըլլած  
ըլլալով, հազիւ ժամանակ ունեցաւ դպրոց վարդելու:

— Ի՞նչ կ'ըլլայ մտածեց, իրիկունն ալ կրնամ  
ջուր տալ, մինչև և իրիկուն վարդենին չի չորնար:

Սակայն իրիկունն ալ պատճառ մը գտաւ և միւս  
օրուան ձգեց վարդենին ջրելու:

Այսպէս շարունակ յետաձգելով Պօղոս կը խորհէր  
թէ մէկ օրէն միւսը վարդենին չի չորնար: Բայց մինչ-  
գետ ինք աչքպէս կը մտածէր, վարդենին ամբողջ օրեր  
ստանց ջուրի մնալով չորցաւ և Պօղոս գրկուեցաւ անոր  
գեղեցիկ ծաղիկներէն:

ԲԱՌԵՐ.— **Վարդենի՝** վարդի ծառ:

ԸՆԴԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ի՞նչ տեսակ ծառ է վարդենին:— Ուրիշ  
ի՞նչ տեսակ ծաղիկներ տեսած էր: — Նկարագրեցէր զանոնք: —  
Ի՞նչպէս պէտք է խնամել ծաղիկները:— Պօղոս ի՞նչ տեսակ տղայ  
էր:— Ինչո՞ւ չորցաւ վարդենին:— Ի՞նչ պիտի քնէիր՝ և թէ  
Պօղոսի տեղը ըլլայիր:— Ինչո՞ւ:

ՈՒՍՈՒՑԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.—Մէկ օրուան գործը ուրիշ օրուան ձգելով է որ տղաք ծուլութեան կը վարժուին:—Մուլութիւնը հիւանդութիւն չէ, զէշ սովորութիւն մըն է, եւ նոյն իսկ ծուլութեան վարժուած տղաքը, կամքի ոյժով, կրնան ազատել այդ ունակութենէն:—Ամէն բան իր ատենին պէտք է ընել:

### 42. Բ Ա Ր Ի Ս Ա Մ Ա Ր Ա Ց Ի Ն

Մարդ մը Երուսաղեմէն Երիւով կ'իջնէր, երբ գոզեր իր վրայ յարձակեցան և զինքը կողպեցելէ ու վիրաւորելէ վերջ ձգեցին փախան:

Ինկճ մարդը անօգնական մնաց այդտեղ, արիւնշուտայ վիճակի մէջ:

Յետոյ Սամարացի մը անցաւ միւսնոյն ճամբէն, և տեսնելով որ վիրաւոր մարդ մը կը դանուխայնտեղ, զթաց, անոր մօտեցաւ, վէրքերը դարմանեց ու կապեց:

Եւ որովհետեւ վիրաւորը քայելու ոյժ չունէր, իր ձիուն վրայ նստեցուց զայն և մօտակայ պանդոկ մը տանելով՝ անունց տուաւ ու սրտակեցուց՝ որպէսզի կազդուրուի:

Յաջորդ օրը, մեկնած միջոցին զրամ տուաւ պանդոկապետին և բտաւ անոր.

— Կաւ խնամէ վիրաւորը, բանէ մը մի՛ զրկեր զայն, եթէ տուած զրամէս աւելի ծախսես իրեն նա մար, վերադարձիս կը հասուցանեմ յիշի:

ԲԱՌԵՐ.—Յրուսաղէմ, Երիւով՝ Պաղեստինի բաղարներ:— Կողպեցել՝ վրան գանուածը գողնալ:— Վիրաւորել՝ ո՛ր և է զէնքով զարնել, արհնել:—Սամարացի՝ Սամարա բաղբին բնակիչ:

ներէն (Սամարա ալ Պաղեստինի մէկ բաղարն էր):—Կազդուրուի՝ առողջանալ, ուժովնալ:—Հասուցանել՝ պարտքը տալ:

ԸՆԴԱՅՆՆԵԼԻ ԿԷՏՏԵՐ.— Ի՞նչ է Երուսաղէմը:—Քահանան իր պարտականութիւնը կասարնօց:—Ի՞նչ ըրաւ Սամարացին:—Ինչո՞ւ այդպէս վարուեցան:—Վիրաւորը ի՞նչ պարտական է անոր:

ՈՒՍՈՒՑԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Իր նմաններուն օգնելը պարտք մըն է մարդոց համար. — Այն որ կրնայ օգնութեան հասնիլ պէտք ունեցողին և անտարբերութեամբ կ'անցնի կ'երթայ, ո՞նի մը գործած կ'ըլլայ:—Ուրիշին չօգնողը իրաւունք չունի իր կարգին օգնութիւն սպասելու:— Եթէ ստանայ ալ՝ գողութիւն մը կ'ըլլայ:

### 43. Ա Ն Ո Ւ Շ Ի Կ Խ Ն Զ Ո Ր Ը

Հայրն Սրբէնին այն իրիկուն  
Խրնձոր տուաւ անուշիկ.  
Մէկ հատ մըն էր, բայց սիրո՞ւն:

Այդ կողմերու ծառերուն  
Վրբան այնքան անուշիկ  
Խրնձոր չկար զես հասած:

Սրբէն՝ չուրախ ու զեղուն՝  
Ազուոր խնձորն անուշիկ  
Դրբաւ քովն իր գըրքերուն:

Կանուխ ելաւ միւս ատուն՝  
Տեսնել խրնձորն անուշիկ՝  
Կարմիր գոյնով ու ժպտուն:

Գրեկից ընկերն այն ամառն  
Ինքն ալ բարի անուշիկ,  
Հիւանդ պատկեր զպղպոջուն:

Փափաք եկաւ խեղճ աբղուն  
Ուտել խընձոր անուշիկ.  
Հեծև ու լար մինչ իրիկուն:

Բայց ծառերու ստերուն  
Վըրան խընձոր անուշիկ,  
Չըկար բընաւ, չէր հասուն:

Երբ լուր բերին իրենց առն՝  
— «Խընձո՛ր կ'ուզէ անուշիկ»:  
Ըսաւ Արսէն ոսոսուն:

«Իմն աղաւթ է, չատ սիրուն,  
«Տեսնէք որչա՛փ անուշիկ:  
«Տարէք սուէք խեղճ աբղուն,

«Թող վերջ մը տայ լացերուն,  
«Քուտ խընձորն անուշիկ.  
«Ըլլայ ատողջ ու ժրգատն»:

ՔԱՌԵՐ. — Զեղուն՝ (փոխաբերաբար) զոհ: — Գրեկից՝ զբաշխ  
— Գողպոջուն՝ զոգլալով: — Հեծել՝ սխ ու վախ ընել: — Մինչ՝ մինչ-  
չեւ: — Հասուն՝ հասունցած: — Ոսոսակալով՝ ցատկոտելով:

ԸՆԴՄԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ. — Ի՞նչ էր Արսէնին բրածը: — Ի՞նչ է ու-  
տը: — Ի՞նչ էր ի՞նչ մասեր ունի: — Ի՞նչ է հասուն պտուղը: —  
Չհասած պտուղին ի՞նչ կ'ըսեն: — Անոնցմէ ո՞րը կը նախընտրէր: —  
Ինչո՞ւ:

ՈՒՍՈՒՅՁԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Մարդկային առաքինու-  
թեանց մեծադոյններէն մէկն է նաև զո՞ոգլովութիւնը: — Այն որ ինքզին-  
քը կը զրկէ իր հաճոյքէն կամ պէտքէն և կը զոհէ իր նմաններուն  
հաճոյք առթելու կամ անոնց մէկ պէտքը լեցնելու համար, տեսակ մը  
անձնութիւն ըրած կ'ըլլայ — Շատ անգամ մեր ունեցած աւելորդը  
ուրիշի մը անհրաժեշտ պէտքը կրնայ լեցնել: — Բայց պէտք է զոհել  
զիտնանք ոչ միայն մեր աւելորդը, այլ նաև մեզի անհրաժեշտ եղածն  
ալ՝ երբ ուրիշներ աւելի ստիպողական կերպով անոր կը կարօտին:



### 44. ԱԶԱՏԱՐԱՐ ՇՈՒՆԸ

Տղոց համար գէշ ու նակաթիւն մըն է կենդանի-  
ները չարչարելը:  
Բարի տղաքը կրթեք չնչարչարել կենդանիները:

Բոլոր կենդանիներն ալ մեզի պէս իրաւունք ունին հանդիսաւ ապրելու :

Ձեզի պզտիկ պատմութիւն մը ընեմ, պիտի տեսնէք որ կենդանիները մեր կեանքն անգամ կրնան փրկել :

Ազարակապան մը Թօթօր անունով պզտիկ շուն մը ունէր :

Ամէն անգամ որ ազարակապանը անտառ կ'երթար, իր երկու գաւակները կը ձգէր հիւզակին մէջ, և Թօթօրի պաշտպանութեան կը յանձնէր զանոնք :

Թօթօր խելացի ու քաջ շուն մըն էր : Շատ անգամ ազարակապանին պզտիկ տղուն կառքը կը քաշէր ձիւ պէս :

Մնցած տարի՝ սաստիկ ձմեռ մը բրաւ : Ազարակապանին հիւզակը կիսալին ծածկուած էր ձիւնին տակ :

Ստառ մը, մինչդեռ ազարակապանը գարձեալ անտառ գացած էր իր գործով զբաղելու, կատաղի գայլ



մը մտակցաւ հիւզակին և ուզեց ներս մտնել, ազարակապանին պզտիկ տղաքը բզկեղու համար :

Բայց Թօթօր հոն էր : Թէև չգայլէն աւելի տկար էր,

սակաշն քաջաբար անոր վրայ նետուեցաւ, սկսաւ կտուրիլ ու թող չտալ որ հիւզակը մտնէ :

Միևնոյն ասուն րոյր ուժովը կը հաշէր՝ որպէս զի տէրը լա՛ ձայնը և օդնութեան հասնի :

Վերջապէս ազարակապանը լսեց անոր հաչիւնները. հասկցաւ որ Թօթօր վտանգի մէջ է, և վազելով հասաւ ձեռքը քաղաքով մը :

Երբոր հիւզակին մտակցաւ, Թօթօր այլևս ուժը կորսնցուցած էր ու պիտի յաղթուէր գայլէն :


Բայց ազարակապանը չուտ մը գայլին վրայ խայացաւ և տապարի հարուածով մը սպաննեց զայն :

Եթէ Թօթօրի քաջութիւնը չըլլար՝ ազարակապանին տղաքը բզբտուած էին :

ԲԱՌԵՐ.— ԿԻՍԱՎԻՆԳ՝ կէս մը : — ԲՂԲՅԵԿ՝ կտոր կտոր ընել : — ԳՍՉԱՐԱՐ՝ բաշտօթեամբ : — ՏԱՊԱՐ՝ կացին, փայտ կարելու յատուկ գործիք : — ԼՍՈՅԱՆՈՎ՝ յարձակիլ :

ԸՆԴՈՍՅԵՆԵԼԻ ԳԷՏԵՐ.— Ի՞նչ կերպով պէտք է վարտինը կենդանիներուն հետ : — Ի՞նչ բրաւ Թօթօր : — Ի՞նչ է ազարակը : — Ի՞նչ է ազարակապանը : — Եթէ Թօթօր չըլլար՝ ի՞նչ պիտի ըլլային ազարակապանին տղաքը : — Ի՞նչ է բնտանի կենդանին : — Ո՞րն է ամէնէն խելացին : — Ի՞նչ է անոնց օգուտը :

ՈՒՍՈՒՅՁԻՆ ԲԱՅՈՍՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Կենդանիները շատ մեծ օգուտներ կ'ընծայեն մեզի : — Առանց ատոր ալ՝ իրաւունք չունինք զանոնք չարչարելու : — Կրկնապէս անիրաւութիւն գործած կ'ըլլանք երբ չարութեամբ կը վարուինք մեզի ծառայութիւն մատուցանող կենդանիներուն հետ :



### 45. Գ Ա Ռ Ն Ո Ւ Կ Ը

Ազատոր գասնուկս իմ սիրուն,  
Եկու՛ր, ցասիկ՛ քոյս ի վեր,  
Ըստուերին սասկ ծասերուն  
Աւր կը փըչեն միտ հոյեր:

Փափուկ խտակըր գաշտին  
Քեզի բազմոց թոյ բլբան,  
Լիճին ջուրերը ցեօսին  
Տասիկներդ թո՛ղ լըսան:

Քեզի լեռնէն ու ձորէն  
Քաղեմ՝ տերեւ ու ծաղիկ,  
Արաւն բերեմ քեզ ցորեն  
Տունէն չարար ու ցասիկ:

Ծունկըս քեզի անկողին՝  
Կուրծքս բարձ՝ թեւքս վերմակ,  
Զի գոչի սրչրդ հոյին  
Չաղտտաի բուրդըդ ճերմակ:

ՍԻՊԻԼ

ԲԱՌԵՐ.—ԱՍՈՒԵՐ՝ շուր:—ՄԵՂԳ՝ թեթեւ:—ՀԵՏՈՒՆ՝ (փոխաբերաբար) անուշ:—ՆԱՍԻԿ՝ իզով տապկուած խմորեղէն (սոցալա):

ԸՆԴՈՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.—Գստնուկը ո՞ր կենդանիին ձագն է.— Երբոր մեծնայ ի՞նչ կուտայ մեզի. — Ի՞նչ են «լետ»ը, «սրտ»ը, «ղաշտ»ը, «ծոր»ը, «լիճ»ը:—Ի՞նչ է բուրդը:— Ինչև՞որ կը շինուին անով:—Անոր նմանող ինչև՞որ կան:—Ի՞նչ կը շինուին անոնցմով:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅՍՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Ընտանի կենդանիները որոնց հետ տղար շատ անգամ զէչ կը վարուին, ո՛չ միայն զբոսանրի լաւ միջոցներ կրնան դառնալ, այլ նաեւ մեծ օգուտներ կ'ընծայեն:— Լէրկերներ կան որոնց բնակիչները մի միայն կենդանիներու շնորհիւ կ'ապրին:—Շատ օգրատ ընտանիքներ ալ կենդանիներու շնորհիւ կը ճարեն իրենց ապրուստը:—Ընտանի կենդանիները բանի՛ լաւ նայուին, այնքա՛ն օգտակար կը դառնան:

### 46. Զ Ա Ր Ի Ն Պ Ա Տ Ի Ժ Ը


Ա.

Ղազարոս աշխատասէր տղայ մըն էր, բայց չէր սիրուեր ոչ իր գաստիարակէն, ոչ ալ իր ընկերներէն:

Ղազարոսի չարութիւններէն մէկն ալ սա էր որ կը սիրէր չարչարել կենդանիները: Շուն, կատու, աքլոր՝ զինքը տեսածնուն պէս կը փախչէին, որովհետեւ ամէնքն ալ կը տանջէր:

Քանի մը անգամ գաստիարակը խրատած էր Ղազարոսը:

Շատ անգամ ալ կ'ըսէր՝ զայն համոզելու համար.



—Ղազարոս, զաւակս, մի՛ դպչիր կենդանիներուն. նախ որ իրաւունք չունիս զանոնք չարչարելու, և յետոյ, կրնայ ըլլալ որ գլխուդ փորձանք բերին:

Ղազարոս մտիկ չէր ընել:


Անցած ձմեռ՝ քիչ մնաց որ գպրոցին կատուն իր աչքը հանէր: Խեղճ կենդանիին պոչը կը սեղմէր՝ երբ ձանկի հարուած մը ստացաւ. գէմքին վրայ: Բարերախտարար աչքը անմնաս մնաց:

Ատիկա սակայն դաս մը չեղաւ իրեն:

Առջի օր՝ վերջապէս պատիժը գտաւ:

Հայտարարին ձին կեցած էր իրենց տանը առջև, Ղազարոս անմիջապէս կենդանիին մօտեցաւ. և ձեռքի գնդասեղովը սկսաւ խոցել զայն:

Կենդանին իսկոյն կից մը զարկաւ, և Ղազարոս գետինը ինկաւ. արիւնլուայ գէմքով:



Հիմայ Ղազարոս բոլորովին այցանաչելի դարձած է. գէմքին վրայ շատ վէրքեր կան. և թէ բժշկուի ալ, անոնց մեքերը բնաւ չպիտի անհետանան:

Ոչ ոք մեղքցաւ Ղազարոսը:

ԲԱՌԵՐ.—Նոցել՝ վերադարձիւ.—ԱճճԱՃԱՅԵԼԻ՝ չճանչուող:— Հևս՝ նշան:

ԸՆԴՂԱՅԵԼԻ ԿԵՏԵՐ.—Ղազարոս իրաւունք ունէ՞ր կենդանիները չարչրկելու:—Ինչո՞ւ:—Ի՞նչ պէտք էր բնէր դատարարակին խրատներուն վրայ.—Ինչո՞ւ զինքը չմեղքցան:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅՍՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.—Մինակ աշխատասէր ըլլալը չի բաւեր տղայ մը սիրելի դարձնելու:—Տղար պէտք է ո՛չ միայն ուսմունքով, այլ վարքով ալ օրինակելի դառնան:—Տղար ընդհանրապէս պզտիկ կենդանիները չարչարելով կը սկսին. բայց տակաւ այդ ունակութիւնը վարժութիւն կը դառնայ. և մեծ կենդանիներուն ալ կը դպչին, առանց մտածելու որ անոնք ալ կրնան իրենց վնասել՝ ինքզինքնին պաշտպանելու համար:

### 47. Զ Ա Ր Ի Ն Պ Ա Տ Ի Ժ Ը

(Շարունակութիւն)

Բ.

Ղազարոս մասնաւորաբար կը տանջէր իրենց տան չունը, Ազօրը, որ շատ սիրուն և հաւատարիմ կենդանի մըն էր:

Եւեղճ կենդանին չէր ուզեր չարութեամբ փոխարինել Ղազարոսի զէշ վարմունքը: Ընդհակառակը, շարունակ կ'աշխատէր անոր հաճելի ըլլալ. ուրախութեան կանչերով կը դիմաւորէր զայն, սրչը խաղցնելով անոր չուրջը կը գտնար, ձեռուրները կը լղէր ու կը ցատկըտէր:

Բայց Ղազարոս նորէն ևս չէր կենար իր սիրական ունակութեան. ամէն անգամ որ առիթը կը գտնէր, կը տանջէր Ազօրը:

— Տղաս, բաւ որ մը հայրը իրեն, ինչո՞ւ կը շարահաս խեղճ անասունը, անիկա հազար ու մէկ օգուտ ունի մեզի. ո՛չ միայն բարի ու հաւատարիմ է, այլ մեր տունը կը պահպանէ գոգերու և շարագործներու զէմ. յետոյ, անասուն ըլլալով հանգերձ քեզմէ աւելի մարդկութեամբ կը վարուի. ո՛չ միայն պարտադ տեղը շարութիւն չընէր, այլ նոյն իսկ իրեն եզամ շարութիւնը բարութեամբ կը փոխարինէ. մի վշտացներ զինքը, միշտ պէտք պիտի ունենաս անոր:

Մինչդեռ հայրը կը խօսէր՝ Ղազարոս կը մտածէր.

— Շունէն զալիք օգուտը ի՞նչ պիտի ըլլայ:

Եւ կը շարունակէր իր շարութիւնը:

\* \*

Սակայն Ղազարոս իրօք պէտք ունեցաւ Ազօրին: Կիրակի օր մը՝ Ազօրը հետը տանելով՝ ծովափը դացած էր ու կ'աշխատէր կենդանին ծովը նետելու:

Անա՛նկ պատահեցաւ որ փոխանակ Ազօրին՝ ինք ծովը ինկաւ: Տարակոյտ չկար որ պիտի խեղցուէր, սրովհետեւ յոգայ չէր զիտեր:

Բայց ա՜նա հաւատարիմ չունը անմիջապէս ծովը նետուեցաւ, և Ղազարոսը հազուամենեւեմ խաճնելով՝ ծովեզերք հանեց:

Չար ազան ետապած էր վախէն:

Հայրն ու մայրը խեղճն վազեցին հասան, և զրոտարաւ կրցան սրափեցնել Ղազարոսը:

— Անիկա, բաւ հայրը, ձիուն կիցէն աւելի մեծ գաս մը թող ըլլայ քեզի. թերեւս կը խորհէիր թէ Ազօրէն ոչ մէկ օգուտ կուզայ քեզի, բայց ա՜նա ահա որ եթէ ան չըլլար՝ հիմա խեղցուած էիր:

ԲԱՌԵՐ. — Կանց՝ ազազակ. — Գիմաւորել՝ զէմը ելլել: — Ունակութիւն՝ զէշ սովորութիւն: — Չարագործ՝ շարութիւն ընող: — Մարդկութեամբ՝ մարդու պէս: — Ծովափ՝ ծովին եզերքը: — Նուազիլ՝ մարիլ: — Սրափեցնել՝ ուշրի թերեւ, արթնցնել:

ԸՆԴԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ. — Պատմեցէք ամբողջ պատմութիւնը, նախորդ մասին հետ. — Չիուն կիցը գաս եղա՞ւ Ղազարոսի: — Ի՞նչ եղաւ հետեւանքը: — Ի՞նչ կը նշանակէ «մարդկութեամբ վարուի»: — Ինչո՞ւ Ազօրի ընթացքը ձիուն կիցէն աւելի մեծ գաս մըն էր: — Ի՞նչ է ծովափը, ինչե՞ր կը գտնուին այնտեղ: — Ի՞նչ է ծովը, ի՞նչ կուտայ մեզի, ի՞նչպէս ևս ի՞նչ տեսակ բաներով կ'անցնին անոր վրայէն:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԵՆԵՐԸ. — Մի արհամարհէք ձեզմէ տկարներն ու փորբերը, միշտ կրնար պէտք ունենալ անոնց օգնութեան: — Չարութիւնը բարութեամբ փոխարինելով աւելի մեծ և աւելի ազդու պատիժ մը տուած կ'ըլլար շարերուն:

### 48. ԶԿՆՈՐՍՆ ՈՒ ՈՐՍՈՐԴԸ

Զկնորս Սիմոն չառ աղեղ մարդ մըն էր :

Օր մը, կոնակը ծանր բևս մը առած, անտառէն տուն կը վերադառնար : Ճամբան սասոյցներով ծածկուած էր և խեղճ ձկնորսը մեծ գծուարութեամբ կը յառաջանար :

Երբ որտեղ թովմասի տան մօտերը հասաւ, Սիմոն վար զբաւ բերք, որպէս զի քիչ մը յոյնութիւն տանէ :

Թովմաս տանը առաջըն էր և ու չաղբութեամբ կը գիտէր Սիմոնը :

— Ի՞նչ աղեղ մարդ, բաւ յանկարծ, ս՛ն, մարդուս գանիրը կուզայ :

— Բեկի ի՞նչ փնաս ունի աղեղութիւնս, բաւ Սիմոն՝ որ որտեղին խօսքը լսած էր. ի՞նչ գէշութիւն տեսար իմ աղեղութիւնէս :

— Այդչափ աղեղ մարդիկ չար բլլալու են չարունակեց թովմաս :

Չարութիւնը մարդուս սրտին մէջն է և ս՛չ թէ գէժքին վրայ, պատասխանեց Սիմոն :

\* \* \*

Քանի մը օր ետքը, մինչդեռ ձկնորս Սիմոն գիւնդ-րին մօտ կ'աշխատէր իր նաւակին մէջ, որտեղ թովմասի տղան գետին մօտեցաւ, փոթորիկէն կէս մը կործանած կամուրջին վրայէն գիւնաց անցնելու համար :

Թովմասի տղան չէր գիտէր թէ կամուրջը խախտւի է :

— Մի՛ անցնիր, զաւակս, բաւ Սիմոն, կը փլչի ու գետը կ'իջնաս :

Տղան կեցաւ, բայց որտեղ թովմաս՝ որ գետին միւս եզերքը կը դանուէր՝ պտայ անոր :

— Կարապետ, ականջ մի կախեր Սիմոնին և անցիր, կամուրջը բան մը չունի :

Կարապետ հետեւեցաւ հօրը խորհուրդին, բայց հազիւ քանի մը քայլ առած էր կամուրջը փլաւ :

Կարապետ խեղցուելու վտանգին մէջն էր և օղնութիւն կ'աղաղակէր :

Շաքրը չէր համարձակեր գետին մէջ նետուիլ, և վճատիկն նիչեր կ'արձակէր :

Բայց անա ձկնորս Սիմոն սառ ջուրերուն մէջ նետուեցաւ և Կարապետը աղատելով տարաւ հօրը :

Թովմաս ամօթով մնաց, միտքը բերելով այն ծանր խօսքերը զորս քանի մը օր առաջ բրած էր, անոր աղեղութիւնը ծագրելու համար :

ԲԱՌԵՐ. — ԳԻՆԵՍԳՐ՝ գետին եզերքը : — ԽԱՐԽԱՆՎ՝ փլչելու մօտ : — ՎՃՏԱՊԻՆ՝ վիշտ յայտնող : — ԱՆԻՆ՝ աղաղակ, պոռչտուր :

ԸՆԴՈՒՅՑՆԵԼԻ ԿԷՏԵՐ. — Թովմաս իրաւունք ունէ՞ր Սիմոնի աղեղութիւնը ծագրելու : — Ինչո՞ւ : — Ի՞նչ է գետը : — Սիմոն ի՞նչ բրած եղաւ՝ Թովմասի տղան փրկելով : — Ի՞նչ կը նշանակէ՝ «ականջ մի՛ կախեր» :

ՈՒՍՈՒՅՉԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Տգեղութիւնը բնական պակասութիւն մըն է, անձնական թերութիւն մը չէ : — Տգեղ պատասխանատու չէ իր տգեղութեան որ ատոր համար այլանուի : — Լաւ սիրտ մը անպատճառ գեղեցիկ մարմիններու մէջ չի գտնուիր : — Վրիժառութեան լաւագոյն եղանակը վեհանձն ներողութիւնն ու բարութիւնն է :



### 49. Մ Ա Ն Ի Շ Ա Կ Ը

Սիրուն մանիշակ, արդեօք ինչո՞ւ դուն  
Այգսկա նովսին մէջ կը ծաղկիս հետուն,  
Տերևներուն մէջ ինչո՞ւ պահուրտիս  
Աւ հրպարս ծաղկանց կարգէն կը փախչիս:

Բայց չրկնա՛յ ծաղիկ, երբ կը քաղենք քեզ,  
Աւելի անուշ բուրմուկ կ'արձակես՝  
Քան շատ ծաղիկներ սրունք պրկնուիս  
ձոխ արցուզարդով փայլով թանկագին.

Եւ համեստութեան դուն պատկերն իսկ ես,  
Անոր պէս պարզուկ աղբիլ կը սիրես,  
Եւ երբ արժանիքդ ի վեր կը հանեն,  
«Շնորհակալ եմ», մընջես նեղօրէն:

Ք. Յ. ՎԱՅՍ

ԲԱՍՏՐ. — Հովիտ՝ խոր տեղ: — ԶԲՆԱՊ՝ գեղեցիկ, աղուոր: —  
ԲՈՒՐՄՈՒՆԻՔ՝ հոտ: — ՊԿՆՈՒԽԻՂ՝ զարդարուիլ: — ՃՈՒՍ՝ հարուստ: —  
ՀԵՂՈՒԿ՝ փափկութեամբ, համեստութեամբ:

ԲՆԻՔԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ. — Ի՞նչ տեսակ ծաղիկ է մանիշակը: — Ի՞նչ  
յատկութիւն կը վերագրենք անոր: — Ի՞նչ է արցուզարդը: — Ի՞նչ  
տեսակ արցուզարդ պէտք է ընել: — Ի՞նչ կը նշանակէ «արժանիքը  
ի վեր հանեն»:

ՈՒՍՈՒՑՁԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Համեստութիւնը պարտա-  
կանութիւն մըն է, այն որ այդ պարտէն կը թերանայ՝ իրեն կը  
վնասէ: — Լաւագոյն արժանիքն իսկ աւելի ցայտուն կը դառնայ հա-  
մեստութեամբ քան զոռորութեամբ, հպարտութեամբ: — Ընդհակառակը՝  
հպարտութիւնը կը նսեմացնէ զայն: — Պէտք է որ մենք զովէնք մեր  
յատկութիւնները կամ մեր կարողութիւնը, այլ սկտր է թողունք որ  
ուրիշներ մեզ գնահատեն:

### 50. Խ Ա Ղ Ա Լ Ի Ք Ն Ե Ր Ը

Գեկուեմբեր ամիսն էր, շատ ցուրտ կ'ընէր, սու-  
ներն ու ճամբաները ձիւնով ծածկուած էին:

Աղաւնի՛ իր սենեակին պատուհանին առջև կե-  
ցած, փողօցը կը դիտէր, երբ մայրը ներս մտաւ և  
նստաւ առքուկ վառարանին առջև:

Աղաւնի անմիջապէս մօրը քով դնաց:

— Մայր, բաւ, շատ ցուրտ կ'ընէ այսօր. խեղճ  
թոչունները արդեօք որչա՞փ կը մսին. այսօր քիչ մը  
աւելի հացի փշրանք պիտի նետամ անոնց:

— Շատ աղէկ մտածեր ես, աղջիկս, բաւ մայրը,  
բայց թոչուններէն աւելի զթութեան կարօտ արարած-  
ներ կան, անոնց վրայ ալ մտածելու ես:

— Որո՞նք են, հարցուց Աղաւնի:

Սղքատ տղաքը. անոնք ո՛չ քեզի պէս աղուոր կե-  
րակութիւն ունին, ոչ հագուստ, ոչ ալ խաղալիք.  
Կ'ուզե՞ս որ այսօր քեզի հետ անոնցմէ մէկ քանիին  
այցիկենք:

— Օ՛հ, այո՛, մայր, դուցեց Աղաւնի:

Երկու ժամ վերջ՝ Աղաւնի և իր մայրը դուրս  
կրան ու շատ մը կարօտ ընտանիքներու այցիկեցին:

Աղաւնի շատ յուզուեցաւ այդ ընտանիքներու թշուառութիւնը տեսնելով, և իր քսակին մէջ գրտնուած գրամը անոնց բամբակեց:

Ինքի ազջիկը գրամը չէր սիրեր, ատոր համար՝ շատ դիւրաւ գտաւ ողորմութեան այդ եղանակը:

Դիտած էր մանաւանդ որ իր այցելած տղաքը բնաւ խաղալիք չունէին:

Երբոր տուն վերադարձան, Աղաւնի ծրարեց իր ամէնէն աղուոր խաղալիքները և մօրմէն արտօնութիւն ուղեց զանոնք աղքատ տղոց զրկելու համար:

Մայրը զարմացաւ, հարցուց թէ ինչո՞ւ իր ամէնէն աղուոր խաղալիքները զրկել կ'ուզէ:


—Մա՛յր, պատասխանեց Աղաւնի, այսօր հասկցայ որ ճշմարտապէս ողորմած ըլլալու համար պէտք է ինքզինքը զրկել:

Մայրը շատ ուրախացաւ այս պատասխանէն և կարողին համբուրեց Աղաւնին:

ԲԱՌԵՐ.—Կարողին՝ սիրով:

ԸՆԴՈՒՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.—Ի՞նչ տեսակ ընտանիքի զաւակ էր Աղաւնի:—Ի՞նչ տեսակ աղջիկ էր:—Ինչո՞ւ յուզուեցաւ աղքատ ընտանիքներու այցելած ատենը:—Ինչո՞ւ համար իր խաղալիքներուն ամէնէն աղուորները զրկեց աղքատ տղոց:—Ինչո՞ւ մայրը ուրախացաւ:—Դուք ալ անոր պէս պիտի վարուէի՞ք:—Ինչո՞ւ:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.—Ձրկել չ'ինքզինքը՝ ողորմելու համար, բարիքի լաւագոյն տեսակն է:—Ատոր մէջն է մանաւանդ բարեգործութեան ճշմարիտ հանոյրը:



51. Ե Չ Ո Ւ Ձ Ի

Անձնատէր ձին  
կեղծուկ եղին  
Այսպէս կ'ըսէր.  
—Ես միշտ իմ տէր  
Շարկած տանիմ  
Դաշտ ու գեղեր.  
Փառք շատ ունիմ,  
Թող քեզ համբն  
Ձիրքերս ամէն.

Իսկ դուն ի՞նչ ես, եղի՛կ տկար,  
Ի՞նչ ունիս դուն ձիւք օդաակար,  
Շատ շատ՝ արտեր վարել չ'երկել,  
Յետոյ ակտո գալ ու նիւնել:

—«Սակայն այդ իմ աշխատութիւն  
Եթէ չըլլայ, քու տէրն ու դուն  
Հասա ինչո՞վ պիտի սպրիք,  
Ո՞վ անձնատէր ձի անխելիկ»:

Եղն այսպէս  
Պատասխանեց.  
Ձին բռնս՝  
Լեզուն քաշեց:

ՎԱՐԴԱՆ ԱՌԱՎԱԳԻՐ

ԲԱՌԵՐ.—ՁԻՐԲ՝ յատկութիւն, բարեմասնութիւն: — ՆՊԻՆԵԼԻ՝  
բնանալ: — ԱՆԵԼԻՐԻՔԻ՝ անխելք:

ԸՆԳՈՍՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.—Ի՞նչ է անմասիրութիւնը:—Ի՞նչ է անար հավաղարձ յատկութիւնը:—Ձին իրատունք ունէ՞ր եզր արհամարհելու:—Ինչու:—Ի՞նչ է «վարել ներկի»-ը:—Եթէ եզին աշխատութիւնը չըլլար՝ ի՞նչ պիտի ըլլային ձին ու իր տէրը:—Ի՞նչ կը նշանակէ «լեզուն քաշել»:

ՈՒՍՈՒՑՁԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.—Անձնատէրը միշտ իր անով կը հետաքրքրուի, և այդ պատճառաւ իսկ ո՛չ այլատէր կրնամ ըլլալ, ոչ ներդա՛սիտ, ոչ զթոտ, վերջապէս ոչ մէկ առաքինութիւն կրնայ ունենալ:—Ճշմարիտ արժանիք ունեցողները երբեք իրենց վրայ չեն խօսիր, կը թողուն որ ուրիշները զովեն իրենց կարողութիւնն ու բարեմասնութիւնները:

52. Բ Ա Ր Կ Ա Ս Ի Ր Տ Տ Ղ Ա Ն

Լեւոն բարկասիրտ տղայ մըն էր:

Պզտիկ պատճառ մը կը բաւէր որ բարկանայ, պուսայ, ստուրները գետին գարնէ:

Պէտք էր տեսնել թէ որքա՛ն տղեց ու անկամայ կը դառնար այդպէս բարկացած ստուներ:

Փանի քանի անգամ գատախարակը իրեն խորհուրդ

տուտ որ խօսու այդ գէշ վարմունքը, բայց Լեւոն մտիկ չըրաւ:

Շատ անգամ այնչա՛փ կը բարկանար որ կուրար, երբեմն ալ իր բնկերակիցները կը ձեռներ:



Ասոր համար զինքը չէին սիրեր զպրոցին մէջ:

Ընկերները սխառն հետ վախչել իրմէ:

Դուրսը, զրօսանքի միջոցին ալ, միշտ մինակ կը մնար:

Այս պատճառաւ Լեւոն միշտ սխուր էր, մինչդեռ իր բնկերակիցները ուրախ դուարթ կը խաղային իրարու հետ և հաճոյքով կ'անցընէին իրենց զրօսանքի ժամերը:

Դատախարակն ալ սխառն էր չսիրել Լեւոնը, որովհետեւ բարկացող տղայքը միեւնոյն սասնն անհնազանդ ալ կ'ըլլան:

Եւ անհնազանդ տղայքը երբեք չեն սիրուիր իրենց գատախարակէն, ինչպէս չեն սիրուիր արդէն իրենց ծնողքէն:

ԲԱՌԵՐ. — Բարկասիրտ՝ բարկացող: — ԱՆԿԱՄՈՅ՝ գէշ երեցող:

ԸՆԳՈՍՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.—Ի՞նչ տեսակ տղայ է Լեւոն:—Բարկութիւնը ինչու՞ գէշ է:—Ընկերները իրատունք ունէ՞ին իրմէ նեոտ վախչելու:—Ինչու:— Դատախարակին համակրութիւնը չվայելող տղայքը ի՞նչ կը կրօնցնեն:

ՈՒՍՈՒՑՁԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Բարկութիւնը մեծ թեբուքիւն մըն է մարդոց համար, և շատ չժքխտութեանց ու չարիքի պատճառ կը դառնայ:—Բարկասիրտ մարդիկը չեն կրնար բնաւ ար-

դար ըլլալ, որովհետեւ չեն կրնար դատողութեամբ գործել: — Միշտ պէտք է ներողամտութեամբ վարուիլ իր ընկերներուն հետ, համբերող ըլլալ և անուշութեամբ ուղղել անոնց թերութիւնները, ի հարկին դատարակին զիմելով և անոր միջատութիւնը խնդրելով:

### 53. Վ Ա Ր Դ Ո Ւ Շ Ի

Վարդունի պղտիկ աղջիկ մ'էր սիրուն  
Եւ միշտ կ'ողորմէր ինձ ազքատներուն:  
Ատառ մը կանուխ՝ երբ դպրոց կ'երթար.  
Տեսաւ ձերուկ մը որ անպատասխար՝  
Անկիւն մը կեցած ձեռք կ'երկնցնէր:  
Միտքը ինկաւ որ տասնոց մը ունէր:  
Փնտտեց գրպանը՝ կարմիր գոգնոցին,  
Բայց ո՞ւր էր, չկար հետքը տասնոցին:  
Միտքը ցաւեցաւ փափուկ աղջրկան,  
Այտերը մէյմէկ կարմիր վարդ դարձան:  
Ի՞նչ ընէր հիմայ: Իր պղտիկ խելքով  
Կը նզկեք գանձել ելք մը ապանով:  
Յիշեց հայրիկը որ ամէն գիշեր  
Տասնոց մը տալով համբոյր կը քաղէր  
Իր անուշաբոյր այտերէն՝ խնձոր:  
Իսկոյն մօտեցաւ ու գոչեց շրլմուր.  
— «Ա՛խ, ազքատ պատա՛ տասնոցս չկայ,  
Ինզի՛ ալ պաշտիկ մը տամ նէ կ'ըլլա՞յ...»:  
Յ.

ԲԱՌԵՐ.— Հէ՛ք՝ խեղճ, թշուառ: — Անպատասխար՝ տուն՝ տեղ  
տունեցող:— Ըզնիլ՝ աշխատիլ:— Սլի՛ք՝ միջոց, հնարք: — Անուշա-  
բոյր՝ անուշ հոտող:— Շլմուր՝ շփոթած:

ԸՆԴԱՅՆՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Բացատրեցէք թէ ի՞նչ էր Վարդունիին  
ունեցած զգացումը.— Ինչո՞ւ մտաբաններուն նամար «ձեռք  
կ'երկնցնեն» կ'ըսենք.— Ի՞նչ կը նշանակէ այտերը կարմիր վար  
դարձանս:— Ինչո՞ւ «խնձոր այտ» կ'ըսենք:

ՈՒՍՈՒՑՁԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Գթալ և ողորմիլ՝ տար-  
բեր բաներ են:— Մարդիկ կան որ կ'ողորմին առանց գթալու: — Ու-  
րիշներ՝ չեն կրնար ողորմիլ, թէև կը գթան: — Ճշմարիտ ողորմու-  
թիւնը պէտք է գութի զգացումէն ծնի, անոր արդիւնքը բլլայ:— Պէտք  
է նախ գթալ, յետոյ ողորմիլ:— Որչափ ալ բիշ ունենանք, միշտ բան  
մը կրնանք տալ անոնց որոնք մեզմէ բիշ ունին:— Շատ անգամ անուշ  
խօսք մը աւելի բարիք կ'ընծայէ քան դրամը:



### 54. Տ Ղ Ո Ց Տ Օ Ն Ե Ր Ը

Հիմայ, այս պահուս ձեր վրայ կը մտածեմ, պղտիկ  
սիրելիներս, մինիմինի հրեշտակներս: Տղոց սօները  
կը մօտենան: Կապանոցը ձերն է, հապա Մ'նա՛ւնոցը. ո՞հ,  
անխիա որչա՛փ կ'ուրախացնէ ազգքը, երբ պիտանան որ

Յիսուս ալ պղտիկ պէպէք մը կգաւ ու խանձարուրի մը մէջ փաթթուելով օրբանին մէջ գրուեցաւ :

Եզրայր քոյր չունէր Յիսուս պէպէքը որ գինքը օրբէին. մինակ մայրը կար քոյր, Սուրբ Աստուածածինը, որ գաւկին օրբանին մօտ նստած՝ սուքոյր գոյն կ'օրբէր, ու ձեռքովն ալ կար կը կարէր ապրուելու համար :

Եկեղեցին այս ասուերու յիշատակներն է որ պիտի կատարէ մօտ ասանէն, բոլոր ջանքերը պիտի փասեն, քահանաները պիտի զգեստաւորուին, զպիւր սպաք ոսկերեկ բանուած շապիկներ պիտի հագնին. հայրիկները, մայրիկները եկեղեցի պիտի երթան, նոր լաթ՝ նոր կօշիկ պիտի հագնիք, պատուհներով լեցուն կազանցի սեղաններուն չորս կողմը պիտի գասնաք, պիտի ուտէք, պիտի խմէք, պիտի ցատկաւէք ու ձեր ծնողքին ձեռքերը պիտի համբուրէք :

Իբրաւ որ շատ անուշ օրեր են կազանցն ու Մեանսգրէ : Ազրարիկը՝ պղտիկ ձի մը պիտի գնէ ձեզի. Աւաչը՝ գլխարկով մարդ մը որ շարունակ կը գասնայ. հայրիկը չոցեկաւք մը, և գետ ինչէ՛ր, ինչէ՛ր... այնպէս որ հայրիկներն անպամ պէպէք բլլալ կ'ուզեն այց օրերուն :

\* \* \*

Ինչոյ, պղտիկ բարեկամներս, կը կարծէք որ ամէն ազայ ալ ձեզի չափ երջանիկ բլլայ, իրեն նուէր բերոց, պատու գնուց, անուշեղէն եփոց ազրարիկ մը, հայրիկ և մայրիկ ունենայ :

Գուք արցէն գիտէք որ ձեր զրացիներուն, ձեր զբոսորդի բնակիչներուն մէջ պղտիկ օրբեր կան որոնք զբոսորդներուն ևն այց ամէնէն : Եւ երբ գուք ձեր նոր հագուստներով, խաղալիքներով ու պատուհներով՝ կազանցի սաստուն՝ մաթնուլուսուն զպրոց կ'երթաք ձեր ու-

սուցչին ձեռքը պագնելու և նուէր մըն ալ անկէ ստանելու, անոնք իրենց վիզը ծոած «ա՛խ» պիտի քաշեն՝ ձեզի պէս բլլալու համար :

Եթէ զխանայիք որ անոնց համար որչա՛փ մեծ արժէք ունին հայր մը, մայր մը, կամ իրենց վրայ զուրգուրացող ազգական մը, այն ասան աւելի սիրով պիտի սլլուէիք ձեր ծնողքին, անաստակութիւն չպիտի բնէիք, սիրտ չպիտի հատցնէիք, փողոցները չպիտի խաղայիք : Եւ սասաւ իրիկուն, աւելի պիտի աղօթէիք Աստուծոյ՝ երկար կեանք և զործի քաջազութիւն խնդրելով ձեր բարեբաւերուն համար :

Գիտե՛մ որ բարի աղաք էք գուք, և երբ այնչափ խաղալիքներով, պատուհներով ու բարեխներով ուրախանաք, չէք կրնար զիմանալ որ ձեր տարիքը կողոներէն շատեր անպին սրտերնին կտարած, արտու՛մ արխուր մամտան :

Ձեզ տեսնե՛մ, պղտիկ բարեկամներս, մի՛ մտնաք օրբերն ու բոլոր չունեցողները, և ձեր անեցածէն քիչ մը բան սուէք անոնց :

ԲԱՍԻՄ

ԲԱՍԻՄ.— Խանձարուր՝ լաթի հագուստ որուն մէջ կը փաթթեն նոր ծնած ազարը :— ՕՐԲԱՆ՝ օրբոց :— ԶԳԵՍԱՄԱՐՈՒԻ՛՝ հագուստները հագնիլ :— ԳՍԻՐ ԵՂԱՅ՝ ձայնաւոր :— ՈՍԿԵՐԵԿ՝ ոսկի թելերով (սըրմա) :— ԲՆԱՍՅ՝ բրոջ ամուսին :— ԳՆԵԿ՝ ծախու առնել :— ԳՈՐԳՈՒՐԱՅ՝ սիրելի, հոգ տանիլ :— ԲԱՐԵԲԱՐ՝ բարիք ընող :— ԲԱՐԻԹ՝ աղկութիւն :

ԲՆԵՒՍՅՆԵԼԻ ԿԼՏԵՐ.— Արտնր են տարասն մեծագոյն ստները :— Բնչո՛ւ համար կը տօնէք այց օրբեր :— Բ՛նչ է որբը :— Բ՛նչ կերպով պէտք է վարուինք անոնց հետ :

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅՍՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ — Պատր է որ ամէն ժարդ մեր եզրայրը նկատենք, և իբր այդ սիրենք զայն ու օրհներ անոր՝ — Մաննաւորարար պէտք է սիրենք ու հոգանք որքեքը որոնք կըրկնապէս զրկուածներ են, զրկուած ծնողքէ, զրկուած այն բազմատեսակ բարիքներէն զորս միայն ծնողք կրնան հայթայթել տղոց: — Յի սուս ալ իրեքասիրութեան զերագոյն օրինակը եղաւ:

### 55. ԵՔԷ ՊԱՐԻԿ ԸԼԼԱՅԻ ԵՍ

Երկու աղջիկ կը խօսէին իրարու հետ:  
Մէկը կ'ըսէր. — «ԵՔԷ պարիկ բլլայի ես,  
Իմ տանա մէջ կ'ունենայի գոհար, բեհէզ,  
Շրջապղտաններ ժանեակներով մեհախաւեհ,  
Խաղալիքներ և նուշիկներ, միրգեր պէսպիս,  
ԵՔԷ պարիկ բլլայի ես»:

— «Ես ալ բաւ. բնկերուհին իր դեռասի,  
Շատ կը սիրեմ խաղալ, խնդալ, պերճանք՝ հանդէս:  
Բայց տեսնէի երբ պղտիկ մը ազբաս ու հեզ  
Որ կը մտի բաղիկ ու մերկ ու անօթի,  
Ինչ որ ունիմ պիտի տայի անոր սրտէս,  
ԵՔԷ պարիկ բլլայի ես»:

(Հետևողութիւն)

ՍԻՊԻԼ

ԲԱՌԵՐ. — Մեհախաւեհ՝ մետաքսէ: — 'Պէսպիս' տեսակ տեսակ: — 'Նեռասի' պղտիկ տարիքով:

ԸՆԴՊԱՅՆՆԵԼԻ ԿԷՏԵՐ. — Ի՞նչ է պարիկը. — Ի՞նչ է գոհարը. — Բանի՞ տեսակ գոհար կայ: — Բեհէզը ի՞նչ է. — Երկու աղջիկներէն որո՞ւն պէս պիտի ուզէր ընել: — Ինչո՞ւ:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅՍՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ — Առանց միջոցը ունենալու բարիք ընելու տենչալն ալ բարեգործութիւն է: — Այդ տենչանքը, նոյն իսկ եթէ չընճանայ ուլ, կրկին ուրիշ շատ ազնիւ զղացումներու յայտնութեան կը նպաստէ:



### 56. Մ Ե Մ Ժ Ա Մ Ա Յ Ո Յ Ց Ը

Զատիկը մօտեցած էր, նուարդ և Անովել շատ ուրախ էին, որովհետև հայրիկներն խոտապած էր նովնոր հացուտաներ գնել իրենց համար:

Աւագ չարաթը տակաւին չէր սկսած, որ մը երկու քոյրեր միեակ մնացած էին տան մէջ.

Մայրերնին գրայիլի մը տուն գացած էր, պատուիրելով որ պարտէզը կենան և իրենց խաղալիքներէն գատ ուրիշ բանի չզոյջին:

Բայց երկու չարաձճի աղջիկները մտցան իրենց մօրը պատուէրը:

Գանձ. Տարր.

Քիչ մը տանն իրենց խաղալիքներով զրօսնելէ վերջ, տուն մտան և ուղեցին աւելի մօտէն դիտել սրահին մեծ ժամացոյցը որ շատ զեղեցիկ ու թանկագին զարդ մըն էր:

Երկու անհնազանդները միայն դիտելով չզոհացան. ուղեցին վերցնել ժամացոյցը և նայիլ թէ ինչ կայ տակը:

Եւ անա թանկագին ժամացոյցը ինկաւ ձեռքերնուն, կտոր կտոր եղաւ:

Ճիշդ այդ միջոցին հայրերնին տուն զարձաւ և վեր ելլելով տեսաւ եղածը:

Բարի մարդ մըն էր թէև, բայց շատ ցաւեցաւ որ սոցոց անհնազանդութեան պատճառաւ այդ ստտիճան զեղեցիկ ու թանկագին առարկայէ մը զրկուած են:

Ուղեց որ դաս մը տայ անոնց, և բտաւ:

— Որպէս զի հասկնաք թէ զէշ բան մը ըրիք մայրիկին անհնազանդ գտնուելով, այս Չատիկին ձեզի նոր հազուատ չպիտի առնեմ, և ձեր հոգուստին զրամով ուրիշ ժամացոյց մը պիտի գնեմ:

Իբրաւ ալ՝ այն Չատիկին նուարդ և Անմէլ նոր հազուատ չունեցան ու չկրցան իրենց ընկերներուն հետ վայելիլ Չատիկեան զրօսանքներու հաճոյքը:

ԸՆԴՈՒՅՑՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ի՞նչ գէշ բնատրութիւն ունէին նուարդ և Անմէլ:— Ի՞նչ կըրա հետեւանքը:— Ի՞նչ է Աւագ շարաքը:— Ի՞նչ է Չատիկը:— Ի՞նչ տեսակ առարկայ է ժամացոյցը:— Քանի՞ տեսակ ժամացոյց գիտէք:

ՈՒՍՈՒՅՑՉԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Տղար պէտք է միայն իրենց սեփական առարկաներով ու խաղալիքներով զրօսնուն:— Արգիլուած բաներու հետ խաղալով ո՛չ միայն մեծ վնասներու տեղի կուտան, այլ նաև վտանգի կ'ենթարկեն իրենց անձը, օրինակ ապակիի, դանակի և ուրիշ վտանգաւոր առարկաներու հետ խաղալով:

### 59. Գ Ե Ղ Ա Մ Ի Մ Ա Շ Ը

Վարպետ Թովմաս շատ կարող երկաթագործ մըն էր, բայց ձերացած ըլլալուն՝ ա՛լ չէր կրնար աշխատիլ: Միայն, ցուպը ձեռքը, ստոյտի կ'ելլէր ամէն օր, և որովհետև շատ ապրած ու շատ բան տեսած էր, կր



սիրէր սղաքը զրուխը հաւամկ և բաւ խրատներ տալ անոնց:

Օր մը, մինչդեռ կը խօսէին, մեռել մը անցուցին անոնց մօտէն: Մեռնողը պզտիկ տղայ մըն էր, Գեղամը:

— Գիտէ՞ք թէ Գեղամը ինչպէս մեռաւ, հարցուց վարպետ Թովմաս:

Տղաքը չէին գիտեր:

— Կեցէք որ պատմեմ, բտա վարպետ Թովմաս:

Եւ անա թէ ի՞նչ պատմեց.

— Գեղամը անառակ տղայ չէր, բայց զէշ սովորութիւն մը ունէր. շատ կը սիրէր ծառերու վրայ մա-

գրիցիլ՝ թռչուններու թռչնը Բանդիլու, կամ խեղճ ձա-  
յուկները իրենց մօրմէն բամներու համար:

«Բանի քանի անգամ զինքը յանդիմանեցի, բայց  
խօսք մտիկ չէր ընէր:

«Շատ օրեր՝ պտոյտի ելած ատենս, զինքը ան-  
պատճառ ծառի մը վրայ կը սեանէի, և կ'ըսէի իրեն.

«— Գեղամ, զաւակս, վտանգաւոր բան է ըրածդ:  
Պղտիկ տղաքը պէտք չէ որ ծառերու վրայ ելլին, օր  
մը փորձանք մը պիտի դայ զլիսուդ:

«Կարծես թէ իրեն չէր ըսածս:

«Առջի օր՝ քրոջը հետ դաշտ կ'երթայ, և բարձր  
ծառի մը վրայ թռչն մը սեանելով, անմիջապէս ծառին  
կը պլուրի ու վեր կ'ելլէ: Յետոյ, ճիւղի մը վրայ կո-  
խելով, կ'աշխատի թռչնը ձեռք ձգել:

«Գծրախտաբար ճիւղը փտած ըլլալով կը կտորի և  
Գեղամ ահագին բարձրութենէ մը պետին կ'իջնայ ու  
կը մնայ այնտեղ աբիւնուայ:

«Քոյրը կը սկսի պտուղ: Մօտը դանուոցներ օղ-  
նութեան կը փութան, կ'ատնեն սուն կը տանին Գե-  
ղամը և բժիշկ կը կանչեն,

«Բայց օգուտ չընէր: Գեղամի վէրքերը ծանր էին:

«Ասոր համար մեծա Գեղամ, սուգի և ցաւի մէջ  
ձգելով իր ծնողքը՝ որոնք այնքան տառապանք քա-  
շած էին զինքը մեծցնելու և կրթելու համար:

ԱՒԻՆԲ. — Կարող՝ վարպետ, լաւ շինող:— Հաւաքի՛լ՝ ժողով:  
— Մազիցիլ՝ շուրջակալ վեր ելլել — Կանդիլ՝ արշակել:— Արիւն-  
լուայ՝ արիւնի մէջ:— Փութալ՝ աճապարել:

ԲՆԴԱՅՆԵԼԻ ԿԵՏԵՐ. — Ինչո՞ւ վտանգաւոր է ծառերու վրայ  
մազիցիլ:— Ի՞նչ պիտի ըլլար՝ եթէ Գեղամ հետեւէր վարպետ թով-  
մասի խրատներուն:— Տղաք պէ՞տք է որ դպցին թռչուններու

թռչններուն և ճագրակներուն: Ինչո՞ւ: Ինչո՞ւ Գեղամի ծնողքը  
ցաւ ու վիշտ զգացին իր մահուան համար:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅՆՏՐՈՒԹԻՒՆԵՐԸ.— Տղաք զրօսանքի և զուար-  
ձութեան շատ առիթներ ունին:— Պէտք չունին ուրեմն վտանգաւոր  
բաներով անցընելու իրենց զրօսանքի ժամանակը:— Գեղամ ամէն  
բանէ առաջ անհնազանդութեան դո՞ւ մըն է:— Տղոց համար բախտ մըն  
է վարպետ թովմասի պէս խորհրդատու մը:— Չօգտուիլ այդ սեռակ  
խորհրդատուներէ՛ կը նշանակէ իր սեփական բախտը ոտնահարել.

### 58. Խ Ա Կ Պ Տ Ո Ւ Ղ Ն Ե Ր Ը

Մինասի որկրամուրումիւնը ատակի կարգ անցած  
էր զպրօցին մէջ:

Բոլոր տղաքը զիտէին թէ Մինաս պէտք եղածէն  
շատ կ'ուտէր միշտ, և թէ ասոր համար չարունակ  
անհանգիստ կ'ըլլար:

Նոյն իսկ քանի մը անգամ Մինաս հիւանդ ալ  
պատկած էր իր որկրամուրումեան պատճառս:

Ուրիշ բան մըն ալ կար սակայն զոր չէին զիտեր  
զպրօցին մէջ:

Մինաս այնքան անյապ էր որ երբ մայրը պտուղ  
չէր տար իրեն, կ'երթար գրացիներու պարտեղը, և  
պիտանաւ ծառերու վրայ մազիցիլով պտուղները կը  
փրցնէր ու կ'ուտէր:

Անգամ մը, մինչդեռ այսպէս ծառի մը վրայ և  
լած էր, հայրը սեռաւ զինքը և լաւ մը պատմեց:

— Տղաս, ըստ անոր, այդ բրածոյ ո՛չ միայն գո-  
ղութիւն է, այլ նաև շատ վտանգաւոր բան մը. արեւին

տակ տաքցած, փոշխով ծածկուած ու տակաւին խակ պտուղները շատ ծանր հիւանդութեան պատճառ կը դառնան:

Հայրիկին խրատները օգուտ չունեցան, որովհետեւ Մինաս ասջի օր նորէն սալորեկի մը վրայ ելած և շատ մը խակ ու ադտոտ սալորներ կերած էր:

Հեռուանքը սա եղաւ որ Մինաս այսօր անկողին ինկած է:

Ինչո՞հայրիկը, զաւկին հիւանդութիւնը բուժելու համար, բժիշկի և զեղի դրամ կուտայ շարունակ:

Յայտնի չէ որ Մինաս պիտի կրնա՞յ բժշկուիլ:

**ԲԱՌԵՐ.— Աճյազ՝** չկտացող:— **Պաղասու՝** պտուղ տուող:— **Խակ՝** չհասած:— **Սալորեկի՝** սարբի ծառ:— **Մուժիկ՝** աղէկցնել:

**ԸՆԴԱՅՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.—** Մինաս ինչո՞ւ ծառերուն վրայէն խակ պտուղներ կը փրցնէր ու կ'ուտէր:— Ի՞նչ բտաւ հայրը.— Ինչո՞ւ Մինաս նորէն հիւանդացաւ:— Ի՞նչ կը նշանակէ «տոտածի կարգ անցած է»:— Ինչո՞ւ «անկողին ինկաւ», կ'ըսենք:

**ՈՒՍՈՒՑՁԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.—** Չափէն աւելի ուտելու վարժուելով՝ տղար որկրամու կ'ըլլան:— Որկրամուլութիւնը թէև հանելի բան մը կը թուի տղոց, բայց անոնց ամէնէն մեծ թշնամին է, որովհետեւ հիմնովին կը խանգարէ առողջութիւնը:— Որկրամուլեցեան վարժուելով՝ տղար բարոյապէս ալ կը տուժն, որովհետեւ շատ հեղ թիչ մը աւելի ուտելու համար կը ստիպուին անուշիկ միջոցներու դիմել, օրինակ գոլնալ:

### 59. ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏՂԱՆ

Ա.

Դպրոցին աշակերտներուն մէջ ամէնէն աշխատասէրը չէր Շուարշ, բայց կրնար պարծիլ թէ ամէնէն հետաքրքիրն էր:

Դաստիարակը միշտ կը կեսամբեր զայն.

— Տղա՛ս, կ'ըսէր, հետաքրքրութիւնը յատկութիւն մըն է, բայց անպատճառ պէտք է որ օգտակար բան մը ըլլայ անոր առարկան: Օրինակի համար՝ հետաքրքրութիւնը յատկութիւն մը կը դառնայ, երբ ուզես զիտնալ թէ ի՞նչ տեսակ առարկաներէ շրջապատուած ես, թէ ինչպէ՞ս կազմուած են այդ առարկաները, ի՞նչ բանի կը գործածուին և թէ անոնցմէ ո՞րը օգտակար է և ո՞րը փաստակար:

Վարձեալ հետաքրքրութիւնը յատկութիւն մը կը դառնայ երբ ուշադրութեամբ մտիկ կ'ընես քեզմէ մեծերուն, կամ ծնողքիդ և կամ զաստիարակիդ խրատներն ու խօսքերը:

Վայց դուն գէշ սովորութիւն մը ունիս. չես ուզեր հասկնալ թէ կան բաներ որոնցմով հետաքրքրուիր փաստակար է կամ անփայլ:

Վատարանին մէջ գտնուող կրակին ի՞նչպէս կազմուած ըլլայր զիտնալու համար պէտք է քեզմէ մեծերուն հարցնես. և թէ հետաքրքրութիւնդ աւելի առաջ տանիս և կրակը բռնես, ձեռքդ կ'այրի: Այսպէսով հետաքրքրութիւնդ փաստակար կը դառնայ:

Շատ անգամ կը պատահի որ ծնողքդ կամ ուրիշներ իրարու հետ առանձին տեսնուելու պէտք ունենան:

Պէտք չէ որ հետաքրքրուին ու մտիկ ընես անոնց խօսքերը: Այդ պարագային՝ հետաքրքրութիւնդ չառանկալի բան մը կը դառնայ և քեզ անբարձրազարկ կը նկատեն»:

Այսպէս կը խօսէր գաստիարակը, ամէն անգամ որ Շաւարշի հետաքրքրութիւնը մնասակար կամ անվայել կը դառնար:

ԲԱՒԵՐ. — Պարծիլ՝ պարծենալ: — ԿՈՒՄԱՐԵԼ՝ յանդիմանել: — ԱՆԱՆՃԻՆ՝ մեծակեր: — ԱՆՎԱՅԵԼ՝ չվայլող:

ԸՆԴՈՒՅՑՆԵԼԻ ԿԷՏԵՐ. — Հետաքրքրութիւնը կ'ըր յատկութիւն կը դառնայ և կ'ըր թերութիւն: — Վնասակար հետաքրքրութեան ի՞նչ օրինակներ կրնար տալ: — Յգտակար հետաքրքրութեան օրինակներ ալ տուէր:

ՈՒՍՈՒՅՉԻՆ ԲԱՅՄՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Տղար որչափ ատեն որ անփորձ են՝ չեն զիտեր վնասակարը օգտակարէն զանազանել և իրենց զլիւսն փորձանք կը բերեն կամ անվայել ընթացք մը կ'ունենան առանց զիտնալու: — Այս պատճառաւ՝ պէտք է իրենց կեանքի ուղեցոյց ընտրեն իրենցէ մեծերուն փորձառութիւնն ու խրատները:

## 60. ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏՂԱՆ

Բ.

(Շարունակութիւն)


Շաւարշ հետաքրքիր ըլլալուն չափ ալ յամառ էր: Դատարակին այդ զեղեցիկ խրատներն ու բացատրութիւնները կարծես իրեն չէին ուղղուած: Միշտ նոյն ամէն բանի հետաքրքրուող տղան կը մնար, հաւատակ իրեն եղած յանդիմանութեանց:

Այս պատճառաւ է որ պատիժը դատաւ: Մայրը միշտ կը պատուիրէր իրեն որ մեղուներու փեթակներուն չմօտենայ:

— Կը կճեն, կ'ըսէր, վերջէն ցաւ կը քաշես ու կը զոջաս:

Բայց Շաւարշ, ամէն անգամ որ պարտեղ կ'ելլէր, միշտ փեթակներուն կողմը կը դիմէր:

Մօրը պատուէրը չէր մտաբերեր բնաւ, և կ'ուզէր միշտ աւելի մօտէն տեսնել մեղուներու աշխատութիւնը:



Օր մը, այնքա՛ն մօտեցաւ անոնց որ մեղուները խրտեցան, ձգեցին իրենց աշխատութիւնը և խմբովին յարձակեցան Շաւարշի վրայ:

Խեղճը շատ վախցաւ, ուղեց փախչիլ, բայց մեղուները արագ արագ թռչելով զլիսուն վրայ իջան և սկսան զէմքը խայթիլ:

Շաւարշ, ստկալի կերպով վերադարձաւ, կը պոռար ու կը փախչէր:

Բարեբախտաբար մայրը մօտերն էր: Խեղճ կինը, զաւկին ազատակները բերուն պէս, հասկցաւ եղածը, փութաց անոր քով և դժուարաւ կրցաւ վանել մեղուները:

Շաւարշ երկու շարաթ հիւանդ պատկեցաւ, և շատ  
անասանելի ցաւեր քաշեց: Դէմքը այնքան ուռած էր  
որ ընկերները չէին ճանչնար:

— Քեզի այնքան անգամներ պատուիրեցի որ  
չձօտենաս փեթակներուն, կ'ըսէր մայրը, և թէ խօսքս  
մտիկ ընէիր, հիմայ այդպէս չպիտի տանջուէիր:

Շաւարշ ալ զղջացած էր, բայց վերջէն զղջալը  
օգուտ չընէր:


ԲԱՌԵՐ.— Գիւմկ' երթալ:— Մօսարեւի' միտքը բերել:—  
Խոհայի' վտինալ:— Խմբովի՞ն՝ ամէնքը մէկ:— Փութալ' անապա-  
րել:— Աւանի' վոնակ:

ԸՆԴԱՅՆՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ի՞նչ է փեթակը:— Ի՞նչ կը քաղենք փե-  
թակէն.— Ի՞նչ տեսակ կենդանի է մեղուն: Ամէնքն ալ մեղր կը շի-  
ննօն:— Ինչո՞ւ խայթեցին Շաւարշը:— Ինչո՞ւ համար վերջէն զղջալը  
օգուտ չընէր:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Յամառ տղաքը միշտ  
իրենց կը մնասեն, ոչինչ կը սորվին և չեն կրնար յառաջդիմել:—  
Շուտով անհամբոյր բնատրութեան տէր կը դառնան, չեն սիր-  
ուիր ու դժբախտ կ'ըլլան:

### 61. Ա Գ Ռ Ա Ի Ը

Ազոտաւ կ'աղաչէր  
Խիկարին  
Թէ ի՞նչ գեղ տալ պէտք էր  
Իր ձագին:  
Կր պնդէր թէ ցաւն է սաստիկ  
Անոզում մահն է շատ մօտիկ:



Իսկ մեր Խիկար պատասխանէր.—  
«Ազոտ'ւ, գնա տերև մը բեր  
Ուր դուն ծրսած չըլլաս բնաւ»:—  
Ազոտ գնաց բայց չը գտա՛ւ:  
Երբ հանդիպիս նեղ օրերու,  
Լաւ կը լսն՞ս, բարեկամ դու,  
Ոչ, չես գտնար ցաւերուդ գեղ,  
Թէ պղծե՛ր ևս ամէն տուն տեղ:


ՎԱՀԱՆ ՎՐԴ.

ԲԱՌԵՐ.— Խիկար' հին ատեններու ինաստուն մը որ աղուոր ա  
ռակներ գրած է:— Անոզում' չմեղքող:— Նրահի' աղտոտել:—  
Պղծել' աղտոտել:

ԸՆԴԱՅՆՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ազոտը ինչո՞ւ Խիկարին դիմեց:— Ին-  
չո՞ւ մարտը տերև մը չգտաւ.— Ի՞նչ է այս առակին իմաստը:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Պէտք է միշտ մեր լսւ

վարժունքով մեզի բարեկամներ ստեղծենք, նոյն իսկ երբ կը կար-  
ծենք ուրիշի օգնութեան պէտք չունենալ:— Մարդիկ փոխադարձ օգ-  
նութեամբ միայն կրնան ապրիլ. ամէնէն զօրաւորն իսկ կրնայ ամէ-  
նէն տկարին պէտք ունենալ:— Այս պատճառաւ պէտք է անանկ վար-  
ուիներ որ նեղը մնացած ատեննիս կարենանք օգնութիւն գտնել:



### 62. ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ԱՔԼՈՐԸ

Չորս օր կար որ աղուէսը անօթի մնացեր էր, չէր  
զիտեր թէ ուրիշ՝ ուտելիք ձարէ:

Անօթութիւնը համարձակութիւն տուաւ իրեն,  
թողուց անտատը և հազար ու մէկ զգուշութեամբ զիւ-  
ղին մօտեցաւ:

— Հարկաւ, կ'ըսէր ինքնիրեն, այնտեղ ուտելիք  
կը գտնեմ:

Մինչդեռ հաւնոցի մը մօտէն կ'անցնէր, տեսաւ  
գեղեցիկ աքլոր մը որ արեւին տակ զրոխը ցցած՝ կը  
պարտէր սունալով:

Աղուէսը անուշ լիզու ու շողբորթ էր, մօտեցաւ  
աքլորին և ըսաւ անոր.

— Աքլոր եզրայր, որչա՛փ գեղեցիկ ես, ամբողջ  
անտատին մէջ քեզի՛ պէս աղու որ կենդանի մը չկայ:


Աքլորը գոտոյ էր, աղուէսին խօսքերը իր հպար-  
տութիւնը կը զգուէին:

Այս պատճառաւ մտերմացաւ անոր հետ և սկսան  
խօսիլ սարէն ձորէն:

Աքաղաղը ինքզինքը կը գովէր, մինչդեռ աղուէ-  
սին միայրը ուրիշ տեղ էր:

Կ'ուզէր աքլորը զրազեցնել և յանկարծ վրան  
յարձակելով ստնել տանիլ ու խեղդել:

Միջոց մը՝ ըսաւ անոր.



— Աքլոր եզրայր, կ'ըսեն թէ չատ անուշ ձայն  
ունիս. մէյ մը երգէիր՝ մտիկ ընէի:


Աքլորը երգեց:

— Սքանչելի՛ ձայն. ըսաւ աղուէսը, զովածնուն  
չափ կայ, ժամանակաւ քու հօրոյ ձայնն ալ ըսած եմ,  
ա՛ն միայն կը հաւատարի քու ձայնիդ. միայն թէ  
հայրդ ուրիշ կերպ կ'երգէր:

— Ի՛նչպէս:

— Անիկա աչքերը կը գոցէր և այնպէս կ'երգէր:

— Ես ալ կրնամ, ըսաւ աքլորը:



Յետոյ աչուրները գոցեց և կը պատրաստուէր եր-  
գիւով՝ երբ ազուէսը վրան յարձակելով խածաւ վիզէն,  
ու շխաակ անատտ տանելով խեղդեց:

ԲԱՌԵՐ.—Սոնեֆալ՝ հպարտանալ:

ԸՆԴՈՒՅՆՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ի՞նչ տեսակ կենդանի է աղուէսը:—  
Ինչո՞ւ մարդոց մօտ չսպրիք:— Ի՞նչ կը նշանակէ «ամուշ լեզու  
էր». — Ի՞նչ է շողորթութիւնը.— Ո՞ր տղարք կ'ախորժին շողո-  
րթութիւնէ:— Ի՞նչ կը նշանակէ «հպարտութիւնը գգուել»:— Աք.  
լորը ինչո՞ւ գոնուեցաւ:

ՈՒՍՈՒՑՁԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Տղաք միշտ պէտք է  
զգուշանան կեղծաւորներէն ու շողորթութիւններէն:— Գէտք է գիտնան որ  
իրենց բոյոր ընկերներն ալ չեն կրնար բարի բլլալ, թէ անոնց մէջ  
կան շատեր որոնք գէշ խորհուրդներով իրենց վնաս կրնան հասցնել:  
— Մինչդեռ սիրով ու մտերմութեամբ կ'ապրին իրենց բարի ընկերնե-  
րուն հետ՝ պէտք է միւս կողմէ հեռու մնան իրենց չար ընկերներէն:

### 63. Դ Ե Ղ Ձ Ի Ն Կ Ո Ւ Տ Ը

Յերեկին, մինչդեռ սուսէն գարոց կը գտնար,  
Արայ գրպանէն հանեց խոշոր դեղձ մը զոր մայրը  
սուած էր իրեն:

Երբոր դեղձը կերաւ, կուտը անփութութեամբ  
նետեց ճամբուն կղերքը:

Ծերունի մը որ այնտեղ կը գտնուէր, անմիջապէս  
կուտը առաւ և խնամով թաղեց հողին մէջ:

Արայ չկրցաւ խնդուքը զսպել.

— Զարմանալի՛ մարդ, կը մտածէր ինքնիրեն,  
ի՞նչ օգուտ ունի այս կուտը որ այսքան գուրգուրանք  
ցոյց տուաւ անոր համար:

\* \*

Քանի մը տարիներ անցան. Արայ պատանի մը  
գարձած էր: Օր մը, մինչդեռ այդ ճամբէն կ'անցնէր,  
տեսաւ որ միեւնոյն ձերունին ուշադրութեամբ կը  
խնամէ պղտիկ ծառ մը: Այս ծառը կը գտնուէր ձիշղ  
հոն ուր կուտը թաղած էր ձերունին:

Արայ նորէն խնդաց:

— Սա ծառին վրայ, մտածեց, ոչ մէկ պտուղ կը  
գտնուի. այս մարդը կ'երևեայ թէ ուրիշ հոգ չունի որ  
ստանկ անօդուտ ծառ մը խնամելով կը վատնէ իր  
ժամանակը:

Եւ անցաւ գնաց:

\* \*

Անցան քանի մը տարիներ ալ: Արայ կատարեալ  
երիտասարդ մը գարձած էր:

Անանկ պատահեցաւ որ օր մը յոգնած դադրած, այդ միևնոյն տեղէն անցնի:

Տաք արև մը կար այն օրը և Արայ այնքան յոգնած ու ծարաւ էր որ դժուարաւ կրնար շարունակել իր ճամբան:

— Պուտ մը ջուր, քիչ մը կազդուրուիմ, կը մտածէր, բայց ջուր չկար այդ կողմերը:

Եւ ահա հասաւ այն ծառին առջեւ, որուն համար ծերունին աշխատած էր այնքան տարիներ:

Ծերունին չկար այլևս, բայց իր աշխատութեան արդիւնքը մէջտեղն էր: Կուտը որ պղտիկ թուփ մը եղած էր, հիմա խոշոր ազուոր ծառ մըն էր դարձած, և սքանչելի դեղձեր անոր ճիւղերն ի վար կախուած էին:

Արայ շատ մը դեղձեր քաղեց, անցուց ծարաւը և կրցաւ հանգիստ շարունակել իր ճամբան:

Եւ սակայն ամօթահար էր, կը մտաբերէր թէ երբևին ինչպէ՞ս ծագրած էր այն ծերունին որ իր նետած կուտը անկելէ վերջ, անկէ բուսած ծառը կը խնամէր:

Այդ աշխատութիւնը որ իրեն ծագրելի թուած էր, այսօր բարիքի աղբիւր մը կը գտնար ահա:

ԲԱՌԵՐ.— Կազդուրուիլ՝ ոյժ առնել:— Մաքրելի՝ միտքը բերել:

ԸՆԴՈՍՅԵՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ի՞նչ տեսակ պտուղ է դեղձը. անոր նմանող ո՞ր պտուղը գիտէր:— Արայ ինչու՞ ամօթահար մնաց՝ դեղձերը ուտելէ վերջ:— Կուտ մը ի՞նչպէս ծառ կը գտնայ:

ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԵՆԵՐԸ.— Աշխարհի վրայ ոչինչ անօգուտ է. բայց միայն աշխատութիւնն ու յարատեւութիւնն են որ նոյն իսկ ամէնէն աննշան բաներէն մեծ օգուտներ կը հանեն:



### 64. Ճ Ն Ճ Ղ Ո Ւ Կ Ն Ե Ր Ը

Ճուռակ մը կը թրջէր բարձրերէն, երբ ճնճուկ մը տեսնելով խոյացաւ վրան:

Ճնճուկէն շատ աւելի զօրաւոր թևեր ունենալով, շուտ մը հասաւ անոր և ճանկերովը բռնեց գայն:

Ենդ՞ ճնճուկը ազատելու յոյս չունէր. Ճուռակին դո՞ պիտի ըլլար: Յուսահատ՝ սկսաւ պոտալ կանչել, մինչդեռ Ճուռակը զինքը ստած դէպի իր բոյնը կը ռսապիւր:

Իայց ահա ուրիշ ճնճուկներ լսեցին իրենց ընկերոջ ձայնը, հասկցան թէ ի՞նչ ցաւալի վիճակի մէջ կը գտնուի, և ամէն կողմէ իրար կանչելով, բոլորը մէկ յարձակեցան Ճուռակին վրայ:

Անոնք հասան Ճուռակին, բոլորուեցան անոր շուրջը, սկսան թևերնին զարնել ու կչել, և այնքան ազմուկ հանեցին որ վերջապէս յաջողեցան Ճուռակը վախցնել:


Ինչ որ մէկ ճնճուկ չէր կրցած ընել, շատ մը ճնճուկներ զիւրաւ կրցան ընել:

Ճուռակը թողուց իր որսը և փախաւ գնաց:

ԲԱՌԵՈՒ.— Խոյանալ՝ յարձակիլ:— Ետապիլ՝ անպարելի:— Բոլորուիլ՝ շրջապատել:— Ճչել՝ պոտալ կանչել:

ԸՆԴԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ի՞նչ տեսակ թռչուն է ճուռակը:— Պրզ-  
տիկ թռչունները ուտող մեծ թռչուններուն ի՞նչ կ'ըսեն:— Անոնց  
ո՞ր մասերը զօրաւոր են:— Ո՞ր տեղումսրը կ'ապրին:

ՈՒՍՈՒՅՉԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Տասը սկար էր իրարու  
օգնութեան ձեռք կը մեկնեն, ինքնին զօրութիւն մը կը կազմեն:—  
Միութեամբ, իրարու օգնելով մանաւանդ մարդիկ կը յաջողին յաղթել  
կեանքի դժուարութեանց, և ինքզինքնին պաշտպանել շարերու դէմ:



### 65. Ծ Ի Ծ Ե Ռ Ն Ա Կ Ն Ե Ր Ը

Ատառ էր: Չարուհի դպրոց կ'երթար երեքակա-  
լով, կարծես չկամութեամբ: Անիկա երկար ատեն կը  
կենար խանութներուն առջև, առանց մտածելու որ  
ուշ պիտի մնայ դպրոցէն և ասոր համար պիտի պատ-  
ժուի:

Ճամբուն վրայ՝ հեռագրի ձողեր կը զանուէին, և  
անոնց թեւերուն վրայ ալ խումբ մը ծիծեռնակներ ու-  
րախ զուարթ կը ցատկաւէին, յետոյ կը թռչաւէին,  
կ'երթային տանիքներուն ծայրը թառ կ'առնէին, ետ-  
քը նորէն կ'իջնէին վար, թեւերուն վրայ:


Չարուհի կը զմայլէր զանոնք տեսնելով:

— Ի՞նչ երջանիկ արարածներ, պոռայ յանկարծ,

բան դործ չունին, ատառքնէ մինչև իրիկուն զուար-  
ձանալով կ'անցընեն, մինչդեռ մենք ստիպուած ենք  
օրն ի բուն աշխատիլ:

Սակայն մարդ մը որ իր մօտ կեցած ու բաւժը  
լսած էր.

— Աղջիկս, բաւ անոր զանալով, շատ սխալ  
կարծիք մը կազմեցիր այս թռչուններուն վրայ. դուն  
անանկ կը կարծես թէ անոնք միմիայն զուարճութեան



համար աչդպէս կ'ոսնոսեն ճուռակով. մըրայց եթէ ու-  
չապրութեամբ դիտես, պիտի տեսնես որ անոնց մէջ  
մեծեր ու պղտիկներ կան. մեծերը որոնք ծնողներն  
են, շարունակ կ'երթան հատիկներ կը փնտակն ու կը  
փութան իրենց պղտիկներուն քով, որպէս զի զանոնք  
կշտացնեն, ճիշտ ինչպէս որ քու ծնողքդ կ'աշխատին  
քեզի անուղ ձարելու համար:

Չարուհի ամօքսիստ մնաց: Մարդը շարունակեց.

— Այն սղտիկներն ալ վաղը միւս օր, երբ կարե-  
նան մի՛նակնին թաչիլ, միևնոյնը պիտի բնեն իրենցմէ  
աւելի սղտիկներուն համար. ասանք ալ մարդոց պէս  
ստիպուած են ամբողջ օրը աշխատելու. եթէ ծուլա-  
նան, անօթի կը մնան ու կը մեռնին: Հիմայ հասկը-  
ցա՞ր թէ որչա՞փ կը սխալելիր քիչ մը առաջ:

— Հասկցայ, շատ չնորհակալ եմ, բաւ Զարուհի:


— Մի՛ մտնար մանաւանդ որ աշխատութիւնն է  
այս թաչուններուն ուրախութեան միակ պատճառը.  
Ճոյլերը միշտ տխուր են:

Զարուհի փութաց վարժարան, և անկէ ետքը ալ  
բնաւ չէր յամենաւ փողոցները և գտակէն եւ չէր  
մնար:

**ԲԱՌԵՐ.**— **Ձկամուրեամբ՝** չուզելով:— **Ռառասկ՝** ցատքը-  
տել:— **Փութալ՝** ամապարկ:— **Ստօթահար մնալ՝** ի պնիլ:— **Յա-  
մենալ՝** ուշ մալ:

**ԸՆԴԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.**— Ի՞նչ կը նշանակէ «կարծիր կազմել»:—  
Ի՞նչ գիտէր ծիծեռնակներուն վրայ:— Ի՞նչ է ննապիրը:— Ինչո՞ւ  
աշխատութիւնը կ'ուրախացնէ և ծուրթիւնը կը տխրեցնէ:

**ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.** Բնութեան մէջ առանց  
աշխատութեան ոչինչ կը կատարուի:— Բոլոր կենդանիները, բոլոր  
բոյսերը, բոլոր ճէինները ստիպուած են անընդհատ աշխատելու:— Մի-  
նակ մը չեններուն օրինակը կը բաւէ մարդիկը աշխատութեան նրախ-  
րելու:



### 66. Ե Ր Ե Ք Ե Ջ Ե Ր Ը

Երեք եղեր, իրարմէ միշտ անբաժան  
Թառուորին մէջ կ'արածէին միարան,  
Չունէին բնաւ դայէն վախ,  
Օր մը, սակայն, իրարու հետ զփեցան:  
Չար դայն եղաւ շատ ուրախ:  
Բա՛մնուած էին անոնք:— Շատ զիւրա-  
Երեքն ալ զատ զատ բզբուկեց կերաւ:

**ԲԱՌԵՐ.**— **Անբաժան՝** մկեակ ապրող:— **Գժախ՝** սր ողիլ:

**ԸՆԴԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.**— Ի՞նչ է Թառուորը:— Գայլը ինչո՞ւ  
չէր կրնար դայիլ եզերուն՝ երբ միարան կ'ապրէին:— Ի՞նչ տեսակ  
անասուն է գայլը, ինչո՞ւ գայն կը սպաննեն:

**ՈՒՍՈՒՅԶԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.**— Միութեան մեծագոյն  
բարիքը սա է ր տկարներէն զօրաւորներ կը գոյացնէ:— Բացատրել  
տղոց կեանքին պատշաճոյ բազմաթիւ օրինակներով:

### 67. Ս Ա Լ Ո Ր Ե Ն Ի Ն

Յակոր պարտեղ իջած էր և անյազուրկամբ կը գիտէր խոչոր սալորենի մը որուն ձիւղերը ծածկէին գեղեցիկ պտուղներու ծանրութենէն:

Բաւական ատեն Յակոր գիտեց այդ ազուր որ սալորները քանի՛ անոնց կը նայէր, այնքան արտործակը կ'աւելնար:

Յանկարծ փափաք մը ունեցաւ:

— Հայրս, ըսաւ, ինձի արգիլած է սալորներուն գալչիլ, բայց հիմայ այստեղ մարդ չիկայ. եթէ քանի մը հատ փրցնելու ըլլամ, ո՞վ պիտի հասկնայ, սալորները չատ են և հարկաւ չեն համրուած:

Յակոր կը պատրաստուէր ծառն ի վեր շուրջուելու, սակայն ուրիշ մտածում մը գինքը կեցուց.

— Հայրս, ըսաւ, անչուշտ բան մը գիտէր որ ինձի արգիլեց սալորներուն գալչիլ. առջի օր ուսուցիչս կ'ըսէր որ պէտք է հնազանդինք մեզմէ մեծերուն: Եւ սալորենիին քովէն հեռացաւ:

Բայց հաղիւ քանի մը քայլ առած էր, երբ յանկարծ տեսաւ հայրը, որ սալորենիին մօտիկը գտնուող թուփերու կտին պահուրտած ըլլալով, լսած էր իր մեկնախօսութիւնը:

— Եկո՛ւր, պղտիկ Յակորս, ըսաւ իրեն, եկուր որ վարձատրեմ հնազանդութիւնդ. ևս այստեղ էի և ամէն բան լսեցի. եկո՛ւր որ պարկեշտութեանդ փոխարէնը ընդունիս:

Եւ զայն սալորենիին մօտ տանելով, թօթուեց պտուղներով բեռնաւորուած ձիւղ մը, ուրկէ շատ մը ազուր սալորներ ինկան վար:

ԱՄՈՒԵՐ. — Աճյազուրկամբ՝ չկտանալով — Մեկնախօսութիւն՝ ինքնին խօսիլ:

ԸՆԴՊԱՅՆՆԵԼԻ ԿԷՏԵՐ. — Պտուղները ե՞րբ պէտք է ուտել:— Ի՞նչ վնաս կրնայ առաջ գալ խակ պտուղներէն:— Քանի՞ տեսակ սալորներ գիտէք, ինչո՞վ կը տարբերին իրարմէ:

ՈՒՍՈՒԹՁԻՆ ԲԱԾԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Մի՛ ըսէք երբեք թէ միտակ էք, թէ մարդ չի տեսներ և թէ ո՛չ որ կը գիտնայ ձեր ըրածը — Ուրիշներու ներկայութեան պարկեշտ ըլլալը չի բաւեր:— Բուն պարկեշտութիւնը հոն է երբ կը գործադրէք առանց վկայի, միշակ եղած ատեննիդ:

### 68. ԳԱՅԼԸ ԵՒ ՇՈՒՆԸ

Գայլն ու շունը, օր մը, բարեկամացան և մէկտեղ ձամբայ ելան ուտելիք փնտռելու:

Երկար ատեն կար որ իրարու հետ խռով ապրած էին. և հիմայ կը խօսէին, իրենց գլխուն եկածները կը պատմէին:

Շունը ուրախ զուարթ կը ցատքոտէր, բայց գայլը անհանդիստ էր: Պղտիկ ձայն մը առածին պէս խսկոյն կը կենար:

— Ի՞նչ ունիս, գայլ կորայր, կ'ըսէր շունը:

— Բան մը չէ:

Անտատ մտած էին, երբ յանկարծ խշրատք մը լսուեցաւ ծառերու ձիւղերուն մէջէն:

Գայլը ստակումի ազազով մը արձակեց:

— Ի՞նչ վախցար, գայլ կորայր, ըսաւ շունը:


— Ինձի անանկ կուգայ որ մարդիկ կուգան մեր կողմը:

— Չէ՛, մի վախնար, թռչուն մըն էր որ մէկ ծառէն ուրիշ ծառի մը վրայ անցաւ :

Քիչ մը անցին, նորէն ազմուկ մը լսուեցաւ : Այս անգամ ալ նապաստակ մըն էր որ գայլն ու չունը տեսնելով վախէն իր որջը կը փութար :

Վայլը նորէն վախցաւ :

— Կենանք, չուն եզրայր, բաւ գողալով, այս անգամ կարծեմ իրօք մարդ կուգայ :



— Մարդ չէ, նապաստակ մըն էր. բայց զան ինչո՞ւ ասանկ ամէն վայրիկեան կը վախնաս, նարցուց չունը :

— Ի՞նչ ընեմ, չուն եզրայր, ամէն մարդ թչնամի է ինձի :

— Բայց ատոր մէջ յանցանքը քուկդ է. որովհետեւ բնաւ բարի գործ մը չես տեսներ. այդպէս միշտ վախով պիտի ապրիս. չարերը նանդիսա չունին :

ԲԱՌԵՐ.— Խառով ապրիլ՝ սրդողած մնալ :

ԸՆԴՈՒՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ի՞նչ է որջը:— Ո՞ր անասունները որջելու մէջ կը բնակին:— Կենդանիներու ուրիշ ի՞նչ բնակարաններ գիտէք :

ՈՒՍՈՒՅՉԻՆ ԲԱՅՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Չարերը միշտ վախի մէջ են, որովհետեւ իրենց խիղճը զիւենք հանգիստ չթողուր:— Գողի սիրտը միշտ դողի մէջ կ'ըլլայ:— Գաղտնի գործուած շարութիւնն իսկ տանջանք մըն է գործողին համար, որովհետեւ մարդոց պատիժէն աւելի ծանր է խղճին պատիժը :

### 69. ԿԱՂ ԾԵՐՈՒՆԻՆ

Գպրոցէ դարձին, քանի մը աղաք նշմարեցին մարդ մը որ կազ ըլլալուն՝ շատ գծուարութեամբ կը քայլեր : Տղաքը շատ բարի գպրոցականներ չէին. սկսան ծաղրել մարդը, անոր պէս կազ կը ձեւանային ու կը հեղանէին խեղճը : Կազը ձայն չհանեց, բայց սկսաւ լալ :

Այդ միջոցին ձերունի մը այնտեղէն կ'անցնէր. անիկա տեսաւ եղածը և գպրոցականները իր մօտ կանչելով.

— Տղաքս, բաւ, գիտէ՞ք թէ ով է այս կազ մարդը. կիցէք որ պատմեմ թէ ինչո՞ւ այդպէս կազ դարձաւ : Տասը տարի առաջ, անիկա կայտատ մարդ մըն էր, և ձեզմէ աւելի աղէկ կը քայլեր : Գիշեր մը, իրենց թաղին մէջ հրդեհ եղաւ : Ինք ալ իր գրողիներուն հետ փողոց ելած էր, երբ լսեց թէ այրող տան մէջ սղախիկ աղայ մը մնացած էր : Ոչ ոք կը համարձակէր տունէն ներս մտնել և խեղճ սղախիկը ազատել : Բայց անա այս ձեր ծաղրած մարդը բոցերուն մէջ

նետուեցաւ, այրող սունէն ներս մտաւ, դտաւ պղտիկը ու դուրս պիտի ելլէր, երբ սանդուխը ուրիշ վար կ'իջնէր, յանկարծ փխաւ: Պղտիկը աղասեց բայց իր սաքն ալ կտարեցաւ:

Տղաքը ուշադրութեամբ մտիկ քրած էին ձերու-նիին խօսքերը: Ամէնքն ալ ամօթէն կարմրած էին. յայտնի էր որ զղջացած էին իրենց ազեղ վարմունքին համար:

ԸՆԳԱՅՆԵԼԻ ԿԷՏԵՐ.— Ինչո՞ւ պէտք է ծաղրենք անկարները, աղբատներն ու թշուառները:

ՈՒՍՈՒՑՁԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Ոչ միայն պէտք է ծաղրենք անկարները, աղբատներն ու թշուառները, այլ ընդհակառակը պէտք է շանանք անոնց դժբախտութիւնը ամորելու, մեր ձեռքէն եկած, նոյն իսկ մեզի ծանր արժելիք աւէն օժանդակութիւն նուիրելով անոնց:

### 70. Պ Ո Ռ Ո Տ Ա Խ Օ Ս Ը

Երկու ուղևորներ անտատէ մը կ'անցնէին երբ անոնցմէ մէկը՝

— Գազանի հետքեր կը նշմարեմ գետնի վրայ, ըսաւ, սարսափելի բան կ'ըլլայ եթէ վայրի գազանի մը հանդիպինք:

— Ի՞նչ վախոտ մարդ ես, ընկեր Յակոբ, գոչեց Պօղոս. վախնալու ի՞նչ կայ, յարձակումի պահուն միացած ուժերով կը կոտինք: Բնունցքս նայէ՛, մէկ հարուածով կը ջախջախեմ առիւծի մը գանկը. ես ունիմ զօրաւոր բազուկներ, անվախ սիրտ ե...:

— «Ահաւասիկ», գոչեց Յակոբ սարսափահար՝ երբ մօտակայ մացառուտէն մանջիւն մը լսուեցաւ:

Վայրկեանի մը մէջ, Պօղոս որ քերևաւաւած էր ու ջղուտ, սկիւռի մը նման, ծառի մը վրայ մազլցեցաւ, իր գանդազարձ ընկերը առանձին ձգելով վտանգին զիմաց:


Յակոբ՝ որ մինակը ո՛չ կրնար պայքարիլ և ոչ ալ փախելով ազատիլ, խոհեմութիւն սեպեց անմիջապէս պատկիլ ու իր շունչը բռնելով մեռած ձեւանալ:

Վերջապէս արջ մը մէկ ոտուամով դուրս նետուեցաւ մացառուտէն և ուղղակի Յակոբի վրայ յարձակեցաւ: Պօղոս՝ ծառի վրայի իր ապաստանարանէն ստեղծով կը գիտէր այս սեւաբանը:

Երեւեակայեցէք խեղճ Յակոբի վիճակը, երբ արջը փընթփնթալով իր բոլորաթիքը շրջան կ'ընէր. աւոր շունչին տաքութիւնը իր դէմքին վրայ կ'զգար

ու անոր ցուելը իր ականջը կը չօչափէր: Յակորը չնչատ և անչարժ տեսնելով՝ արջը՝ մետած կարծեց դաշն ու ստանց փնաս մը տալու անտարը վերադարձաւ:

Երբ Պօղոս տեսաւ որ վտանգը այլևս անհետա-



ցած է, կամայ մը ծառէն վար իջաւ ու իր վատարը՝ տուխեան ամօթը պարտկելու համար գործը կատակի դարնելով:

— Ընկեր Յակոր, արջը ի՞նչ կը փոխար տկանջիդ, ըսաւ:

— Անապարձ մարդոց երբեք մի՛ վտանջիր, ըսաւ արջը, պատասխանեց Յակոր:

Վտանգի պահերը յաճախ կը հաստատեն թէ ա-

մենամեծ պարծենկոտները ամենամեծ երկչոտներն են: Բաջու թխներ գործով կ'ապացուցուի, ո՛չ թէ խօսքով:

ԹԱՌԵՐ.— Պոռոսախօս՝ մեծ մեծ նետող:— Ալիլոս՝ կասուփ նմանող փորթիկ կենդանի մը:— Թեքիւսաւարձ՝ արագ շարժող:— Յաւակ՝ կեղ դանիի բիթ բերանը:— Անապարձ՝ չունեցած բանովը պարծենցող —Վիքիսարի՛ շատ մեծ:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ.— Պարծենկոտը ստտիւս և խարերայ մըն է: Իրական բաջասիրտները սակաւախօս են ու վտանգի պահուն՝ գործով կը հաստատեն իրենց արժէքը:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ բառերով կազմուած են. թեքիւսաւարձ դանդաղաշարժ, սակաւախօս, բաջասիրտ, փատասիրտ բառերը կրնա՞ր ասոնց նման մէյ մէկ բառ գտնել:

## 71. ՓՈՔՐԻԿ ՀՕԼԱՆՏԱՅԻՆ

Հիւսիսային ծովին եզերքը փոքրիկ երկիր մըն է Հօլանտան, որ ցած երկիր կը նշանակէ: Հօլանտայի ցամաքամասը ծովի մակերեսէն աւելի ցած ըլլալուն պատճառով, ամբողջովին եզերքը բարձր թումերը չին ուսած են որպէս զի ջուրը ցամաքին վրայ չլսուծէ:

Այս թումերուն մէջ երբեմն ճեղքեր կը գոյանան ու երկիրը ջուրով ծածկուելով բնակարանները կը քանդուին, կենդանիներն ու մարդիկ կը խեղդուին, բոյսերը կը փճանան և այս կերպով ջրհեղեղին ազդեցութիւնով երկիրն մէկ մասը աւերակի կը վերած-

ուի: Այս պատճառով ամէն հօլանտացի ստիպուած է ջուրի այս վտանգին միշտ ուշադրութիւն ընել:

Հօլանտացի տղեկ մը, իրիկուն մը, գաւառէն տուն վերադարձած միջոցին՝ տեսաւ որ թուփրին մէկ մասը ձեղքուած է, ուրիշ ջուրը ցամաքին վրայ կը վազէ:

Տղեկը նախ մտածեց երթալ հօրը լուր տալ, բայց յետոյ անդրադարձաւ որ մինչև որ տուն երթայ ու հայրը միասին բերէ, ժամանակ կ'անցնի, մտթը կը կոխէ ու ակզը կրնան կորսնցնել, մինչ այդ՝ ձեղքը երթալով պիտի լայննայ ու գայն գոցելը այլ եւս անկարելի պիտի գտնայ:

Այս պատճառներով, տղան ձեղքին մօտեցաւ ու սկսաւ քարերով, խոտերով ծակը գոցել և ջուրի խուժումը արդիւիւէ: Սակայն ինքը փոքր էր ու չէր կրնար պատուածքը գոցել պէտք եղածին պէս. ասոր համար տղան ամբողջ գիշերը ձեղքին մօտ մնաց, իր փոքրիկ ձեռքերովն ու մարմնովը ջուրին խուժումը արդիւիւիւ:

Առաւօտուն անցորդ մը տղան նշմարելով մօտեցաւ և զարմանքով հարցուց.

— Ի՞նչ կ'ընես հող, տղա՛ս:

— Թուփրին մէջ ձեղք մը բացուած է, ջուրին հասանքը արդիւիւիւ կ'աշխատիմ, պատասխանեց տղեկը նուազուն ձայնով: Ա՛ն ամբողջ գիշերը արթուն մնացած, թրջուած և ուժասպառ գարձած էր: Ուրիշներ ալ եկան, ձեղքը ամբապէս գոցեցին և տղեկը տունը տարին:

Հօլանտական կառավարութիւնը այս անձնուէր փոքրիկը վարձատրեց, որովհետև ան իր հայրենիքը փրկած էր մեծ վտանգէ մը:

Ամէն տղայ իր հայրենիքին ու հայրենակիցներուն օգուտն ու հանգիստը պէտք է մտածէ:

ԲԱՌԵՐ.— Յամաբամաս՝ (ցամաք մաս) երկիր, հողի մէկ մասը, — Խուժիկ՝ յարձակիլ, վազել: — Անդրադարձալ՝ նորէն մտածել, հասկնալ: — ԸՆՍԱՆԳ՝ վազը: — Ուժասպառ՝ (ուժ-սպառ) ուժը հասնիլ:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.— Այս տղուն ըրածը միշտ էր: Եթէ դուք բլլայիր ի՞նչ պիտի ընէիր: Եթէ ջուրը ողողէր տղուն բնակած երկիրը, անոր ծնողքը վտանգէ ու վնասէ զերծ պիտի մնայի՞ն:

## 72. Զ Ի Ն

Զին բնտանի և օգտակար կենդանի մըն է: Կան շատ տեսակ ձիեր, որոնք իրենց կազմին ու զանուած միջավայրին համաձայն մտրդոց կը ծառայեն. կան հաստատուն սրունքներով հսկայ ձիեր որոնք թնդանոթի կառքեր կը քաշեն, ոմանք՝ սովորական կառք քաշելու, ոմանք գաշա հերկելու, կան ալ ձիեր որոնք իրր գրաստ կը ծառայեն:


Զիերու լաւագոյնն ու աղնուագոյնն տեսակը նժոյգն է, որ հեծնելու կը ծառայէ. ան՝ կրնայ շատ արագ քարել ու վազել: Նժոյգ ձին շատ բարեձեւ մարմին մը ունի, անոր բոլոր անդամները համաչափ ու զեղեցիկ են:

Ան՝ սովորական ձիերէն բարձր է. իր սրունքները երկար են, սարանոցը՝ նոյնպէս երկար և կոր, աւկանջները՝ փոքր և միշտ վեր ուղղուած, բնազդով

խելացի է և չառ սիրասե: Ձիերու ընտիր տեսակները Արարիոյ մէջ կը գտնուին:

Ձին աներկիւղ է ու հաւատարիմ. անոր հաւատարմութիւնը տաակի կարգ անցած է:

Օր մը, ձիով աւազակները հետապնդելու ելած էի, երբ ձիս քառամբակ կը վազէր և ես արդէն չառ մտանցած էի աւազակներուն՝ պարտաւորուեցայ զէնքս գործածելու համար ձիէս վար նետուիլ, ձիս՝ իր սրաւտաւ ընթացքին, յանկարծ կեցաւ ու քովս դարով ինձի սպասեց, ինձի օգնելու և օգտակար ըլլալու պատրաստ վիճակի մը մէջ, այդ պահուն, անոր խօսիլը միայն կը պակսէր:



Պատերազմի մը միջոցին, հեծեալներու գունդ մը ձորակի մը մէջ գտնուող թշնամիին վրայ կը յարձակի, թշնամին կը նահանջէ ու հեծեալներուն պատկանող

բանակ մը կ'առաջանայ. ընդհարումէն երեք օր վերջնոյն ձորակէն ուրիշ զինուորներ կ'անցնէին, հոն գրտան զլուխը կախած, տխուր ու նիհարցած ձի մը, որ իր տիրոջը գիակին մօտը կը սպասէր:

Այս ազնիւ ձին՝ անօթի, ծարաւ, օրերով իր տիրոջ գիակին քով պահակ սպասած էր, զայն պաշտպանելով գիշակեր թռչուններուն զէմ:

**ՔԱՌԵՐ.—Պարեհձի**՝ (բարի ձի) գեղեցիկ ձիւ, մարմին ունեցող:—**Հարմաչափ**՝ (համչափ) չափով, ներդաշնակ: **Տիրասէր**՝ (տէրօէր) տիրը սիրող:—**Աներկիւղ**՝ (ան երկ իւղ) վախ՝ հունեցող:—**Սրաւտ**՝ (սուր արջաւ) արագ վազք:—**Չորակ**՝ պղտիկ ձոր:—**Նահանջի**՝ ետ քաշուիլ:—**Քնդի սրում**՝ կռիւ, իրար զարնուիլ:

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.**—Ձի կը սիրէ՞ք:—Ի՞նչ տեսակ ձիեր կը նանչնար:—Ո՞ր տեսակ ձիերը արագավազ կ'ըլլան:— Ի՞նչ ըսել է համաչափ մարմին ունենալ:— Ի՞նչ ըսել է «տուսի կարգը անցած է»:

### 73. ԻՇԻԱՆՆ ԵՒ ԴԱՏԱԻՈՐԸ

Ուէլլի իշխանը, Հենրիկոս, վայրայ և անուղղայ երիտասարդ մըն էր որ իր գիրքին անհամապատասխան ստեղծ կարգի ընկերներու հետ ժամանակ կ'անցընէր և ամէն տեսակ անվայել արարներու մէջ կը գտնուէր:

Օր մը, իր չար ընկերներէն մէկը, գողութեան մը պատճառով դատուեցաւ. գողութիւնը հաստատուելով բանտարկութեան դատապարտուեցաւ:

Իշխանը, որ ներկայ էր դատաւարութեան, երբ

լսեց դատաւնիւք՝ գայրացաւ ու գատաւորին սպանաւ լով հրամայեց ազատ ձգել իր բարեկամը:

— Բանաբ, իշխանի մը բարեկամին տեղը չէ: Եւ Ուէլլի իշխանն եմ, ու իմ բարեկամը, հասարակ գողի մը պէս, բանաբ գրկելէ կ'արգիլեմ ձեզ, ըսաւ իշխանը:



— Ո՛վ կ'ուզես եղիր, սպասախանեց գատաւորը. գատարանին մէջ աչապէս խօսելու իրաւունք չունիս:

Եւ երգուած եմ արդարագատ ըլլալ և արդարութիւնը պիտի գործադրեմ:

Իշխանը՝ աւելի գայրանալով փորձեց անձամբ ազատ ձգել գատաւորաւուածը. սակայն գատաւորը ազգաւարեց իրեն թէ միջամակու իրաւունք չունի, և հրամայեց իրեն վերջ տալ իր անվայել ընթացքին:

Գատաւորի պաշարիւնուրիւնն ու հաստատամտութիւնը բոլորովին կատգեցուցին իշխանը, որ յարձակում գործեց ստեանին վրայ ու գատաւորին ուժգին սպասակ մը իջեցուց:

Գատաւորը, սրանկներուն հրամայեց ձերբակալել իշխանը և իր գոյ բարեկամին հետ բանաբ ատաջնորդել զինքը:

— Կ'չ թէ իմ անձնական արժանապատուութիւնը վիրաւորած ըլլալուն աչլ' օրէնքին պատիւը անարգած ըլլալուն համար կուտամ աչս վճիռք. և իշխանին գատնալով աւելցուց.

— Պարսն, օր մը գուն թաղաւոր պիտի ըլլաս, աչն տունն ինչ իրաւունք պիտի ունենաս հպատակներէջ ննադանցութիւն սրանձեկու, կրը աչժմ գուն ինքզ կ'անարգես թաղաւորին օրէնքները:

Իշխանը՝ աչս խօսքերէն զգածուելով, ատանց աւարկութեան վար գրաւ իր սարը և գատաւորին խոնարհութիւն մը բնելով՝ հանդարտօրէն բանաբ գնաց:

Երբ թաղաւորը լսեց միջադէպը՝ ուրախութենէն բացազանչեց.

— Երջանիկ է թաղաւորը, որ օրէնքը անվախօրէն գործադրող գատաւոր մը, և օրէնքին հպատակիլ պիտոյզ գանձատանց մը ունի:

Հենրիկոս Անգլիոյ մեծագոյն յաղթական թագաւորներէն մէկն եղաւ . իսկ գասաւորը՝ իր սիրելի ու վաստակի պաշտօնատարը մնաց միշտ :

ԲԱՌՆԲ. — Ստորին՝ ցած : — Աւարճ՝ ցրտ : — Գաւազնիւ՝ գատարանի սրոյում — Ազգաւորելի՝ հրապարակով ընել, յայտնել : — Պաղարիւն՝ հանդարտ :

ԹԵԼԱՅՐՈՒԹԻՒՆ. — Բազմակցեր իշխանն ու գասաւորը : Պաղպեղը թագաւորին ըսածները :

ԻՆՏԵՐՅ. — Ուղի ի խանը Անգլիոյ գահաժառանգն է, որ կը յաջողէ մեծող թագաւորին :

## 74. ԱՆՁՆՈՒԷՐ ԱՂԶԻԿԸ

### Ա.

Ի՞նչու հարիւրապետ մը Սիպերիոյ աննշան մէկ գիւղը աքսորուած էր իր կնոջն ու աղջկան հետ : Աղջիկը՝ Կատարինէն իր ծնողքի թշուառ վիճակէն ու անկանկուրծելի կեանքէն ազրուած, մտադրեց մայրաքաղաքը, Ս. Փեթերսպուրկ երթալ ու իր ծնողքին ներուժը խնդրել Չարէն :

Այս գաղափարով տարուած՝ Կատարինէն օրը օրին կը տանջուէր, սովորէն և մեղամարտուող կը գտնար ու իր սովորական աշխատանքն անգամ կատարելու կը թերանար . մտադիր ու երազիրու եղած էր Կատարինէն :

Ծնողքը՝ մտահոգուած իրենց միակ ու սիրական դուստրի այս տխուր վիճակէն, ուզեցին ասոր պատ-

ձառը հասկնալ : Կատարինէն, միամտօրէն պարզեց իր նպատակն ու ծրագիրը : Հայրը՝ ծաղրեց զինք, մայրը՝ յանդիմանեց ու երկուքն ալ պատուիրեցին որ անուկան փոքրիկ աշխատանքներով զբաղի և իր զուխէն վեր գործերու մասին չմտածէ :

Սակայն իր ծնողքին ծաղրանքը, յանդիմանութիւններն ու սպանալիքները չկրցին՝ զինքը արգիլել իր սրտուժը գործադրելէ : Երեք տարուայ աստապանքէն յետոյ, իր ծնողքն ալ պարտաւորուած՝ հասանութիւն յայտնեց իր մեկնութիւն :

Տասնութը տարեկան աղջկայ մը համար այս ուղեւորութիւնը անասր բան էր : Հարիւրաւոր քիչօմէթը ձամբայ պիտի երթար սուբուլ : Ընդարձակածուտայ անտաներ, անասնան ձիւնածածկ սալխասաններ պիտի կտրէր քարկով . մինչդեռ իր վրայի հինցած մաշած զգեստներէն դատ ուրիշ հագուստ չունէր, իսկ զրամ ըլլալով՝ միայն արծաթ բուլլի մը ունէր իր զրոյանը . սակայն արխախրա էր ու իր ծրագրովը խանդավառուած :

Ձամբան անպատեհի զժուարութիւններու ու անակնկալ վատնոյներու հանդիպեցաւ : Յաճախ փոթորիկներու բռնուեցաւ . անձրևի, հովի ու ցուրտի գէժ շատ անգամ մաշտաներու մէջ սպաստանեցաւ : Փորան ու խանուտ թիւնը մինչև իր սեղանները թափանցեցին :

Անգամ մը իր ուղեկիցները՝ իր զրամը յափշտակելու համար, զինքը սպաննել փորձեցին : Կատարինէն, քովը մնացած քանի մը աստնոյները սալով հագլու յաջողեցաւ իր կեանքը փրկել : Յաճախ հարուստներու գուռներէն վանտուեցաւ իրը հասարակ մտրապիկ մը, սինդրոր մը : Տասնութիւններն ու սպաստեցինքը շատ անգամ անարգեցին զինքը : Փողոցի ստա-

հանկերը կը հարածէին զինքը և չուները իր վրայ կը յարձակէին:

Բ.

Ազգետութեան կէտը չկատարած՝ վրայ հասաւ ձմեռն ու դժուարութիւնները բազմապատկուեցան. սակայն երբեմն ալ ունեցաւ բարի ու ազնիւ ուղեկիցներ, որոնք ձիւնով կը չփէին իր ստամ աշտերն ու ձեռքերը և իրենց վրայի մորթի վերարկուները փոխն ի փոխ անոր կը հաղցնէին և կարելի խնամքը կը տանէին անոր:

Նաւակով Վօրկա գետին վրայ ճամբորդած միջուցին՝ գետը ինկաւ, թէև զինքը ազատեցին խեղդուելէ, սակայն իր ատոջութիւնը քայքայուեցաւ, ու պարտաւորուեցաւ քանի մը ամիս արատաւանիլ կուսակնոց մը, ուր գիծութեան յոյրերու հոգածութիւնն ու դուրդուրանքը վայելեց:

Մէկուկէս տարի ճամբորդելէ յետոյ, վերջապէս հասաւ փեթեքապօրի: Աղիւսագիրը ձեռքը բռնած՝ տանընչինց օր սպասեց ձերականտարանի սանդուղնուրուն վրայ. բազմաթիւ անյաջողութիւններէ ու վրիպումներէ վերջ՝ յաջողեցաւ զանկ բարեւիրա մարդ մը, որ խոստացաւ զինքը ներկայացնել Չարին:

Ներկայացաւ Չարին՝ որ իր ծնողքին ներում չընտրեց: Երբ Չարը անոր սիրուն աշտերը շոյելով հարցուց թէ ուրիշ խնդրանք մը ունի՞. կատարինէն ներումը խնդրեց երկու ձեր ու բարեւիրա արտորականներուն, որոնք իր ճամբորդութիւնը զիւրացուցած էին: Այս խնդրանքն ալ բնորոշուեցաւ:

Այս հերոս աղջկան ու իր ծնողքին հանդիպումը

չափազանց յուզիչ եղաւ: Երբ հայրն ու մայրը անոր ծունկերուն փարած՝ արցունքներով իրենց շնորհակալութիւնը կը յայտնէին, աղջիկը լալազին ըսաւ.

— Այս հրաշալի փրկութիւնը միայն Աստուծոյ պարտական ենք, անոր յայտնեցէք ձեր երախտապարտութիւնը:

Սակայն քաժակնն ու սպառումը կատարելապէս քայքայած էին կատարինէի ատոջութիւնը: Իր ծնողքը փրկած էր իր կեանքին գնովը:

Քանի մը ամիս վերջ, ատուօտ մը, գիծութեան յոյրերը որոնց հետ կ'ապրէր կատարինէ, մտան իր սենեակը, ուր կատարինէն պատկած, թեւերը խաչածեւ, յախանական խաղաղ և անվրդով քունովը կը ննջէր:

ԱՄՅԵՐ.— Աճեանդուրժիկի՝ անտանելի:— Մաջիք՝ միտքը ցրած:— Ազգետութիւն՝ ճամբորդութիւն:— Չեմարի՝ բանի մը ձեռք զարնել:— Տախաստան՝ դաշտ:— Աղեկից՝ ճամբու ընկեր:— Կուսակնոց՝ կիներու յատուկ վանք, բնակարան:— Հոգածութիւն՝ խնամք:— Աղիւսագիր՝ խնդրագիր:— Տաճակ՝ յոգնութիւն, չարչարանք:

ԹԵՆԼԱՅԻՐՈՒԹԻՒՆ.— Պատմեցէք այս պատմութիւնը:— կատարինէի ծնողախորթները, հաստատամտութիւնն ու անմուտիւթիւնը գեղեցիկ օրինակ մըն է ամէն տղու:— կատարինէն տառապ լից կեանք մը ունեցաւ, բայց ունեցաւ նաեւ երջանիկ ու խաղաղ մահ մը, պարտականութիւնը լիովին կատարած և խիզը հանգիստ:

### 75. Գ Ի Շ Ե Ր Ա Շ Ր Ջ Ի Կ Ը

Կարգ մը մարդիկ՝ քնացած միջոցին, արթուն եղածի պէս գործեր կը կատարեն, առանց բրածին գիտակցութիւնը ունենալու: Ասոնք զիւրաւարջիկ կը կոչուին:

Հետեւեալները պատմուած են շատ վատահալի մարդոց կողմէ:

Անգլիացի երէց մը գիշերը քնացած միջոցին անկողնէն կ'ելլէր, բայք կը վատէր, սեղանին առջեւ նստելով կիրականորեայ իր քարոյը կը գրէր, կը սըրբադրէր ու կրկին կը պատկէր:

Նշանաւոր երամիշտ մը ամէն գիշեր կ'ելլէր, երամշտական ընտիր կտորներ կը հեղինակէր, կը սըրբադրէր, վերջնական ձեւ մը կուտար անոնց ու կրկին կը պատկէր, միշտ քնացած վիճակի մէջ:

Ջազացոյցն մը՝ քնացած միջոցին՝ իր ազօրիքի գործերը կը կատարէր ու կը շարունակէր քնանալ:

Թամբազործ մը՝ քնացած պահուն թամբեր կը պատրաստէր:

Ազարակապան մը՝ անկողնէն կ'ելլէր, իր ձին կը թամբէր, շուկայ կ'երթար ու կը վերադառնար, միշտ քնացած վիճակի մէջ:

Իմիշկ մը՝ քնացած միջոցին, անկողնէն ելլելով գնաց այն սենեակը, ուր իր ընտանիքի բոլոր անդամները հաւաքուած կը խօսակցէին, նստաւ անոնց հետ երկար խօսակցութիւններ ունեցաւ, երգեց և զուարճացուց ամէնքը, որոնք կասկած մը չունէին անոր քունի մէջ ըլլալու մասին. իր սենեակը վերա-

դանալով պատկեցաւ ու երբ յաջորդ առաւօտ արթընցաւ, գիշերուան իր բրածէն բնաւ լուր չունէր:

Նահանջի մը միջոցին՝ Սըր ձօն Մուրի գինուորներէն շատերը քնացած վիճակի մէջ կը շարունակէին քալել իրենց արթուն ընկերներուն հետ:

Ոմանք ալ, առանց գիշերաչրջիկ ըլլալու, քունի մէջ կը կատարեն այնպիսի գործեր, որոնք կը կատարուին միայն արթնութեան պարագային:

Կարգ մը ուսանողներ, քնացած պահուն լուծած են թուարանական խնդիրներ:

Իրիկուն մը, պէտք եղաւ Նահապետ Գուչակի անունը յիշել, միտքս չեկաւ այդ անունը և այդ պատճառով ամբողջ գիշերը սանջուեցայ: Աստուան ղէմ՝ «Նահապետ Գուչակ» պտալով արթնցայ, արթընցընելով նաև ընկերներս որոնք ինծի պէս վախցած էին այդ անսովոր երեւոյթէն:

Գիշերաչրջիկը իր այդ անբնական վիճակին մէջ արթնցնելը վատնդաւոր է: Ան՝ գիտակից չէ իր բրածին, և յաջորդ օրը իր բրածներէն բան մը չյիշեր:

ԹԱՌԵՐ.— Գիւրաւարջիկ (գիշեր-չրջիկ)՝ բնաչրջիկ, բունի մէջ արթուն եղածի պէս գործ տեսնել:— Թամբազործ (թամբ գործ)՝ միտ կազմած շինող:— Նահապետ Գուչակ՝ Հայ նշանաւոր աշուղ (երգիչ բանասէր) մը եղած է:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Հետեւեալ բառերուն նման երկուական բառ գտէք.— Գիշերաչրջիկ, թատաղից, ուսանող:

### 76. Ո՛Վ ԷՐ ՇՈՒԷՏԻ ԿԻՒՍՔԱԻ Ա. ՔԱԳԱԻՈՐԸ

Ա.

Շուէտացի հայրենասէր փոքրիկ տղայ մըն էր Կիւսթաւ, որ շատ կ'ատէր Տանըմարքայի թագաւորը, որովհետեւ վերջինս՝ իր բանակներովը շարունակ կ'աւազակէր իրենց երկրին վրայ և կ'ուզէր գրաւել զայն:

Թէև շատ պզտիկ էր Կիւսթաւ, սակայն իր տեւական մտածումն էր կոռել Տանըմարքայիներուն զէմ ու վսարել զանոնք իր սիրելի հայրենիքէն:

Վեց տարեկան եղած միջոցին, օր մը, երբ մաշաոռտի մը մօտերը կը խազար, հայրը զինքը հեռացուց նոյն վայրէն հասկցնելով իրեն որ այդ մաշաոռտին մէջ վտանգաւոր օձեր կան:

— Հայրի՛կ, ըսաւ Կիւսթաւ եռանդաղին, գաւազան մը աւեր ինծի որ սպաննեմ այդ օձերը, որպէսզի ուրիշներու չվնասեն: Այն մտածումը՝ թէ օձերը կըրնային ուրիշներու վնաս տալ, հանգիստ չձգեց զինքը:

Յաջորդ առաւօտ կանուխ ելաւ, գաղցնաբար հաստ գաւազան մը առաւ, մաշաոռտին եզերքը դնաց և օձերուն գուրս ելլելուն սպասեց: Երբ արեւը բարձրացաւ ու տաքութեան ազդեցութիւնով օձերը մէկիկ մէկիկ մաշաոռտէն գուրս ելլել սկսան՝ Կիւսթաւ զանոնք սպաննեց առանձին առանձին: Երբ արեւը մարը կը մտնէր՝ մաշաոռտին մէջ այլեւս ողջ օձ չէր մնացած: Իրիկունը՝ սպաննուած բոլոր օձերուն պոչերը առատանով մը իրարու կապեց ու բոլորը մէկ քաշելով իրենց տանը առջև տարաւ:

Հայրը՝ այս տեսարանէն սարսափահար՝ յանդիմանեց զայն իր անխոհեմութեանը համար:

— Հայրի՛կ պատասխանեց Կիւսթաւ, գուն ինծի սորվեցուցիր կրցածիս շտի բարեք ընել ուրիշներուն: Եթէ ես չսպաննէի այս օձերը, անոնք՝ ուրիշները պիտի խայթէին. պէտք է որ ես ալ մարդոց օգտակար ըլլամ:

Տարիներ վերջ, Քրիսթիան թագաւորը պարձեալ յարձակելով Շուէտի վրայ կ'ուզէր նախ գրաւել անոր գլխաւոր քաղաքը, Աթօքօլմ, և ամբողջ երկրին արեւելով ըլլալ նաև Շուէտի թագաւոր:

Կիւսթաւի հայրը՝ Քրիսթիանի զէմ կոռելու և իր հայրենիքը փրկելու համար, իրեն նման շատ մը հայրենասէր Շուէտացիներ հաւաքեց, սակայն Տանըմարքայիներու բանակը թիւով շատ զերազանց և լաւ մարզուած ըլլալով, յաղթեց Շուէտացիներուն, որոնց մէկ մասը սպաննուեցան, իսկ մնացածները գերի բռնուեցան:

Պատերազմական գերիներուն մէջ ուրիշ կարեւոր մարդոց հետ Կիւսթաւի հայրն ալ կար, ինչպէս նաև ինքը, 16 տարեկան պատանի Կիւսթաւ:

Քրիսթիան՝ խոտապած էր իր գահակալութեան օրը, ազատ ձգել բոլոր գերիները, սակայն, հսկասակ իր այս խոտաման, երեք օր վերջ՝ բոլորն ալ իր հրամանովը սպաննուեցան:

Կիւսթաւի հայրը սպաննուածներուն առաջին շարքին վրայ կը գտնուէր: Կիւսթաւ՝ ինքն ալ պիտի սպաննուէր:

Նոյն զիշերը, Կիւսթաւ պարան մը հիւսեց, բան



տի պատուհանի ձողերուն կապեց ու պարանովը վար կախուելով բանաէն վախուստ առաւ :

Բ.

Կիւսթաւ՝ հօրը սպաննութենէն չափազանց ազդած՝ որչեց ամէն գնով լուծել իր հօրը վրէժը Քրիսթիանը իր հայրենիքէն վտարելով :

Կիւսթաւի կեանքը վտանդի տակ էր, քանի որ ինքը իրր փախստական օրէնքէ դուրս հսկուած էր ուրոնուելու պարագային՝ մահապատիժ պիտի կրէր. հետեւաբար, նախ իր կեանքը ազատելու համար պէտք էր հեռանալ և ապահով տեղ մը գտնել : Խեղճուկ հիւղակ մը մտնելով հովիտի մը աղուն հաղուսաներովը ծղտուեցաւ ու խառնավաճառներուն միանալով անտնց հետ անպահով կերպով վտանգի կարծուած քաղաք մը հասաւ . սակայն, այդ քաղաքին բնակիչներն այ՝ իրենց վախէն՝ թշնամական ընթացք մը բռնեցին իրեն հանդէպ :


Ողբալի վիճակի մը մէջ էր Կիւսթաւ, հաղուսաները բզիկ բզիկ եղած, անօթի ու միշտ ձերբակալուելու վտանդին ենթակայ :

Պէտք էր ուրիշ, հեռուորու ապահով ապաստան մը գտնել, սակայն ինքը չատ ուժասպառ էր, ու ճամբան՝ չատ երկար : Ամէն քայլին կրնար վտանդի մը հանդիպիլ, մասնուիլ ու ձերբակալուիլ : Վերջապէս, սպառող և տաժանի ճամբորդութենէ մը վերջ հասաւ քաղաք մը ուր բաղմաթիւ մարդիկ հաւաքուած՝ խընջոյք կ'ընէին :

Պատուած հաղուսաներով, բոպիկ ու արիւնոտ ոտքերով, սովառանջ ու արցունքոտ աչքերով Կիւսթաւ ամբոխին մէջ մտաւ ու սխառ յուղիշ ձայնով ու ձեւերով նկարագրել հեռուոր գաւառներու մէջ ճանրմարքայիներու կատարած անցթու թիւնները, զաւաղութիւնը, իր հօրը սպաննութիւնը, իր փախուստը, գինքը ձերբակալելու հետապնդումները :

Ամբոխը, աղղուելով Կիւսթաւի խօսքերէն, որոշեց ապստամբիլ ու իր հայրենակիցները օտար լուծէն

ազատել: Կիւսթաւ, թէեւ պատանի մը զեռ, իրենց  
զկիլավար ընտրեցին ու բոլոր հայրենասէրները կրկին  
խմբուեցան:



Հագարաւոր մարդիկ ու խանդիւն կուսիլ ու մեռնիլ  
իրենց հայրենիքին համար: Անոնք կտաւորէն յար-  
ձակեցան Քրիսթիան: Բագաւորի զինուորներուն վրայ,  
հալածեցին զանոնք, յողթեցին և Քրիսթիան թագա-  
ւորը փախցուցին իրենց երկրէն: Շուէտ իր ազատու-  
թիւնը վերստացաւ:

Պատանի Կիւսթաւ վեց տարի երկիրը կառավա-  
րեց իրր անթագ թագաւոր, սակայն իր հայրենակից-  
ներու զանազան խնդրանքներուն ու ստիպումներուն  
տեղի տալով, վեց տարի վերջ, Շուէտի գահին վրայ  
բարձրացաւ Կիւսթաւ Ա. անտ՝ ու:

Կիւսթաւ արքայական սերունդէ չէր, սակայն իր կամ-  
քի, այլասիրութեան ու հայրենասիրութեանը շնորհիւ  
թագաւոր եղաւ:

ԲԱՌԵՐ.— Արեւել՝ յարձակիլ:— Գրաւել՝ տիրել:— Վասել՝  
հեռացնել:— Իւստրալար՝ զաղտնի:— Գերագանց՝ աւելի բարձր,  
աւելի շատ:— Դահակալիլ՝ թագաւոր հռչակուիլ:— Տպաուիլ՝  
ձեւը փոխել:— Խառնավանաւ՝ ոչխարներ ծախող:— Ողբալիլ՝  
խղճալի:— Խննոյլ՝ ուրախութիւն:— Ամբոլա՝ բազմութիւն:— Ղե-  
կավար՝ առաջնորդ:— Վերստանալ՝ նորէն ստանալ:

ԹԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ.— Պատմեցք այս պատմութիւնը: — Դուք ալ  
կրնա՞ք ձեր նմաններուն օգտակար ըլլալ, ինչպէ՞ս: — Ինչո՞ւ հա-  
մար կը սիրէք ձեր հայրենիքը:

## 77. ՃՇՄԱՐՏԱԹՍ ՏՂԱՆ

Սերտողութեան պահերուն, գասարանին մէջ եր-  
բեմն անակնկալ սուլելու ձայն մը կը լսուէր, դաս-  
տիարակը կը ջղայնոտէր տղոց այս արարքէն. սուրողը  
գտնելու իր բոլոր ջանքերը ապարդիւն մնացին, ճարը  
հատած՝ սպառնաց խիստ պատիժի ենթարկել յանցա-  
ւորը:

Յաջորդ առաւօտ, կըր գասարանին մէջ բացար-  
ձակ լուծիւն կը տիրէր, սուլելու սուր ձայն մը լըս-  
ուեցաւ: Աշակերտները իրար անցան, իսկ ուսուցիչը  
սկսաւ յանցաւորը փնտռել:

Բոլորին ուշադրութիւնը յաճախ նոյն թերութեանը  
մէջ գտնուող աշակերտի մը վրայ կկեդրուեցաւ: Ուսու-  
ցիչը հարցաքննեց զինքը, իսկ տղան վճռաբար ուրա-

ցաւ, և որովհետեւ տղան ճշմարտախօս մը ճանչցուած չէր, իր բոլոր չքմեղանքները օդուտ մը չունեցան, և ուսուցիչը զինքը պատմելու համար մէջտեղ բերաւ:

Աշակերտներէն ինը տարեկան և ինասրակազմ տղեկ մը, Կարապետ, որ անձկութիւնով կը հետեւէր այս անցուդարձին, յանկարծ ոտքի ելլելով.

— Պարո՛ն, Յովհաննէսը մի պատմէք. սուրղը ես էի. քարէտախտակին վրայ դժուար խնդիր մը լուծած էի. սխալմամբ՝ լուծուած խնդիրը աւրած միջոցիս անգիտակցաբար սուղեցի: Ներեցէք պարս՛ն, չեմ ուզեր որ Յովհաննէսը պատժուի, յանցաւորը ես եմ, զիս պատմեցէ՛ք ըսելով Կարապետ մօտեցաւ դաստիարակին ու պատմուելու համար ձեռքը անոր երկնցուց.

Ուսուցիչը՝ այդ փոքրիկ ձեռքը բռնելով, ըսաւ յուզուած.

— Ապրի՛ս, աղնիւ տղաս, գիտենք թէ դուն ճըշմարտախօս ես ու գիտմամբ չսուղեցիր, ես չեմ կրնար պատմել քեզ, տեղդ նստէ՛:

Կարապետ՝ կասկարմիր իր տեղը գնաց: Դասարանի բոլոր տղոց սիրտերը արդար հպարտութիւնով մը ուռեցան. ամէն տղայ կը սիրէր Կարապետը, ամէն տղայ կ'ուզէր Կարապետին նմանիլ:

Այս միջադէպէն յետոյ դասարանին մէջ սուղելու ձայն չլսուեցաւ երբեք:

Կարապետ՝ ճշմարտախօսութեան ու քաջասրտութեան լուսադոյն օրինակը սուած էր իր դասընկերներուն:

ՔԱՌԵՐ.—Նեղրոնեանց՝ տեղի մը, կէտի մը շուրջ հաւաքուի: —Նիխարակազմ՝ Նիհար կազմ բանեցող:— Անգիտակցարար առանց զիանալու, առանց ուզելու:

ՃԱՐՅՈՒՄՆԵՐ.—Դասարանին մէջ դուք ի՞նչ յանցանքներ կը գործէք:—Յովհաննէս ի՞նչ թերութիւններ ունէր:—Դուք Կարապետին պէս ճշմարտախօս էք:

### 78. ԶԱՐ ԻՎԱՆ ՈՒ ԳԻՒՂԱՅԻՆ

Ա.

ԺԶ. դարուն, Ռուսիոյ Չարը՝ Իվան՝ յաճախ ծըպտուած կը պտտէր Մոսքուայի մէջ և ժողովուրդին հետ մօտէն չիում կ'ունենար, որպէսզի կարենար իսկական և ծածուկ թշուառութիւնները գտնել և մեղմել անոնց զժբախտութիւնը:

Իր շրջագայութիւններէն մէկուն միջոցին, մայրաքաղաքի Եղզակայ փոքրիկ մէկ գիւղը գնաց ու հոն գիշերել ուզեց: Քանի մը գիւղացիներու գիմեց, անոնցմէ գիշերային ապաստան մը խնդրելով՝ բայց ամէն տեղ մերժումի հանդիպեցաւ:

— Պանդուխտ մըն եմ, ըսաւ, զժբախտ մը, զաւակներս ապրեցնելու համար գործ փնտռելու ելած եմ. ուտելիք չեմ ուզեր ձեզմէ, այլ յանուն Աստուծոյ տեղ մը, ուր կարենամ յոգնած մարմինս գիշեր մը հանգչեցնել:

—Մենք աւելորդ տեղ չունինք, պատասխանեցին անոնք, ուրիշներու գիմէ, հեռացիր մեր դուռնէն ու անհանդիստ մ'ընել մեզ:

Դառնացած՝ Իվան գիւղէն հեռանալու վրայ էր՝ երբ նումարեց հիւղակ մը, և խորհելով որ այդ խեղճուկ հիւղակին բնակիչները ապահովարար օժանդակու-

բեան պէտք կ'ունենան՝ մտակցաւ հիւղակին. զուարթախեց ու յոգնաբեկ երեւոյթով մը սկսաւ պաղատիլ.

— Յուրաքանչէր, անօթութենէ կը նուազիմ. գիշերուան մը համար հանգիստ ու պասսպարաւս մը շնորհեցէք ինձի, կ'աղաչեմ:

— Աստուհ, պատասխանեց զուարթախեց գեղջուկը մեր փափաքածին պէս պիտի չկրնանք գոհացնել քեզ. դժբախտ ատեն մը եկար. կինս ցաւէ բռնուած է. վախնամ թէ քեզ անհանգիստ կ'ընենք. սակայն ներս եկուր, քիչ մը տաքցիր ու ինչ որ Աստուած տուած է, կը բաժնենք մէջերնիս:

Այս շատ համեստ ու հիւրընկալ հիւղակին մէջ, անմիջապէս Չարին ուշադրութիւնը գրաւեցին երկու մանկիկներ որոնք մշիկ մշիկ կը քնանային օրրանի մը մէջ, օրրանին մօտ, մորթի մը վրայ կը հանգչէր շուրջ երեք տարու աղեկ մը որուն հինգ և եօթը տարեկան երկու քոյրերն ալ անկիւն մը ծունկի եկած կ'աղօթէին:

Տանտէրը հիւրին դառնալով.

— Հոս նստէ ու քանի մը վայրկեան իմ վերադարձիս սպասէ ըսաւ ու զուրս ելաւ, շուտով վերադարձաւ ու հետը բերած քանի մը հաւկիթ, քիչ մը մեղր ու սեւ հաց մը գնելով հիւրին առջև, աւելցուց, աւելի բան մը չունինք դժբախտաբար, փոքրիկներուս հետ կերէք. սիրտս տակնուվրայ է, ևս բան մը չեմ կրնար ուտել:

— Աստուած օրհնէ քու տունդ ու վարձատրէ հիւրասիրութիւնդ ու բարեսրտութիւնդ:

— Բարեկամս, աղօթէ Աստուծոյ որ կնոջս կեանքը խնայէ, այս է իմ միակ բաղձանքս, ըսաւ յուզուած ամուսինը:

— Այդ փափաքիդ գոհացումովը զուն կրնաս երջանկանանալ:

— Երջանիկ, կրկնեց զիւրացին ևսանդագին, հինգ հատ հրեշտականման զաւակներ ունիմ, կին մը որ վրաս կը զուրդուրայ: Ժիր ու կայտաս հայր ու մայր մը, հաստատուն առողջութիւն մը, և զորձ մը որ կրնայ ամէնքս ապրեցնել: Հիմա, զուք զատեցէք, երջանիկ չե՞մ:

— Ուրեմն հայրդ ու մայրդ ո՞ղջ են հարցուց իվան:

— Անշուշտ, մայրս քովի սենեակին է:

— Սակայն, բարեկամ, հիւղակի շատ պզտիկ է:

— Բոլորիս համար ալ բաւական մեծ է, սակէ դատ մեկի խաղաղութիւն ու գոհունակութիւն կուտայ այդ հիւղակը:

Ք.

Այս երջանիկ մանկանացուն՝ որ յարակից սենեակը մտած էր, քանի մը վայրկեանէն վերադարձաւ ու իր գրկած նորածինը ներկայացնելով օտարականին,

— Ես, կնոջս պարգևած վեցերորդ զաւակն է այս. ա՛ս, ինչ սիրուն մանկիկ է: Աստուած պահէ կինս:

Չարը՝ յուզուած, մանկիկը գիրկը աննելով խորհրդաւոր կերպով մը ըսաւ անոր հօրը.

— Այս մանուկին գէմքէն կը գուժակեմ թէ անշատ բարձր գիրքերու պիտի արժանայ և շատ բախտաւոր պիտի ըլլայ:

Հիւրընկալը քմեքմեղով մը գլուխը շարժեց և,

— Ո՛րկէ պիտի կրնայ զալ այդ բախտը ըսաւ:

Քանի մը վայրկեան վերջ յոգնած ու տանջուած

տանակէրը խոտէ անկողնին վրայ երկնցած, խոր քունի մը մէջ թաղուած էր. այս խոնարհ բայց երջանիկ բոյնին մէջ, միայն Իվան քուն չունէր ու անյազօրէն կը գիտէր իրեն համար անսովոր այս ընտանեկան տեսարանը:

Ինչ անվրդով երջանկութիւն, հոգեկան ինչ խաղաղութիւն, նախանձն ու փառասիրութիւնը սակէ ներս մտած չեն. որքա՛ն քաղցր է ու նախանձելի անմեղութեան քունը: Այսպէս կը խորհրդածէր Իվան:

Գիւղացին, սովորականին պէս առտուն կանուխ ելաւ իր օրական աշխատանքը վերսկսելու համար: Անձանօթը՝ մեկնելէ առաջ եղած հիւրասիրութեանը համար իր շնորհակալութիւնը յայտնելով, աւելցուց.

— Մտակուայի մէջ շատ բարեւէր մարդ մը կը ձանչնամ, ինծի հանդէպ քու մարդկայնական ազնիւ վերաբերումը իրեն հասկցնելով՝ պիտի խնդրեմ իրմէ որ ինքը կնքահայրը ըլլայ այս նորածին մանկիկին. ուրեմն խոստացիր աղեկը չմկրտել<sup>(\*)</sup> մինչև իմ վերադարձը, ես երեք օրէն պիտի վերադառնամ:

Գեղջուկը, թէև օտարականին խօսքերուն ու տուած յոյսերուն մեծ կարեւորութիւն չտուաւ, ինքը հասարակ գիւղացի ազքատ մարդ մը, ո՛ւրիշ ուր այդքան մեծ մարդու մը բարեկամութիւնն ու պաշտպանութիւնը վայելելու բախար պիտի ունենար: Սակայն իր խոստումը պահեց մինչև վերջը, իսկ երրորդ օրը երբ որոշեալ մամուն մէկը չեկաւ, մանկիկը իր մօրը գիրկը տուաւ և մկրտութեան համար ընտանեկան թափօրը եկեղեցի մեկնելու պատրաստուեցաւ: Նոյն պա-

(\*) Ռուսաստանի մէջ սովորութիւն էր մանկիկը մկրտել ծնւթէն անմիջապէս վերջ:

հուն, գիւղացին, ձամբուն վրայ, հետուն, կառքերու շարան մը նշմարեց, որուն կ'ընկերանար կայսերական պանակագունկը:

Տանտէրն ու բոլոր գիւղացիները սպշահար կը գիտէին այս արտասովոր տեսարանը:

Արքայական չքախումբը եկաւ ու հիւղակին առջև կեցաւ:

Պահակագունդը բարեւի կեցաւ: Չարը կտօքէն լծաւ ու չուարած և չփոթած գեղջուկին մօտենալով ըսաւ.

— Կնքահայր մը խոստացած էի, ահա խոստումս կատարելու եկայ, նորածինը ինծի բեր, անմիջապէս եկեղեցի պիտի երթանք:

Ուրախութենէն, յուզումէն, զարմանքէն և երջանկութենէն գիւղացիին լեզուն բռնուած էր: Խեղճը ինչպէս կրնար ըմբռնել թէ քանի մը գիշեր առաջ իր ազգատիկ հիւղակին մէջ հիւրընկալուած այդ խեղճուկ երեւոյթով ձամբորդը կայսրն էր:

Կայսրը տեսնելով իր հիւրընկալին այս չուարուն վիճակը, մեղմօրէն ըսաւ անոր.

— Քանի մը օր առաջ, դուն ինծի հանդէպ քու հիւրասիրական պարտականութիւնը կատարեցիր, հիմա, ես եկած եմ փոխադարձաբար կատարելու իմ վեհապետական ամենաքաղցր պարտականութիւնը. ես պարտաւոր եմ վարձատրել քու բարձր առաքինութիւնները, առանց սակայն քեզ գրկելու այն վիճակէն, ուր ազգատութեանդ մէջ անգամ այնքան երջանիկ էիր. սակայն, դուն պիտի ունենաս կենդանիներու անհամար հօտեր, անոնց համար ընդարձակ արօտավայրեր և լայնօրէն պատահութիւն պիտի ունենաս մարդասիրական բոլոր բաղձանքներդ իրագործելու: Քու նորա-

ծինդ իմ անմիջական պաշտպանութիւնս պիտի վայել-  
բէ: Յիշէ թէ ես անոր ապաղաչի մասին դուշակութիւն  
մը բրած էի:

Ուրախութենէն ու դարմանքէն զինուոյցած խեղճ  
բարեսիրտ զիւղացին՝ չնորձակալութեան բառ մը ան-  
գամ չկրցաւ արձայայտել, և հագիւ կրցաւ մանկիկը  
յարգալիր ձեւով մը կայսեր սաքերուն առջևը դնել:

Չարը՝ եկեղեցիին մէջ իր կնքահայրութեան պար-  
տականութիւնը անձամբ կատարելէ յետոյ՝ հրամայեց  
մանկիկը իր սննտու մօրը խնամքին յանձնել:

Երբ տղեկը քիչ մը մեծցաւ՝ Չարը անոր իշխանա-  
վայել գաստաբարակութիւն մը ապահովեց անձնապէս  
հետեւելով անոր առաջգիմութիւններուն:

Այս տղեկը իր վրայ գրուած յոյսերը արդարա-  
ցուց, ու երբ մեծցաւ, Ռուսիոյ նշանատը գէմքերէն  
մէկն եղաւ. իսկ հայրը, մինչև իր մահը, Չարին չը-  
նորհներն ու պաշտպանութիւնը վայելեց:

ԲՍՈՒՆԲ. — Չար՝ հին ատեն Ռուսիոյ թագաւորին անունը, տիտ-  
ղոսը: — Երջակայ՝ մտերը գտնուող: — Ապաստան՝ պաշտպանուե-  
լու տեղ: — Մեծիկ՝ չընդունիլ: — Նճարեկ՝ հեռուէն տեսնել: —  
Օձակալութիւն՝ օգնութիւն: — Յոգնութիւն (յոգն բեկ)՝ շատ  
յոգնած: — Հիւրընկալ՝ հիւր ընդունող: — Մահկանացու՝ ան որ  
կը մեռնի: — Յարակից՝ բովը, կից: — Անվրդով՝ խաղաղ: — Հո-  
ղեգրաւ՝ հոգի գրաւող: — Խորհրդածիլ՝ խորհիլ, ինքնիրեն մտա-  
ծել: — Մեկնիլ՝ երթալ: — Ինուտակիլ՝ առաջուրնէ ըսել: — Պահա-  
կազուցիլ՝ վեհապետը պաշտպանող զինուորներու խումբը: — Ըմ-  
բունիլ՝ հասկնալ: — Աւտայայտել՝ ըսել, յայտնել: — Ասնու (ը-  
տինք տու) կաթ տուող:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ: — Չարը ինչո՞ւ ծպտուած կը պտտէր: — Ինչո՞ւ  
համար զիւղացին իր աղբատ վիճակին մէջ երջանիկ էր: — Չարը  
ինչո՞ւ չկրցաւ բնամալ: — Գիւղացին ինչո՞ւ համար շփոթեցաւ երբ  
կայսրը եկաւ: — Գիւղացին ի՞նչ բանի համար վարձատրուեցաւ:

### 79. ԵՍ Կ՝ՈՒՉԵՄ ԸԼԼԱԼ...

Մայիսին՝ ըսի ես թիթեռնիկին  
— Ի՞նչ է քու պաշտօն, թիթեռնիկ սիրուն,  
Ինչո՞ւ այսպէս միշտ դարնան ու ծաղկին  
Անբաժան ընկեր, թափառիս անտուն:  
— Իմ զուարթ կեանքը օրինակ մ'է անոնց  
Որ կ'ուզեն ըլլալ օգտակար մարդոց:

Յունուարին ամպոտ, ըսի արեւին,  
— Ի՞նչ է նպատակդ, որ այսպէս դուն միշտ,  
Ոսկի ճառագայթ լոյս կուտաս երկրին:  
Կուգաս ու կ'երթաս նոյն ժամերուն ճիշտ:  
— Իմ այրող կեանքիս ջերմութիւնն ու լոյս,  
Կ'ապրեցնեն մարդիկ, կենդանին ու բոյս:

Մեղուն ժրաջան, ինձ այսպէս ըսաւ.  
— Ծաղիկներէն ես շինեմ մեղր անուշ.  
Չարերն կը խայթեմ տալով անոնց ցաւ:  
Ամէն առաւօտ, ո՛չ ծոյլին պէս ուշ,  
Կ'կլլեմ փեթակէս, ու կ'երթամ դործիս,  
Այս պատճառով ալ դուք կը սիրէք զիս:

Ծաղիկն ու թռչուն, հոգն ու ամէն բան,  
Նըպատակ ունին ըլլալ օգտակար,  
Անոնք որ նոյնիսկ համբ են ու անբան:  
Ես ալ պիտ'ջանամ, թէև չառ տրեկար,  
Օր մը ըլլալու մարդ մը անուանի,  
Որուն յիշատակ չուտով չմտնի:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.—Ի՞նչ օգուտ ունի թիթեռնիկը:—Առանց արե-  
ւին կրնա՞նք սպրիլ:—Ի՞նչ կուտայ մեզի մեղուն:—Ի՞նչ կը կոչ-  
ուի մեղունին բնակարանը:—Յոյլ տղար կրնա՞ն օգտակար մարդիկ  
դառնալ:—Ի՞նչ ըսել է համր, անրան:

### 80. Կ Ի Ի Ր Ո Ս

#### Ա.

Թագաւորը երազին մէջ տեսաւ որ իր աղջիկը  
մանչ զաւակ մը ունեցաւ. մանչը մեծցաւ, հրամանա-  
տար եղաւ բազմաթիւ գինուորներու ու իր երկրին վը-  
րայ արչաւելով իր գահը յափշտակեց: Թագաւորը սար-  
սափահար արթնցաւ. երազը այնքան ազգած էր իր  
վրայ որ իրականութիւն կը թուէր իրեն. զայրացած  
ու ջղային դարձած էր թագաւորը, աւելի անգութ ու  
աւելի բռնակալ դարձաւ:

Թագաւորին աղջիկը, որ ամուսնացած էր Պարսիկ  
իշխանի մը հետ, այս երազէն երկու օր վերջ, արու  
զաւակ մը ունեցաւ, հայրը՝ ուրախութիւն կեղծելով՝  
պալատը հրաւիրեց իր աղջիկն ու քանի մը օր վերջ  
վստահելի պալատականի մը հրամայեց որ մանկիկը  
գողնայ ու ամայի տեղ մը տանելով՝ ձգէ հոն որպէսզի  
մեռնի մանկիկը:

Պալատականը տուաւ մանկիկն ու տարաւ չաս  
հետաւոր լեռներ, բայց այդ անմարդաբնակ լեռներուն  
մէջ իր ոչխարները արածող հովիւի մը հանդիպեցաւ:  
Պալատականը թագաւորին վախէն կ'ուզէր անոր կամ-  
քը կատարել, սակայն վերջին պահուն խղճահարու-

թիւն մը զգալով չուզեց մանկիկին մահուան ուղղակի  
պատճառը ըլլալ. այլ հովիւին յանձնեց զայն, պատ-  
ուիրելով որ տանի բոլորովին ամայի տեղ մը ձգէ,  
որպէսզի հոն մեռնի սղեկը:

Հովիւը՝ մանկիկը գրկած տարաւ իր հիւրակը, ուր  
իր սգաւոր կիներ գեռ նոր մեռած իր սղեկի գիտկին  
վրայ կուլար: Հովիւին կիներ մանկիկը տանելով իր  
կուրծքին վրայ սեղմեց, համբուրեց զայն ու յանկարծ  
իր ամուսնոյն դառնալով,

—Այս սիրուն հրեշտակը պէտք չէ որ անօթի մեռ-  
նի, կամ վայրի գազաններուն կեր դառնայ: Ես պիտի  
ըլլամ անոր մայրը ու զուն՝ անոր հայրը:

Թէևս հովիւն ալ կ'ուզէր վրկել սղեկը, բայց զի  
տէր թէ եթէ թագաւորին հրամանը չգործադրէր, մա-  
հու պատիժ պիտի կրէր:

Այր ու կին հովիւները երկար խորհրդակցելէ յի-  
տոյ, որոշեցին իրենց մեռած զաւակին մարմինը ա-  
մայի տեղ մը ձգել ու անմիջապէս լուր տալ պալատա-  
կանին:

Երբ պալատականը մանկիկին մահը ստուգեց՝ թա-  
գաւորին նալորեց: Դիակը թագեցին ու անխիղճ թա-  
գաւորը հանգստացաւ:

Հովիւները իրենց որդեգիրին անունը կիւրոս գը-  
րին: Կիւրոս թէևս ազբաս՝ բայց երջանիկ էր: Բոլոր  
գիւղացիները կը սիրէին հովիւին տղան որ գեղեցիկ,  
բարեսիրտ ու քաջ պատանի մը եղած էր:

#### Բ.

Պատանի կիւրոս՝ հովիւ մըն էր, որու հօտին չէին  
համարձակիր մօտենալ կատաղի գայլերն անգամ. ա-

նոր ոչխարները կը մնային անստանդ ու անվառ: Իր ճարտիկութիւնովն ու քաջասրտութիւնովը զիւղի բուրբ տղոց մէջ անուանի էր ան. խաղերու թէ կոխենք ու մէջ տղոց զեկամարն էր ու դատաւորը. բոլոր իր սարեկիցները, նոյնիսկ իրմէ մեծերը այնքան կը սիրէին ու կը յարգէին զինքը որ իրենց թագաւոր նշանակեցին զայն:

Ընկերները թագի ձեւով ծաղիկաբազ մը շինեցին ու անոր զլուխը գրին: Ոմանք իր թիկնապահներն եղան, ուրիշները՝ պալատականներ ու զինուորներ:

Կիրոս պատանի թագաւոր մը եղաւ. իր արքայական շքեղութիւնովը, չքախումբովն ու հպատակներովը: Պատանի թագակիրը, իր այս վիճակին մէջ, այնքան բուրջ ու մեծկայելուչ էր որ կարծես թէ իրական արքայ մըն էր ան: Անոր հրամաններն ու կարգադրութիւնները, ատանց բնդիւմուրեան կը գործադրէին իր հպատակներուն կողմէ:

Օր մը սակայն, հպատակներէն ազնուականի մը զաւակը մերժեց նապանդիլ կիրոսի հրամանին: Ազնուազարմ տղայ մը ի՛նչպէս կրնայ ենթարկուիլ հովիւի տղու մը հրամանին: Կիրոս յայտարարեց քմբոս տղուն թէ պէտք է նապանդիլ թագաւորին, հակասակ պարագային՝ իրը բմբոս պիտի պատժուի, ու զպնասրով իր թիկնապահներուն հրամայեց կապել ու ձեռնել ազնուազարմ բմբոսար:

Տղան՝ բարձր սունըր գնաց ու եզածը պատմեց իր հօրը: Հայրը՝ տղան ասնելով ուղղակի վեհապետին տարաւ և ձեռնին հեռեւանքով տղուն մարմնին կապուացած մասերը ցոյց տալով, բառ զայրազին.


—Ո՛վ արքայից արքայ, ո՞ր օրէնքին համաձայն

ստուկ հովիւի մը սարուկ տղան իրաւունք կ'ունենայ ինձի պէս ազնուականի մը զաւակը այսպէս ձեռնելու, տանջելու:

Վեհապետը բնեց ամբողջ պատմութիւնը ու կատաղօրէն հրամայեց իր թիկնապահներուն, որպէսզի չուտով իրեն բերեն այդ հովիւն ու իր յանդուգն տղեկը:

Գ.

Երբ հովիւն ու իր տղան ներկայացան արքային, հայրը՝ սարսափէն կը դողար, մինչ տղան համարձակօրէն արքային աչքերուն մէջ կը նայէր:



—Գո՛ւն թշուառ հովիւի մը տղայ, ի՛նչպէս կը յանդգնիս ձեռնել ազնուականի մը զաւակը, որոտաց վեհապետը:

— Ընկերներս զիս իրենց թագաւոր նշանակեցին, իսկ այս ազան մերձեց նազանդիլ թագաւորին, ես ալ վարուեցայ այնպէս, ինչպէս կը վարուի քեզ պէս թագաւոր մը իր սպասամբ մէկ նպատակին նկատմամբ:

Այս թագաւորը կիւրոսի հարազատ մեծնայրն էր, ան՝ որ հրամայած էր սպաննել ու անհետացնել զինքը: Կիւրոս՝ անդիտակ էր այս իրողութեանը. ան՝ գիտէր թէ՛ իր իրական հայրը հովիւն էր:

Տղան այնքան համարձակ խօսեցաւ որ թագաւորը չուարած՝ դայն ուշադրութեամբ զննեց և այն համոզումը ունեցաւ թէ այդ ազան խեղճուկ հովիւի մը զաւակը չէր կրնար եղած ըլլալ, այլ՝ ազնուական ծագում մը պէտք էր ունեցած ըլլար:

Գաղտնիքը երեսան հանելու նպատակով, թագաւորը, խիստ հարցաքննութեան մը ենթարկեց հովիւը, որ չփոթելով ձնկաջոխ պարտաւորուեցաւ խոստովանելի ամբողջ ճշմարտութիւնը:

Թագաւորը՝ սպասմութիւնը լսելով վրդովուեցաւ, ուրեմն երազը պիտի իրականանար, այս ազնիւ պիտի մեծնար ու հաւանաբար իր գանձը օր մը, իրմէ յաժըշտակէր. սակայն, ի՛նչպէս սպաննել տար այս սիրուն ու քաջ ազնիւ, որ միեւնոյն ատեն իր թոն էր:


Թագաւորը՝ մոզերու խորհուրդին դիմեց. մոզերը պատասխանեցին թէ յուզուելու պէտք չկայ, քանի որ ազան արդէն մանուկներու թագաւոր եղած էր, նեւ տեսարար երազն ալ այս կերպով իրականացած էր:

Ապահովուեցաւ թագաւորը ու ազան իր խեղճան ծնողքին զրկեց, յայտնելով թէ կորսուած ազնիւ ինքը գտած է:

Կիւրոսի ծնողքը երկար ատենէ ի վեր, իրենց

կորսուած զաւակը գտնելով խնջոյքներ կազմակերպեցին ու առատօրէն վարձատրեցին բարեսիրտ հովիւն ու կինը, որոնք իրենց սիրական զաւակին փրկիչը եղած էին:

Կիւրոս՝ քոյրսովին նոր սրբանուններու մէջ տարբեր



կեանք մը տարեցաւ: Հովուական խեղճուկ խրճիթին տեղ՝ հոյակապ սպառախ մը մէջ կ'ապրէր. ունէր բազմաթիւ ծառաներ, ձիեր, վերջապէս իր փափաքած աճէն բան. սակայն երբեք չմոռցաւ հովիւն ու հովու-

հին, և ամէն կերպով անոնց երջանկութիւնը սպա-  
նովեց:

Ստեփանն Կիւրոս իշխանազուն մըն էր. և իբր այդ  
չստ մը իրաւունքներ ու պարտականութիւններ ու-  
նէր: Իշխան մը պէտք է որ ուսում ունենայ, որպէսզի  
կտաւաբարկ գիտնայ. լաւ գիտութեամբ մը ըլլալու  
համար պէտք է որ լաւ մտադրած ըլլայ, որպէսզի  
հեղինակութիւնն ունենայ և քաջութեան օրինակը  
տայ:

Կիւրոս մեծցաւ, աստղջ ու բարեձեւ մարմնի, զօ-  
րաւոր կամքի ու բարձր նկարագրի տէր իշխան մը  
կալաւ:

Բանակալ թագաւորին ղէմ պատերազմ տեղի ու-  
նեցաւ: Հակառակորդ երկու բանակներու հրամանա-  
տարներն էին Կիւրոսի մեծ հայրը, արքայից արքան  
ու իր թուր Կիւրոս իշխանը:

Կիւրոս յաղթական ելաւ ու բռնակալը գերի բր-  
նուեցաւ: Կիւրոս տիրացաւ գահին ու երկրին:

Երազը իրականացաւ:

ԲԱՌԻՐ.—Ձայրանալ՝ բարկանալ: Աստուծոյ՝ բռնութիւնով  
կառավարող: Կեղծել՝ ստել, մեւացնել: Անմարդաբն ի՞ մտդ  
չբնակած տեղ: Հագորդել՝ լուր տալ: Տարեկից՝ նոյն տարիքը  
ու նեցող: Մեծ վայելուչ՝ շատ վայելուչ: Ընդդիմութիւն՝ դիմա-  
դրութիւն: Ազնուագարմ՝ ազնուական ցեղ: Ըմբոս՝ անճեմ  
գանդ: Յանդուզն՝ համարձակ: Սօրուի՝ գերի: ԶԳՆԵ՛լ՝ բնէլ:  
ԾՆ կաշո՞մ՝ ծունկի վրայ: Վերդավախ՝ տակնուվրայ ըլլալ: Մոզ՝  
հին ատենի գիտուն:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.—Ո՞վ էր Կիւրոս:—Ո՞վ ազատեց զինքը:—Հովի-  
ւի տանը մէջ ի՞նչպէս կը մեծնար ան:—Ի՞նչպէս հասկցուեցաւ իր  
ո՞վ ըլլալը:—Կիւրոս մտցա՞ւ հովիւն ու իր կինը:—Կիւրոս վերջը  
ի՞նչ կալաւ:

### 81. Ն Ո Ր Ա Յ Ր

Դատարանին յաջողագոյն ու աշխատասէր աշա-  
կերաններէն էր Նորայր, որուն հայրը՝ ճերմութեան հե-  
տեւանքով աշխատանքի անկարող դարձած էր, ու  
խեղճ մայրը՝ հոս հոն, ծառայութիւն ընելով կ'ապրե-  
ցընէր իր հիւանդոտ ամուսինն ու ամէն զոհողութիւն  
կ'ընէր, որպէսզի իր միակ դաւակը կարենայ շարու-  
նակել իր ուսումը:

Նորայր չստ կը սիրուէր իր գասընկերներէն ու  
ինքն ալ փոխադարձաբար կը սիրէր զանոնք ու կը  
յարգէր իր ուսուցիչները:

Հետո տեղէ կուգար Նորայր, բայց միշտ ամէնէն  
կանուխ զպրոց եկողներէն էր: Յապագում կամ բա-  
ցակայութիւն երբևէ չէր ունեցած:

Օր մը, աշակերաններու ներկայութիւնը ճշգրտ  
միջոցին, գաստիրակը գարմանքով նկատեց Նորայրի  
բացակայութիւնը, ինչ որ անտօր բան մըն էր, լու-  
րոր աղաք նոյնպէս զարմացած՝ չէին կրնար մեկնու-  
թիւն մը տալ այս արատաւոր երևույթին:

Յաջորդ օրը, Նորայր գարձեալ չեկաւ վարժարան,  
սակայն իր բացակայութեան գաղանիքը պարզուեցաւ:  
Նախորդ գիշերը, անոնց սեփական աղքատիկ տնակը,  
իրենց միակ հարստութիւնը, այրած էր ու Նորայր  
հայրը կրցած էր կրակէն ապաստել իր զարդակն  
գիրքերու մաշած պայտասակը:

Այս դժբախտ պատահարին լուրը ցնցեց ամբողջ  
գասարանին տղաքը: Այս ցուրախն՝ Նորայր, իր ծը-  
նողքին հետ ո՞ւր պիտի պատասպարուէին, ան՝ ասկէ

յիտոյ պիտի կրնա՞ր շարունակել իր ուսումը: Անոր գրասեղանը պարապ էր ու բոլոր սոցոց աչքերը հոն ուղղուած էին. երբ գաստխարակը՝ ամպխոնի վրայէն՝ յուզուած և զոզորջուն ձայնով մը բաւաւ.

—Տղա՛ք, երէկ կէս գիշերին, ձեր ընկերներէն բոլորիս սիրելի նորայրենց տունը հրդեհի մը զոհ գացած է ու նորայր այս անսպասելի աղէտին պատճառով կորսնցուցած է ամէն բան ու վախէն հիւանդացած է:

Դուք չէ՞ք ուզեր մեղմացնել ձեր դժբախտացած ընկերոջ վիշտը: Ձեր աննշան նուիրատուութիւններովը պիտի դարձանուի ան ու պիտի կարենայ շարունակել իր վարժարանը:

Դաստիարակին խօսքերը արցունքներու մէջ խնդրուեցան, երբ ամէնավերջին գրասեղանէն աղբառիկ աշակերտ մը, իր ամբողջ խնայողութիւնը, յիսուն դուրուշ, բերելով յանձնեց անոր:


Բոլոր աշակերտները հետևեցան անոր օրինակին, ապահովելով դուժար մը, որ յանձնուեցաւ. նորայրին՝ երբ շարաթ մը վերջ ան՝ զպրոցը գալով շարունակեց իր ուսումը:

ԹՅՆԱԳՐՈՒԹԻՒՆ.—Սիրեցէք ձեր ընկերները:—Սոցնեցէք անոնց երբ պէտք ունին, առանց անոնց արժանապատուութիւնը վիրաւորելու:—Ձեր իրաքանչիւր աննշան կարծուած օժանդակութիւնը կրնայ մեծ օրուտ ու արդիւնք պատճառել:—Ցուցատուութեան համար եղած բարեբարութիւնը կեղծիք է ու չարիք:

## 82. ԿՈՎԱՐԱԾ ՏՂԵԿՆ ՈՒ ԴՈՒՔԱԸ

Աղնուական մը մօտակայ աղարակապանէ մը կով մը գնեց: Յաջորդ առաւօտ կանուխ կովը աղարակապանին զգեսակը պիտի տարուէր:

Երբ աղնուականը, իր սովորական չըջապայութիւնը կը կատարէր, աղեկ մը տեսաւ, որ կը ջանար



կովը իր տունը բերել: Տղան փոքր էր և իր ուժերէն վեր էր կովը իր ուղած ուղղութեանը առաջնորդել: Երբ աղան աղնուականը տեսաւ, առանց զոյն ձանձնաբաւ գոչեց.

— Բարեկամ, եկո՛ւր, քիչ մը օգնէ ինձի, այս կատաղի կենդանին սա գիմացի զգեսակը տանելու հա-

մար, ստացած նուէրիս կէսը քեզի կուտամ: Ազնուականը օգնեց աղեկէն ու երկուքը միասին կովը կը տանէին, երբ գտնաւով կովարածին հարցուց.

— Ի՞նչ նուէր կը կարծես ստանալ այս աշխատութեանդ փութարէն:

— Ձեռ գիտեր, բայց փտտան եմ որ զգեակին տէրը շատ ազնուասիրտ պարոն մըն է, և ստանց վարձաարութեան չի թողուր մեր աշխատանքը:

Երբ զգեակին մօտեցան, ազնուականը բամուռելով, զգեակին կողմնակի մէկ գուռնէն ներս մտաւ ու ծառաներէն մէկը կանչելով ոսկի մը յանձնեց անոր, որպէսզի կովը բերող աղուն տայ:

Երբ աղան նուէրը ստած զգեակէն կը մեկնէր, զգեակին տէրը շուտով անոր ետեւէն հասնելով հարցուց թէ ի՞նչ նուէր ստացաւ:

— Քսան գանձեկան, պատասխանեց աղեկը, աճաւասիկ քո իրաւունքդ, տասը գանձեկանը ա՛ն:

— Բայց ես որոչապէս գիտեմ որ գուն քսան գանձեկանէն աւելի ստած ես ու գիս կը խարեւ:

— Ո՛չ, պատասխանեց աղեկը, ամբողջ ստածս այս է, և քսան գանձեկանը քիչ գրամ չէ կարծեմ:

— Ես չեմ հաւատար ըսածիդ: Մէկտեղ երթանք և զգեակին փորձմէն իրողութիւնը ստուգենք:

Երբ զգեակը մտան, տէրը գանձակը հնչեցուց: Բոլոր ծառաները սրահը հաւարեցան:

— Հիմա բոս ազնուականը, քեզի քսան գանձեկան ստող ծառան զայց սուր ինձի:

— Տղան մատանապետը ցուցնելով, այս էր բոսս:

Մատանապետը ամբոյն ու գողաճար, ծունկի գտ-

լով խտտովանեցաւ իր յանցանքն ու ներողութիւն խնդրեց, սակայն ազնուականը հրամայեց անմիջապէս սակին յանձնել աղեկին ու մատանապետը պաշտօնէն հանելով բոս անոր.

— Գիտցի՛ր թէ պարկեշտութիւնը լուսադոյն կենցաղագրտութիւնն է:

Ազնուականը այնքան հաճոյք զգաց աղուն անկեղծ և ուղիղ ընթացքէն, որ գայն իր պաշտպանութեան տակը ստաւ, վարձարան զրկեց ու ամէն ծախքերը ինքը հողաց:

ՈՒՍՈՒՑՁԻՆ ԲՆՑՂՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Ազգամտութիւնն ու պարկեշտութիւնը միշտ կը վայ ձսարուն. — Խարենայութիւնը մոլութիւն մըն է, որուն ենթարկուող օր մը չարաչար կերպով կը տուժ:

### 83. Կ Ա Պ Ի Կ Ը

Կապիկը գուարթ ու խեղկատակ կենդանի մըն է: Վաճառական մը մեծաքանակ բուրդէ կարմիր գլխարկներ կը տանէր Հարաւային Ամերիկա ծախելու համար: Անտատի մը մէջէն անցած միջոցին, նշմարեց խումբ մը կապիկներ, որոնք ծառերուն վրայ կը մազլցէին:

Կէս օրուան տաքին, վաճառականը, մեծ ծառի մը շուրին ներքեւ նստաւ, ու գլխարկներէն մէկը զբլուխը անցուցած քնացաւ:

Երբ արթնցաւ, տեսաւ որ իր բոլոր գլխարկները չկային: Մտաւոր մէջէն եկող արատասովոր ազմուկ մը, իր ուշադրութիւնը այնկողմը դրաւեց, ու զարմանքով նկատեց որ կապիկները իր գլխարկներէն մէկ

մէկ հաս իրենց զլուխը անցուցած ու ծառերուն գա-  
զաթները բարձրացած են:

Մարդը կտայկցաւ, սրտաց, կանչեց, քարեր նե-  
տեց կտայիկներուն, սակայն անօղուտ, բնդհակատակն,



կտայիկները սկսան իր բոլոր շարժումները կեղծել ու  
զինքը աւելի գայրացնել:

Խեղճ մարդը բոլորովին յաւանատած, բարկութե-  
անն իր զլուխը անցուցած զլխարկն ալ հանելով գե-  
տինը նետեց սրտաբով:

— Աւաղակներ՛ր, ա՛ս ալ առէք:

Անմիջապէս կտայիկներն ալ նոյնը ըրին. ամէն  
մէկ կտայիկ իր զլուխն առաւ զլխարկը և մարդը ծաղ-  
րելով գետինը նետեց:

Վաճառականը զլխարկները հաւաքեց և յաղթա-  
կանօրէն շարունակեց իր ձամբան:

\* \* \*

Ազահ հարուստ մը կտայիկ մը կը գնէ զայն աւելի  
սուղ գինով մը ծախելու համար:

Օր մը, կտայիկը կը տեսնէ որ իրենց զրացի բա-  
րեսիրտ տիկին մը, պատուհանէն դրամ կը նետէ փո-  
ղոցէն անցնող աղքատի մը. կտայիկը անմիջապէս կը  
վազէ դէպի իր աէրոջը գրամարկղը, կը բանտայ զայն  
ու կ'սկսի ազահին զիգած գրամները պատուհանէն  
գուրս նետել:

Երեւակայեցէք ազահ հարուստին վիճակը, երբ  
իրիկունը տունը դասնալով իր ամբողջ գրամարկղն ու  
հարստութիւնը սրբապ կը գտնէ:

ՈՒՍՈՒԹՁԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ — կտայիկները չար ու ծաղ-  
րող կենդանիներ են. Այն մարդիկ որոնք միշտ կը ջանան ուրիշնե-  
րու գէշ սովորութիւնները օրինակել կտայիկոյ կ'ըսուին:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ. — Դուք կտայիկ տեսա՞՞ք: — Ան ի՞նչ բանով կը  
նժանի մարդուն: — Ո՞ր երկիրներու մէջ կ'ապրին կտայիկները: —  
Ի՞նչ կուտեն: — Անոնց միտը կ'ուտուի՞, ինչո՞ով կը պաշտպանուին  
զիրենք հալածող գազաններէն:

### 84. Կ Ե Ն Դ Ա Ն Ա Գ Ի Բ Ը

Կարևոր ատաջ արևելեան մեծ քաղաքի մը մէջ, վաճառական մը մեծ հարստութիւն մը ձգելով կը մեռնի: Թէև ամէնքը գիտէին թէ մեռնողը միակ զաւակ մը ունէր, որ շատնոց հետացած էր իր հայրենիքէն, բայց ոչ ոք կը ճանչնար ու կը յիշէր գինըրը գեղջով:

Միջոց մը անցնելէ յետոյ, երեսն հարիւր երեք երիտասարդներ, որոնք կը սնուէին թէ իրենք են միակ և օրինաւոր ժառանգորդները մեռնողին: Դատարար՝ այս կինոս խնդիրը լուծելու համար մտած մարզուն շատ նմանող կենդանագիր մը բերելով, բաւ:

— Չեզմէ ով որ նետով այս պատկերին կուրծքին ուղիղ նշան աննէ, ան է ժառանգորդը:

Առաջինին նետը ցոյց տրուած տեղին հանդիպեցաւ, երկրորդը նոյնպէս շատ ճիշտ զարկաւ, իսկ երրորդը երրորդին եկաւ, ան՝ սկսաւ գոյգոյ, գունատիլ ու յուզումէն արտասուել, չկրցաւ նշան աննել և նման ու աղկըր նետելով գոչեց:

— Ասելի լաւ է որ ամբողջ ժառանգութիւնս կորսընցնեմ, քան թէ հօրս կուրծքին զարնեմ, նոյնիսկ անոր պատկերին վրայ:

Այն ատեն դատարարը վերջինին գտնարով բաւ:

— Այնիւ երիտասարդ, անոնք որ վարպետութեամբ ուղիղ նշան ասին և զարկին, կեղծարար և խարեւաններ են: Գուն ևս հարազատ զաւակը մեռնողին և անոր օրինաւոր ժառանգորդը, քեզի կը պատկանի անոր հարստութիւնը:

ԲԱՌԻՐ. — Կենդանագիր՝ պատկեր, նկար: — ԿԻՆՈՍ՝ խառն, զոտար լուծելի — ՀԱՐՏԱԳԱՍ՝ ճիշտ, ուղիղ:

ԹԵՆԴԱՐՈՒԹԻՒՆ. — Գատնեցէր այս պատմութիւնը և ըսէ՛ր թէ ինչո՞ւ երրորդը չկրցաւ նշան աննել: — Ասոր նման պատմութիւն մը կը յիշէ՞ր:

### 85. Մ Ա Ն Կ Լ Ա Ի Ի Կ Ը

Եզուարդ՝ թագաւորին մանկկառիկն էր ու անոր նախասննակին մէջ գիշերապահութիւն կ'ընէր: Գիշեր մը թագաւորը չքնացաւ և զանգակը հնչեցոց որպէսզի մանկկառիկը կարգալու գիրք մը բերէ իրեն, սակայն Եզուարդ խոր քունի մէջ բլլալով չըսեց զանգակին ձայնը: Երբ թագաւորը տախտած անձամբ նախասննակը եկաւ, տեսաւ որ գետտի երիտասարդը կը քնանայ գրասեղանի մը ստվէտնուած, իսկ յեզանին վրայ նշմարեց կիսաւարտ նամակ մը: Թագաւորը կարգաց նամակը, որ այսպէս կը սկսէր.

«Միրելի մայր, երեք գիշեր է որ ուրիշ մանկկառիկներու տեղ գիշերապահութիւն կ'ընեմ: Այլ չեմ կրնար գիմանայ, բայց ուրախ եմ, որովհետեւ այս կերպով չարաթուան մը մէջ 50 ֆրանք չանած եմ. ահաւասիկ զանոնք Չեզի կը գրկեմ, որպէսզի Չեր ինզձ վիճակը քիչ մը բարւոքի»:

Այս ծնոյտակը տղուն անձնու իրութիւնը յուզեց թագաւորը որ իր ներքնասննակը գնաց, սակի գրքամներու ծրար մը չինեց ու բերաւ քնացող մանկկառիկին գրպանը գրաւ:

Երբ մանկկառիկը արթնցաւ ու իր գրպանին ծանց

բութիւնը ստուգեց, վախցաւ, որ ինքը պիտի պատ-  
ժուի իր պաշտօնին մէջ քերացած բլլալուն համար,  
անմիջապէս լալով դնաց թագաւորին ոտքը ինկաւ,  
անկէ ներում խնդրելով, բայց թագաւորը անոր ձեռ-  
քէն բռնելով վերցուց. գովեց իր ծնողասիրութիւնը  
և աւելի բարձր պաշտօններ տուաւ անոր:

ԲԱՌԵՐ.—Մանկալուիկ՝ թագաւորի սենեկապան:—Նախա-  
ունենակ՝ դարսի սենեակ:—Կիսաւարձ՝ դեռ չմնցած:—Սառ-  
գեկ՝ ճշգիւ, հաստատել: Թեւաճալ՝ պակաս գոնուիլ:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ.—Պատմեցէր այս պատմութիւնը:—Ըսէր թէ,  
թագաւորը ինչո՞ւ չէր կրնար քնանալ եւ մանկալուիկը ինչո՞ւ խա-  
ղաղորէն կը քնանար:

### 86. Խ Ճ Ա Ք Ա Ր Ե Ր Ը

Երիտասարդ կառավար մըն էր Պօղոս, որ շատ օգի  
խմելէն վառնաւոր կերպով հիւանդացած էր: Բժիշկը  
բաւաւ անոր.

— Եթէ բոլորովին չձգես օգին պիտի թունաւոր-  
ուիս ու մեռնիս:

— Բայց ես շատ մօլի դարձած եմ. եթէ օրական  
չիչ մը օգի չխմեմ չեմ կրնար ապրիլ:

— Արեւնն, պատասխանեց բժիշկը պահ մը մտա-  
ձելէ յետոյ, վաղը ինձի եկուր, քեզի համար լաւ դե-  
ղապիւր մը կը պատրաստեմ, եթէ բաժներս ճշգու-  
թեամբ գործադրես, հիւանդութենէդ կրնաս բուժուիլ:

Երբ յաջորդ օրը Պօղոս բժիշկին ներկայացաւ,  
վերջինս, դեղահասեռով լեցուն գոյնդոյն տուփ մը

տուաւ և պատուիրեց որ ամէն օր իր տուած դեղա-  
հասեռէն հաս մը իր օղիի շիշին մէջ ձգէ:

Պօղոս մեռնելէ կը վախնար. նտուարար բժիշկին  
պատուէրը ճշտութեամբ սկսաւ գործադրել, մանաւանդ  
որ այս կերպով ինքն ալ չէր զրկուեր իր սիրական  
օղին խմելէ:

Ամէն օր մէկ դեղահաստ կը նետէր շիշին մէջ ու  
այս կերպով ամէն օր ալ մէկ ումպ պակաս օղի կը  
խմէր: Դեղահաստերը գոյնդոյն խնամարեւ էին որոնք  
չէին հալեր. սակայն շիշին մէջ տեղ կը զրաւէին ու  
այս կերպով օղին քանակը կը պակսէր:

Երբ շիշը այլեւս խճաքարերով լեցուած ու օղիին  
տեղ չէր մնացած, Պօղոս արդէն օղի խմելու վնասակար  
սովորութիւնը ձգած էր:

Խեղաքի բժիշկին տուած խճաքարէ դեղահաստը ա-  
զատած էր խեղճ երիտասարդը ստոյգ մահէն:

ԲԱՌԵՐ.—Կառավար՝ կառապան, կառք բող: — Խնամար՝  
մանր բար: Գեղահաստ՝ դեղ:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ.—Գինովութիւնը շատ գեշ մտութիւն մըն է:  
Պէտք չէ ծաղրել գինովները, բայց պէտք է հեռանալ անոնցմէ:  
Պէտք է գիտնալ թէ գինովութիւնը կ'ստորնացնէ կը թշուառացնէ  
և կը մահացնէ իրեն ենթարկուողը:

87. Ն Ա Յ Ը

Սով կար յազարի մը մէջ, ուր հարուստ ու բարեխաբ մարդ մը ցորենի շեմաբաններ ունէր: Հարուստը յազարին ամէն ազբատ բնտանիքներէն զսան ազաք իր տունը կանչելով ըսաւ անոնց.

— Այս կողովին մէջ ձեր ամէն մէկուն համար հաց մը կայ, ասէք և ամէն օր այս ժաման նորէն եկէք մինչև որ այս դժբախտ օրերը անցնին:

Տղաք կողովին վրայ յարձակեցան և սկսան իրարու հետ կռիւ բնել. որովհետև ամէն ազաք կ'ուզէր ամենամեծ հացը սանել, ու վերջապէս ստանց շնորհակալութիւն մը իսկ յայտնելու գացին:

Այս աղոյ մէջ աղքատիկ, բայց մաքուր հագուած Գրիսթինէն, հետուն կեցած սպասեց, մինչև որ իր ընկերները ատին իրենց բաժինը: Վերջին ու ամէնէն փոքր հացը, որ մնացած էր կողովին մէջ, Գրիսթինէն ստաւ, ու համեստօրէն շնորհակալութիւն յայտնելով մեկնեցաւ:

Երկրորդ օրը, ազաք նոյն անկիրթ ընթացքին մէջ գանուեցան: Այս անգամ Գրիսթինէին բաժին մնացած հացը միւս հացերուն կէսն էր միայն, բայց երբ տուն վերադարձաւ ու իր հիւանդ մայրը կարեց հացը, անոր մէջէն բազմաթիւ սակի գրամներ թափեցան:

Գրիսթինէին մայրը սարսափած.

— Շուտով այս գրամները բարեխաբ մարդուն տար, որովհետև անոնք սխալմամբ խմորին մէջ գրուած ըլլալու են ըսաւ:

Երբ Գրիսթինէն գրամները իր բարերարին վերագարձուց, վերջինս մերժեց, ըսելով.

— Ազնիւ աղջիկս, այս գրամները ևս գրի ամենափոքր հացին մէջ, յու պարկեշտութիւնդ և յազարափարսութիւնդ վարձատրելու համար: Անոնք յու կ'ը կ'են:

ԲԱՌԵՐ.— Սով՝ ուտելիքի պակաս:— Շեմաբան՝ ամբար, ուտելիք պահելու տեղ:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.— Ինչո՞ւ համար սով կ'ըլլայ:— Բոլոր հարուստները այս մարդուն պէս բարեխաբ են:— Այս աղոյ ընթացքին կը հասնի՞ր:— Քրիսթինէն ինչո՞ւ վարձատրուեցաւ:

ԹԵՆԱԴՐՈՒԹԻՒՆ.— Պատմեցէ՞ր այս պատմութիւնը:

### 88. ՇՐԱՇԱԼԻ ՏՈՒՓԸ

Ազարակապան մը բաղմաթիւ կալուածներ ու ծառաներ ունէր, բայց իր հարստութիւնը տարուէ տարի փոխանակ աճելու կը պակսէր:

Ճարահատ՝ օր մը անտասը բնակող ծերունի նրգնաւորին երթալով իր գծրախա վիճակը պատմեց ու խնդրեց որ ան՝ այս գծրախտութիւնները հետացնելու միջոց մը ցոյց տայ իրեն:

Ճգնաւորը՝ որ զուարթ ծերունի մըն էր, խնդրեց որ քիչ մը սպասէ, և ինքը քովի սենեակը երթալով քանի մը վայրկեան վերջ, ձեռքը փոքրիկ սուփ մը բռնած վերադարձաւ ու ազարակապանին ըսաւ.

— Աս այս սուփը, սուներ տար, օրը երեք անգամ, զիչերը նոյնպէս երեք անգամ խոհանոցին, մատանին, զովերուն մէջ և տան բոլոր անկիւնները պտտցուր. այս կերպով չարիքն ու գծրախտութիւնը սունէզ պիտի հետանան, իսկ տարիին վերջը սուփը ինձի վերադարձուր:

Բարեմիտ ազարակապանը երբ առաջին անգամ սուփը առած՝ մեծ վատահոթիւնով մատանը մտաւ, տեսաւ որ ծառան գարեջուր կը գողնայ: Գիչերը երբ խոհանոց գնաց, տեսաւ որ բոլոր սպասուհիները հաւաքուած, իրենց համար խորսիկներ կը պատրաստեն: Երբ գոմերը կը պտտէր, տեսաւ որ բոլոր կովերը շատ աղտոտ վիճակի մը մէջ պահուած են, իսկ ձիերը փոխանակ դարիի՝ խոտ կ'ուտէին:

Այս կերպով ազարակապանը ամէն օր նոր գողու-

թիւններ ու խարդախութիւններ գտաւ, ու նոր և վրստահելի աշխատասօրներ բերաւ:

Երբ տարին լրացաւ, սուփը առած ճգնաւորին գնաց ու դո՛ւ սրտով ըսաւ.

— Ամէն բան յաջող է. սուփը տարի մըն ալ քոյս ձգեցէք, որովհետեւ հրաշք կը գործէ այս սուփը:

Այն ատեն ճգնաւորը բացաւ սուփը, որուն մէջ բան մը չկար, բայց թղթիկէ մը, որուն վրայ գըրուած էր՝

Ուրեգի սակ մեջ սիւն կարգ կսնոն,  
Հսկելու ևս դուն ըլլալով միտս նոն:

ԲԱՌԻՆՐ.—Ճգնաւոր՝ առանձին ու խեղճ ապրող կրօնաւոր:—  
Վոսմ՝ կենդանիներու բնակարան: — Գ'ուրեմիտ՝ մրամիտ բարի:—  
Խորսիկ՝ տեսակ տեսակ կերակուր:

ԹԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ. — Պատմեցէք այս պատմութիւնը և ըսէք անոր բարոյականը:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.—Տուփը հրաշալի բան մը ունէ՞ր իր մէջը:—  
Ի՞նչ նպատակ ունէր ճգնաւորը սուփը յանձնելով ազարակապանին:—Ճգնաւորը յաջողեցա՞ւ իր նպատակին մէջ:—Ի՞նչպէս:

### 89. ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐ

Անդլիացի երկու դարբին եղբայրներ թէև շատ աշխատասէր էին, բայց հակասակ իրենց ծանր աշխատանքին, շատ գժուարաւ կրնային օրապահիկներն ապահովել:

Երկար խորհրդակցութիւններէ յետոյ, որոշեցին օտար երկրի մը մէջ իրենց բախաը փորձել: Հետացան իրենց հայրենիքէն և ժամայիգա կղզին գացին: Կղզիին սեւամորթներով բնակուած էր, կլիման տաք էր ու հոն տակաւին գեղեվանառութիւն գոյութիւն ունէր: Երկրին վիճակը քննեցին և ստուգեցին որ իրենք շատ չահաւոր գործ կրնային ընել հոն, եթէ քիչ մը գրամադրուխ ունենային:

Երկու եղբայրները միասին խորհեցան և գրամադրուխ ապահովելու միակ միջոց մը գտան: Մեծ կղբայրը որ աւելի յաղքանցաւ էր ու աղու, պիտի ծախուէր գերեզմանոցի մը ու իր փոխարձեւովը գրամադրուխ մը պիտի ունենային: Հետեւաբար, գիշերը, փոքր եղբայրը ամբողջովին սև ներկեց մեծը և յաջորդ ստաւ գերեզմանոցին տարաւ զայն ծախելու: Գերեզմանոցը այս խոչորակազմ սեւամորթին շատ լազին մը վճարեց փոքր եղբորը, որ իր սենեակը վերագործաւ, իսկ մեծ եղբայրը միւս ծախուած սեւամորթներուն հետ շէնք մը տարուեցաւ:

Նոյն գիշերը երբ բոլոր սեւամորթ գերիները կը քնանային, այս ներկուած սեւամորթը փախաւ և իր եղբոր քովը գնաց:

Փոքր եղբայրը անմիջապէս լուաց ներկը և մաքրեց իր եղբայրը:

Երկու եղբայրներ այս գրամով գնեցին իրենց պետք եղած գործիքները, աշխատանքի սկսան և երեք տարի վերջ հսկայական հարստութեան մը աէր եղած իրենց հայրենիքը վերադարձան:

Անոնք կղզիէն մեկնելէ առաջ, գերեզմանոցին երթալով հակցուցին անոր իրենց խաղը և անոր վճարած գրամին կրկինը վերադարձուցին զարմացած գերեզմանոցին:

ԲԱՌԵՐ.—Պարբին՝ երկաթագործ: — Օրապահիկ՝ օրական ապրուստ:—Ժամայիգա՝ Ատլանտեան ովկիանոսին մէջ կղզի մը — Կլիմա՝ օդ: — Գեղեվանառութիւն՝ Գերի ծախել: — Յաղքանցում՝ մեծ մարմնով:—Փոխարձեւ՝ գին:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ. — Մեր քանցած մարդիկ սոցիալարակ ի՞նչ գոյն ունին:—Ինչո՞ւ համար կարգ մը մարդիկ սեւամորթ են:—Ո՞ր երկիրներու մէջ կ'ապրին սեւամորթները:—Անոնք ուրիշ ի՞նչ բանով կը զանազանուին սպիտակամորթ մարդոցմէ:

### 90. Մ Ո Ւ Կ Ը

Սարգիս նամակատան մը մէջ կառապան մըն էր: Օր մը, ան՝ ամբաստանուեցաւ թէ՛ նամակատունէն պարկ մը գարի գողցած է:

Նամակատան անօրէնը, Սարգիսի տունը երթալով, գողցուած գարին պահանջեց:

— Պարո՛ն, պատասխանեց Սարգիս, ամբողջ տունս խուզարկեցեմ, եթէ մէկ հատիկ մը գարի գտնէք, զիս հետացուցէք պաշտօնէս ու պատժեցէ՛ք:

Տնօրէնը Սարգիսին ընկերակցութեամբ ամբողջ տունը քննեց ու բան մը չգտաւ:

Երբ երկուքն ալ Սարգիսի սենեակը մտան Սարգիս ըսաւ.

— Պարո՛ն, չեմ ցաւիր որ դուք իմ տունս քըննութեան կուգաք, բայց ստախօս մարդիկ, որոնք զիս զրպարտել ու արատաւորել կ'ուզեն, պէտք է որ պատժուին, պէտք է որ այս անպատուութիւնը դարմանուի:

Սարգիս այս խօսքերը ըսած միջոցին, այնքան զրգոտուած էր որ իր ուժգին կողուկովը սեղանին զարկաւ: Այս հարուածէն սեղանը, ինչպէս նաև սենեակը ցնցուեցան ու յանկարծ գարիի հատիկներ սկսան սևզանին վրայ տնկալ:

Սարգիս, գողցած գարին սենեակի առաստաղին տախտակներուն մէջ պահած էր: Մուկ մը սենեակին առաստաղը կրծած ըլլալուն՝ կողուի հարուածին ցընցումէն գարիի հատիկները սկսան ծակէն վար թափիլ:

Գողութիւնը հաստատուեցաւ, ու Սարգիս արդար

պատիժը կրեց թէ իր գործէն զրկուելով և թէ երկար տարիներ իրբև գոյ մը բանար պատկերով:

Գոյ մուկը Սարգիսի գողութիւնը երևան հանեց:

ԱՌԱՅ. — Գողը գողէն գողացաւ, Ասուած տեսաւ զարմացաւ:

ՌԱՌԵՐ.—Ամբաստանել՝ մէկուն յանցանք մը վերագրել—  
խուզարկել՝ փնտռել:—Զրպարտել՝ մէկու մը մասին սուտ խօսիլ,  
ամբաստանել:—Նուուի՝ բռնեցք:—Տեղալ՝ թափել:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.—Ի՞նչ է նամակատունը:—Որո՞նք կան նամակատան մէջ:—Ի՞նչ է անոնց գործը:—Նամակատունը տեսմ'ը էր:—Նկարագրեցէք ձեր տեսած նամակատունը:

### 91. ԳԵՂԵՑԻԿ ԿԱՂՆԻՆ

Հովիւ մը, իր փոքր աղուն հետ, կաղնի ծառի մը շուքին տակ նստած էր, երբ փայլուն զէնքերով ու համազդեատ կրող երեք ոստիկաններ, որոնք նոյն ճամբէն կ'անցնէին, կիցան ու զարմանքով զիտելով փառաւոր կաղնին, իրենցմէ մէկը ըսաւ.

— Սքանչելի ծառ մը, եթէ իմս ըլլար ան, մեծ քանակութիւնով ամուխ կը շինէի ու խոշոր շահ մը կ'ունենայի:

— Եթէ ես այդ ծառին կեղեւները միայն ունենայի, հարստութիւն մը կրնայի զիգել, ըսաւ երկրորդը:

— Այս ծառին վրայի վայրի կաղնիներով կրնայի իմ խողերս երկար ասուն կշտացնել ու զիրցնել, այն

ստեն որքան հարուստ պիտի ըլլայի իմ պարարտ խոզերէս պատրաստուած համեղ երչիկները ծախելով, բնուստ կրորդը:

Հովիւք մտերմարար կը խօսէր այս անձանօթ մարդոց հետ, ու երբ անոնք հեռացան, ազան հարցուց իր հօրը.

— Հա՛յր, այս մարդիկը նախապէս կը ճանչնայի՞ր:

— Առաջին անգամն է որ կը տեսնեմ զիրենք, պատասխանեց հովիւը, բայց անոնց խօսքերէն հասկըցայ ամէն մէկուն արհեստը:

Առաջինը ամխագործ մըն է, երկրորդը՝ խաղախորդ մը, իսկ երրորդը՝ ապուխտովաճատ մը, պատասխանեց հովիւը:

Ամէն մարդ իր արհեստով կը հետաքրքրուի և իր գործի մասին կը խօսի: Անոնք որ իրենց գործով չեն հետաքրքրուիր ու պարապ ժամանակ կ'անցընեն, իրենց կեանքին մէջ չեն կրնար յաջողութիւն գտնել:

Գպրոցին մէջն ալ կը յաջողին միայն այն աղաք, որոնք իրենց գասերովը կը զբաղին, ու իրենց գործը չատ կը սիրեն:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ ըսել է ամխագործ, ապուխտովաճատ, խաղախորդ:— Կաղնին ի՞նչ բանի օգտակար կրնայ ըլլալ: — Ո՛ւր կ'աճի կաղնին:— Գուր ի՞նչ տեսակ ծառեր կը սիրէր:

ԳՐԵՑԻՔ.— Ապուխտովաճատի նման հինգ հատ բարդ բառ: Ածխագործի նման հինգ բառ:

## 92. ՀԻՆ ՎԵՐԱՐԿՈՒՆ

Պատերազմի ժամանակ քանի մը զինուոր զիւզ մը գալով՝ ճամբու առաջնորդ մը կ'ուզեն: Այս պաշտօնը կը արուի ազքատ գործատրի մը, որ սակայն վերաբերի մը պէտք ունէր, քանի որ եղանակը ձմեռ էր ու օդը սաստիկ ցուրտ:

Օտարական ձերունի մը որ պատերազմին պատճառով այս զիւզը եկած էր ու դարբինի մը քով կը ծառայէր, մեղքնալով ազքատ գործատրին, իր հին վերաբերուան անոր կուտայ:

Զինուորները զիւզէն մեկնած էին, երբ նոյն իրիկուն, փայլուն զինուորական համազգեստով գեղեցիկ ու երիտասարդ աղայ մը, իր ձին սրարչու քշելով զիւզը մտաւ ու հարցուց թէ ո՞ւր կը բնակէր այն ձերունին որ իրենց զինուորներու առաջնորդին փոխտուած էր իր վերաբերուն:

Իարեախրա ձերունին երբ տեսաւ երիտասարդ աղան, անոր վիզը փաթթուեցաւ, ու երկուքն ալ երկար ատեն իրարու փարած, իրար կը համբուրէին և ուրախութենէն կուլային:

Անոնք հայր ու դուստր էին ու պատերազմին պատճառով տարիներէ ի վեր իրար կորանցուցած էին:

Տղան՝ տարիներ առաջ՝ զինուորական ծառայութեան մէջ մտած, իր հաւատարմութեամբ և քաջութիւնով սպայութեան բարձրացած և պատուանշաններ ստանալով անուանի զինուորական մը եղած էր:

Տղան իր հօր ամէն պէտքերը հոգալով զայն երջանիկ ըրաւ իր ձերութեան մէջ:

Մերունի օտարականը արժանի էր այս վարձա-  
արութեան: Ան՝ իր աղքատ վիճակին մէջ կարեկցե-  
լով զինուորներու առաջնորդ խեղճ գործատորին իր  
վերարկուն անոր փոխ առած էր:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ.— Բարիքը երբ փոխարինութեան մը յայտով  
կ'ըլլայ, այլևս բարիք ըլլալէ կը դադրի: — Պէտք է բարիք ընել  
ուրիշներուն օգտակար ըլլալու նպատակով:

### 9 . ԵՐԿՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Սուրէն ու Յակոբ նոյն դասարանի աշակերաններն  
էին:

Սուրէն աղքատիկ ծնողքի մը զաւակն էր թէև,  
սակայն միշտ կոկիկ էր, մաքուր լուացուած ու սանա-  
րուած: Ամէն սառուած ճիշտ ժամուն զպրօցը ներկայ  
կը գտնուէր, իր գասերուն շատ ուշադիր էր, իր պար-  
տականութիւնները կանոնաւորաբար կը կատարէր.  
Իր ընկերները կը սիրէր ու իր գատտիարակը կը յար-  
դէր: Այս պատճառով զպրօցին մէջ ամէնքը կը սի-  
րէին զինքը:

Յակոբ հարուստի զաւակ էր: Միշտ նոր հագուստ-  
ներ կը հագնէր, բայց անխնամ էր. ամէն անգամ իր  
նոր հագուստներուն վրայ մեղանի արասներ կը տես-  
նուէին ու ծուլութեան պատճառով իր դէմքն ու ձեռ-  
քերը անմաքուր կը պահէր: Իր գասընկերները կ'ար-  
համարէին ու իր գատտիարակին հանդէպ անքաղաքա-  
վար էր. երբ յանդիմանութիւն կրէր, անվայել խօս-  
քեր կ'արտասանէր: Գասերուն ու պարտականութիւն-

ներուն շատ անուշադիր էր: Սակայն ամէն տեղ  
կը պարծենար թէ՛ ինքը գասարանին մէջ առաջինն  
է, ու իր բոլոր գասընկերներէն զերազանց է իր ու-  
շիմութիւնովը: Մնողքը կը հաւատար անոր խօսքե-  
րուն ու կը գովէր զինքը:

Տարեվերջի քննութիւններու միջոցին, Սուրէն  
բոլոր քննութիւնները յաջողութիւնով անցուց ու գա-  
սարանի առաջինը հանդիսանալով, զպրօցական հան-  
դէսին, բոլոր հանդիսականներու ներկայութեանը, դո-  
վատի արժանացաւ ու առաջին մրցանակը ստացաւ:

Իսկ Յակոբ, քննութեանց միջոցին թէև շատ աշ-  
խատեցաւ օգտուիլ իր գասընկերներէն, բայց չյաջո-  
ղեցաւ: Գպրօցական հանդէսին Յակոբի ծնողքը ամօ-  
թապարտ մեկնեցան՝ երբ Տնօրէնը բեմէն յայտարա-  
րեց թէ Յակոբ ծոյլ եղած է ու իր կարգին վրայ պի-  
տի մնայ:

ԲԱՌԵՐ.— Ա. Եստ՝ բիժ, աշտ: Ա. Եհամարեիկ՝ ուրիշին կարե-  
ւորութիւն չտալ: Հանդիսական՝ հանդէսի մը ներկայ եղող: Մը-  
ց. Գնակ՝ յաղթանակ, պարգև:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ.— Գպրօցական տղայ մը պէտք է որ ամէն  
օր աշխատի իր գասերուն, որպէսզի Սուրէնին պէս յաջողի եւ  
ուրախութիւն պատճառէ իր ծնողքին եւ ոչ թէ Յակոբին պէս ծոյլ  
եւ սնափառ ըլլայ ու տարւոյն վերջն ալ խայտառակուի ամէնքին  
առջև:

### 94. Ե Ղ Ա Ն Ա Կ Ն Ե Ր Ը

Տարին չորս եղանակ ունի, Գարուն, Ամառ, Աշուն ու Չմեռ:

Աշունը կ'սկսի Սեպտեմբերին, երբ եղանակը այլ ևս ցուրտ է ու անձրևս կը տեղայ: Աշնան՝ զգրոցները կը վերաբացուին: Գալլրոյ թռչունները կը խմբուին ու կը պատրաստուին տաք երկիրներ մեկնելու: Օրերը կը կարճանան: Աշխատասէր հողագործը հունձքը կը հաւաքէ: Աշունը աստա պտուղի եղանակն է: Մարդիկ՝ իրենց և կենդանիներու համար պաշար կը հաւաքեն: Ամէն մարդ ածապարանքով կ'աշխատի: Փրօջան զգրոցականները իրենց պայտասկներով ու զիրքերով վարժարանը կ'երթան ու նոր հոանդով իրենց գասերուն կը վերսկսին:

Չմեռը ձիւնի և ցուրտի եղանակն է: Օրերը կարճ են ու զիշերները երկար: Կարգ մը երկիրներու մէջ չատ աստա ձիւն կուգայ: Օդը սաստիկ ցուրտ կ'ընէ: Չմեռը աղքատներու ատելի եղանակն է, որովհետեւ անոնք սէւաք կ'ունենան լաւ պաշտպանուած սուռնքու, տաք հագուստի ու վատեյիթի, որոնցմէ չատ անգամ զրկուած կը մնան: Յուրան ու հրամայութիւնը անոնց մեծագոյն թշնամին է: Բայց ձմեռն ալ իր հաճոյքներն ունի, և ձիւնն ալ՝ իր օգուտը. ան՝ բոյսերու հունտերն ու ձիւրերը կը պաշտպանէ սառնամանիքէն ու աստա ջուրի պաշար կը հաւաքէ հողին տակը:

Գարունը եղանակներու ամէնէն հաճելին է: Յուրան ու ձիւնը կ'անհետանան: Մտերը գոյնզգոյն ծաղիկներով կը զարդարուին: Ամէն կողմ կանաչութիւն ու

ու կեանքը կը վերսկսի: Թռչունները կը վերադառնան: Գաշտային աշխատանքը չատ քաղցր ու հաճելի կը դառնայ: Գեղեցկութեան ու երջանկութեան եղանակն է ան: Օրերը երկար են ու արեւը զուարթ:

Ամառը օգերը կը տաքնան, օրերը զարձակ երկար են, արեւը նեղացուցիչ բլլալու աստիճան կը տաքցնէ երկիրը: Հունձքն ու պտուղները կ'սկսին հասուննալ: Աղքատին համար լաւագոյն եղանակը սման է, երբ կրնայ աշխատիլ ու քիչ բանով գոհանալ:

Սակայն մեր երկրագունտի ամէն կողմ կլիման նոյնը չէ և եղանակները նոյն ձևով չեն յաջորդեր իրարու: Երկիրը կլիմայի տեսակէտով երեք գօտիներու բաժնուած է, որոնք են տաք, բարեխառն և սառուցեալ: Տաք գօտին տարւոյն զրեթէ բոլոր եղանակներուն մէջ տաք է: Հոն աստա բոյսեր ու բարձր ծառեր կ'աճին: Սառուցեալ գօտին տարւոյն զրեթէ բոլոր եղանակներուն մէջ ձիւնով ծածկուած է: Այս գօտին մէջ քիչ թիւով մարդիկ կրնան ապրիլ, կենդանիները նոյնպէս քիչ են և բոյսն ու կանաչութիւնը հազուադէպ: Բարեխառն գօտին, ուր մենք կ'ապրինք, ամէնէն լաւ կլիման ունի: Հոն տարւոյն չորս եղանակները՝ կանոնաւորաբար իրարու կը յաջորդեն և կեանքը հաճելի կը զարձակնէ:

**ԲԱՌԵՐ.**— Կողքի՛ տեղէ մը փոխադրուիլ ուրիշ տեղ: **Սառնամանիք՝** սառ, սաստիկ ցուրտ:

**ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.** — Ո՞ր եղանակը ատելի կը սիրէք: — Ինչո՞ւ: — Ի՞նչ պատճառով կարգ մը եղանակներու մէջ օրերը կը կարճանան, օդերը կը տաքնան: — Ինչո՞ւ համար այրեցեալ գօտին մէջ միշտ տաք կ'ընէ:

95. Մ Ա Ն Կ Ի Կ Ը

Մանկիկ մըն էի երբ զպրոց եկայ,  
Գրել ու կարդալ ես հոն սորվեցայ,  
Սորվեցայ նաև թէ մարդ ըլլալու  
Միջոցն է ըլլալ աշխատող, հըլու:

Շատ կը սիրեմ ես զպրոցս ու զիրքերս:  
Ամէն առաւօտ արեւին հետ ես  
Կ'եղնեմ անկողնէս ու զուարթերես,  
Կ'երթամ վարժարան, սորվելու նոր բան:

Սորվեցայ զումար, հաշիւ ու հանում.  
Սորվեցայ սիրել ես զիրն ու ուսում:  
Սորվեցայ սիրել ընկերներս բոլոր,  
Յարդել գաստիարակս, դասերս ամէն՞օր:

Կեցցէ վարժարան, կեցցեն զիրն ու զիրք  
Որ կ'ստեղծեն մեզ փառք, անուն ու զիրք:  
Ես իմ ծնողքիս միշտ երախտագէտ,  
Կ'ուսանիմ սիրով, էջեմ մնար անգէտ:

96. Լ Ա Ի Գ Ա Ղ Ա Փ Ա Ր Ն Ե Ր Ը

(ՄԵՆԱՆՍՈՍՈՒԹԻՒՆ)

Մարդիկ կան որոնք շատ դժբախտ են... հացեր-  
նի՞ն կը պակսի, ջուրերնի՞ն կը պակսի, զրամ չունի՞ն,  
հոգերու տակ բնիճուած են, թէ պանիր ուտել կար-  
ծելով օճառի կտոր մըն են ծամած... ո՛չ... այս ամէն  
անհաճոյ բաներէն զերծ են, և սակայն դժբախտ են,  
խեղճեր՞ը... Պիտի հարցնէք թէ ինչո՞ւ... լա՛ւ, բա-  
ցատրեմ երկու խօսքով... Այդ մարդիկը դժբախտ են  
անո՛ր համար որ չեն կրնար լաւ գաղափար մը յղա-  
նալ... (պահ մը հանդիսականներ դիտելով) Գիտէք  
հարկաւ թէ ի՛նչ է լաւ գաղափար մը... լաւ գաղա-  
փար մը, հաւատացէ՛ք խօսքիս, լաւ գաղափար մըն է,  
այսինքն (խրախանջիւր վանկիր հասիկ հասիկ շեշտելով)  
լաւ-գա-ղա-փար-մը... փառք Աստուծոյ, ես գոնէ չեմ  
ենթարկուած այդ անտանելի դժբախտութեան... կը  
մաղթէի որ զուք ալ ասկէ զերծ մնայիք, և ինձի պէս  
վայելէիք լաւ գաղափարներ յղանալու երջանկութիւ-  
նը... որովհետեւ ազու՞ր բան է լաւ գաղափարներ  
յղանալը... չէ՞ք հաւատար, բացատրեմ ու տեսէք...  
(Ինչ մը շունչ առնելով) Անգամ մը հայրս վարդի պղզ-  
տիկ թուփ մը բերաւ և պարտէզը տնկեց... գիտէք  
անչուշա թէ ինչո՞ւ համար կը տնկեն թուփերը... որ-  
պէս զի մեծնան, անտնկ չէ՞... Յաջորդ օրն էր՝ երբ  
յղացայ տուջին լաւ գաղափարս... Արմինէ՛, ըսի  
քուրիկիս, երթանք տեսնենք թէ վարդի թուփը ինչ-  
պէ՞ս կը մեծնայ... դայինք պարտէզ, թուփը հանն-  
ցինք անկուած տեղէն, արմատները գիտեցինք երկար

առեւն, մէկիկ մէկիկ համբեցինք զանոնք, յետոյ նո-  
րէն թուփը տեղը անկեցինք... և այսպէս օրերով,  
չարաթներով... Յզացած լաւ գաղափարս սա արդիւն-  
քը ունեցաւ որ ամիսներ անցան և զեռ ատաջին վար-  
դի կրկնեն իսկ չէ տուած այդ խեղճ վարդենին, և  
տալիք ալ չունի... Տեսա՞ք թէ ինչ ազուոր բան է  
լաւ գաղափար մը... Աւրիչ անգամ մը քոյրս ըսաւ որ  
իր մեղրամոմէ պէպէքը ազոտտեր է, և ա՛նա գարձեալ  
լաւ գաղափար մը յզացայ... Քուրի՛կ, բսի, հոյ մի՛-  
ըներ. գնա ջուր տարցուր, քիչ մըն ալ օճատ բեր և  
պէպէքդ կը լուանք... Քոյրս վազեց գնաց, ջուրը  
տարցուց, օճատն ալ բերաւ և սկսանք գործի... ջու-  
րը կ'նստար, մեղրամոմէ պէպէքը մէջը նեակեցինք, և  
օճատը ասնելով պատրաստուեցանք լուայու... բայց  
կրր սանին մօտեցանք, սկսանք որ պէպէքը հալեր է  
և միայն հազուսաները մնացեր են... խեղճ քուրի-  
կրս... տակաւին մինչև. հիմա չէ միտիմարտած ու  
կուլայ... (Էիջ մը շուկն առնելի վերջ) Բայց ևս շա՛տ  
աւելի լաւ գաղափար մը յզացած եմ... անցած Զատ-  
կին էր, հայրիկս զոյգ մը ձերմակ ձեռնոց տաւ ին-  
ծի... աւելորդ է բսել թէ կրկու օրէն ձեռնոցներս  
ազոտտեցան... և թէ զուք ըլլայիք՝ թերեւս անձըր-  
կէիք... բայց ևս, փառք Աստուծոյ, չանճրկեցայ,  
անմիջապէս լաւ գաղափար մը յզացայ... գիտե՞ք ի՛նչ...  
մտածեցի որ սև ձեռնոցը աւելի վաշելու է, և իմ  
ձերմակ ձեռնոցներս ներկեցի... մեղանով... Ի՛նչ բ-  
նեմ, ուրիշ միջոց չունի... Կիրակի օր մըն էր, տար,  
չատ տար օր մը, սև ձեռնոցներս գրի և զուքս կրայ...  
և թէ ձեզի բսեմ որ արեւ կար՝ անչուչա պիտի հեռու-  
ցընէք թէ ձեռքերս քրանեցան... իսկ քրանելէն վեր-  
ջը... ասիկա իրիկունը յայտնի կզաւ՝ կրր տուն գար-

ձայ ու ձեռնոցներս հանեցի... ձեռքերս բնաւ տարբե-  
րութիւն չունէին խափշիկի մը ձեռքերէն... քոյրս  
վախցաւ, մայրիկս շփոթեցաւ, իսկ հայրիկս... և թէ չի  
խպնէի՝ պիտի բսէի ձեզի որ փառաս որ ձեռ մը քաշեց  
ինծի... (ժպտելով) Հիմայ որ հասկցար թէ ի՛նչ է լաւ  
գաղափար մը, գացէք լաւ գաղափարներ յզացէք...  
և թէ կրրիք սիրտ ունիք... :

### 97. Հ Ա Ր Յ Ո Ւ Մ Ն Ե Ր

Անկողինէդ ելած աստուն,  
Կէս մըտածկոտ և կէս ժպտուն,  
Շապիկ մ'հազած թոյլ մերկ սաքով,  
Չեռքդ երեսից, սեղանին քով,

Անայի՛ս,

Ըսէ՛ ինձ, ո՛ւր կը նայիս:

Երազից մէջ գուն, այս գիշեր,  
Տա՛նձ մը կերար, համն անո՛ւջ էր,  
Եւ կ'ուզես որ ճիշդ անոր պէս՝  
Քեզի հա՛տ մ'ալ տան որ լափես,

Անայիս,

Որ ծառերուն կը նայիս:

Սրգեօք զըտարթ ու լուսածիր  
Հրեչատակներ՝ հեռ պարեցիր,  
Եւ անհամբեր ևս որ, նորէն,  
Անոնք քեզի վեր հրաւիրեն,

Անայիս,

Որ երկինքին կը նայիս:

Դրախտին մէջ ջինջ ու սոկեսար,  
Ազաւնինե՞ր արդեօք տեսար,  
Եւ քնացա՞ր, ըսէ՛ շիտակ,  
Անոնց ձերմակ թուերուն տակ,

Անայի՛ս,

Որ բոյներուն կը նայիս:

Ջուրերուն մէջ եղեմին զով,  
Լուացուեցա՞ր հազար նազով,  
Եւ այն հաճո՞յքն է հեշտողին  
Ջոր վայելիլ կ'ուզես կրկին.

Անայի՛ս,

Որ լըճակին կը նայիս:

Ունէի՞ր հոն դուն ալ թուեր,  
Որ թուէի՞ր լեռներն ի վեր,  
Ծագիկներուն շորջն ու վըրան,  
Միշտ ուտելով լիարերան,

Անայի՛ս,

Որ վարդերուն կը նայիս:

Մտքիդ մէջ, վի՛հ ու մանկական,  
Ա՛հ, ի՛նչ խոհեր, սրտակերներ կան,  
Որ աչքդ անթարթ ու սոււտուն,  
Կը յամառի դիտել հեռուն...

Անայի՛ս,

Ըսէ՛ ինձ, ո՞ւր կը նայիս:

\* \* \*

—Սա գիմացի սրտին վըրան  
Երկու կատու կը մըրմըռան...  
Մէկը ուռած պոչն է արնկեր...  
Միւսն անոր ցոյց կուտայ ձանկեր...  
ԱՂԵՔՍ. ՓԱՆՈՍԵԱՆ

Ն Ի Ի Թ Ե Ր Ո Ւ Ց Ա Ն Կ Ը

	Էջ
Յատաջարան . . . . .	3
1. Մայրիկս և հայրիկս . . . . .	5
2. Համբայցներս (*) (Է. ՔԼՕՏԻՆՕ) . . . . .	7
3. Բարի հայրը . . . . .	8
4. Բարի հայրը (Շար. և վերջ) . . . . .	9
5. ձրագն ու լսպսերը (Լ. ՊԱՅԵԻ). . . . .	10
6. Մեծ հայրիկը . . . . .	11
7. Սիրածներս (Լ. ԴՐՕԴԵՆԵՐ) . . . . .	13
8. Ջարուհի . . . . .	14
9. Մեծ մանչ մրն եմ (Յ. ՔՕՄՕՆ) . . . . .	16
10. Երկու մշակներ . . . . .	17
11. Երկու մշակներ (Շար. և վերջ). . . . .	18
12. Պարեզ (Ս. ՓԱՆՈՍԵԱՆ) . . . . .	20
13. Երկու եզրայրները . . . . .	22
14. Երկու եզրայրները (Շար. և վերջ) . . . . .	24
15. Հրեւսակը . . . . .	26
16. Անձնու իրու թիւն (ՌՌԻՍՕ) . . . . .	28
17. Վեհանձնու թիւն . . . . .	30
18. Հերմիներ (Ա.ՓԱՍԻԱՆ) . . . . .	31
19. Սպասուհին . . . . .	32

(\*) Այս գրով նշանակուած հատուածները ոտանաւոր են:

46.	Չարին սրտիծր . . . . .	79
47.	Չարին սրտիծր (Շար. և վերջ) . . . . .	82
48.	Չկնորան ու սրտորդը . . . . .	84
49.	Մանիբալը (Ք. Ֆ. ՎՍՅՍ) . . . . .	86
50.	Խաղաղիքները . . . . .	87
51.	Եզ ու Չի (ՎՍՐԴԱՆ ՍՌԱԿԱԳԻԻԸ) . . . . .	89
52.	Բարկասիրտ սղան . . . . .	90
53.	Վաղուհի (Յ.) . . . . .	92
54.	Տղոց առները (ՔՍՍԻՄ) . . . . .	93
55.	Երե պարիկ ըլլայի ես (ՍԻՊԻԸ) . . . . .	96
56.	Մեծ ժամացոյցը . . . . .	97
57.	Գեղամի մահը . . . . .	99
58.	Խակ սրտու զները . . . . .	101
59.	Հեաաքրքիր սղան . . . . .	103
60.	Հեաաքրքիր սղան (Շար. և վերջ) . . . . .	104
61.	Ազուսը (ՎԱՀԱՆ ՎՐԴ.) . . . . .	106
62.	Ազուէան ու աքլորը . . . . .	108
63.	Գեղձին կուտը . . . . .	111
64.	Ճնճզուկները . . . . .	113
65.	Ծիծեռնակները . . . . .	114
66.	Եեի Եզեր . . . . .	117
67.	Սարսիւնին . . . . .	118
68.	Գայլը և չունը . . . . .	119
69.	Կայ ձերունին . . . . .	121
70.	Պտտախաւսը . . . . .	123
71.	Փոքրիկ Հոլանտային . . . . .	125

20.	Անմաքուր աղջիկը . . . . .	34
21.	Կեցցե՛ շուրք . . . . .	36
22.	Բժիշկին խրատները . . . . .	37
23.	Բժիշկին խրատները (Շար.) . . . . .	39
24.	Բժիշկին խրատները (Շար. և վերջ) . . . . .	41
25.	Կարո՛ցիկ Եզը (Յ. Ե.) . . . . .	43
26.	Յարզը և ուտի ճիւղերը . . . . .	45
27.	Յարզը և ուտի ճիւղերը (Շար. և վերջ) . . . . .	47
28.	Կապիկն ու ընկոյզը (ՅԼՈՐԻԱՆ) . . . . .	48
29.	Գործարարին Եզը . . . . .	50
30.	Սարգն ու շերամը (ԼԸ ՊԱՅԵԻ) . . . . .	52
31.	Ոսկի մասնոցը . . . . .	53
32.	Ոսկի մասնոցը (Շար. և վերջ) . . . . .	55
33.	Ասախօս հովիւր (ՍԻՊԻԸ) . . . . .	56
34.	Կազամախին . . . . .	58
35.	Խաղաղին սղոյցը . . . . .	60
36.	Հինգ զրուհոցը . . . . .	62
37.	Նարինջները . . . . .	64
38.	Պասիժը . . . . .	66
39.	Մեքենային անխը . . . . .	68
40.	Նոյլը . . . . .	69
41.	Վարդենին . . . . .	71
42.	Բարի Սամարային . . . . .	72
43.	Անուշիկ խնձոր . . . . .	73
44.	Ազաաարաք չունը . . . . .	75
45.	Գառնուկը (ՍԻՊԻԸ) . . . . .	78

1911  
 ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
 ԵՐԱՅԱՆ

	Էջ
72. Ձին . . . . .	127
73. Իշխանն ու դատաւորը . . . . .	129
74. Անձնուէր աղջիկը . . . . .	132
75. Գիշերաչրջիկը . . . . .	136
76. Ո՞վ էր Շուէտի Կիւսթաւ Ա. թագաւորը . . . . .	138
77. Ճշմարտախօս տղան . . . . .	143
78. Ձար Իվանն ու գիւղացին . . . . .	145
79. Եւ կ'ուզեմ ըլլալ . . . . .	151
80. Կիւրոս . . . . .	152
81. Նորայր . . . . .	159
82. Կովարած աղեկն ու գուրար . . . . .	161
83. Կապիկը . . . . .	163
84. Կենդանագիրը . . . . .	166
85. Մանկլաւիկը . . . . .	167
86. Խճաքարերը . . . . .	168
87. Հացը . . . . .	170
88. Հրաշալի տուփը . . . . .	172
89. Երկու եղբայրներ . . . . .	174
90. Մուկը . . . . .	176
91. Գեղեցիկ կաղնին . . . . .	177
92. Հին վերարկուն . . . . .	179
93. Երկու գպրոցական ընկերները . . . . .	180
94. Եղանակները . . . . .	182
95. Մանկիկը . . . . .	184
96. Լաւ գաղափարները (Սենտիստորիսն) . . . . .	185
97. Հարցումներ . . . . .	187

ՍՈՒՐԵ ՆՆՐՄԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ  
ԳՐԱԳԱՐԱՆ  
ST. NERSES SHNORHALI  
LIBRARY

**Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն**  
**Ս. ՅԱԿՈԲԵԱՆ (ՆԱԽԿԻՆ ՊԱԼԵՆՑ) ԳՐԱՏԱՆ**

---

	<i>Ղրջ.</i>
<b>Յ. ԳԱԶԱՆՃԵԱՆ</b>	
Նոր քերականութ. արդի հայ լեզ. պոեզ.	25
— — — — — Միջին	60
— — — — — Բարձրգ.	100
Ծիածան Ս. գիրք	25
— Բ. գիրք	30
— Գ. գիրք	50
<b>Ա. ԱՆՏՈՆԵԱՆ</b>	
Գանձարան Տարրական պատկզ. ճոխացած	40
— Միջին —	60
— Բարձրագոյն —	150
<b>Գ. ԳԱՎԱՅԵԱՆ</b>	
Տարր. Թուարանութիւն, Ա. Բ. տարի, Ը. տպգր.	35
Միջին ընթացք Թուարանութեան, Ատրունի, Ը. տպգր.	75
Բարձրագոյն ընթացք 1926, Գալաֆեան, 150 և	225
<b>Կ. ԲԱՍՄԱՋԵԱՆ</b>	
Նոր գասագիրք Հայոց Պատմ. պատկ. Տարր.	25
— — — — — Միջին	40
Դպրոցական բեմ Օր. Ն. ձեզվէճեան	30
Մ. ՆՈՒՊԱՐԵԱՆ Բառարան գրպանի Ֆրանս. — Հայ	200
ԼՈՒՍԻՆԵԱՆ-ԲԱՍՄԱՋԵԱՆ Բառարան Հայ-Ֆրանս.	250